ՕՐԱԳԻՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Այսուհետև ոչինչ Եգիպտոսեան խորամանկ քուրմեր, որ կամէին լինել գիտութեան միայնակ պահապանքը. այսուհետև ոչինչ Չինէական պարիսպ, որ պիտոյ է փակէր լուսաւոր գաղափարների մուտքը ազգերի մէջ: Այսուհետև լոյս և ճշմարտութիւն և ազատութիւն խաւարի բաբելոնեան գերութենից:

Մ. Նալբանդեանց:

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԳՆԱՑԻ.

ՅՈՒԼԻՍ 1858 ԹՈՒԱԿԱՆԻ.

ԱՄՍԱՏԵՏՐԱԿ 7.

ՄՈՍԿՎԱ

Imprimerie d'Ernest Barfknecht.

1858.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ·

Գաբրիէլ · ա· ——— [illegible]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՂՋԻԿ·

Ա·

Մի գեղեցիկ աղջիկ տեսայ Հայաստան,
Որ միայնակ մօտ էր գալիս գիշերը·
Սիրտը տրտում, աչքերը թաց ցօղանման,
Անմխիթար ծոցն էր դրած ձեռքերը։

«Ի՞նչ ես լալիս, ով նազելի դու աղջիկ·
Ինչո՞ւ օրդ․ անց ես կացնում ողբալով,
Պայծառ աչքդ, կերպարանքդ գեղեցիկ
Աւերումես, ամենայն օր սգալով։»

— «Ես գնացի վիճակի օր Հարսի տուն,
Ժողովեցան անդ Հարսնացու աղջիկներ,
Սափոր դրին վիճակի համար նորաղոյն·
Վարդաջրով լցին դրեցին ծաղիկներ·
Ոմանք գանակ ձգեցին մէջ կամ մատնոց,
Ոմանք ասեղ կամ բանալի արծաթի,
Ես չունէի ուրիշ մէկ իր նշանոց,
Սափորի մէջ դրեցի ոսկի մատանի.

կարմիր-կանաչ քօղերով այն ծածկեցին,
Վարդ ու ռեհան մեխակ ծաղկով յօրինած.
Տան մի անկիւն պատերի տակ դրեցին,
Նստան սեղան, կերակուրն էր պատրաստած։

«Ուրախ սրտով կերանք խորված գառան միս
Եւ Թարմ ձուկը կանաչներով համեմած.
Մեղրաջրով զովացուցինք ծարաւնիս,
Սառնատանը առաւօտեան պաղեցրած։

«Ծիծաղելով կուշտ փոր ելանք սեղանից,
Ըսկսեցինք պար բոլորել խաղալով,
Մինչեւ Նոր-հարսն առաւ սափորն անկիւնից,
Դրեց տան մէջ քաղցր ձայնով երգելով։

«Տակը փռած էր նկարէն սփռոցը
Եւ շարած էր չորս կողմերը բարձերով.
Մի կոյս աղջիկ նստեցուցին մէջ տեղը
Ու ծածկեցին գլուխը գոյն գոյն քօղերով.

«Աղջիկները նստան բարձերի վերայ,
Պատրաստվեցան վիճակ հանել երգելով,
Ըսկսանել միմեանց էին աչք անում,
Բայց վերջապէս ձայն հանեցին նայելով։

«Քանի վիճակ, քանի նշան հանեցին,
Որը ուրախ, որը տրտում տաղերով.
Ծիծաղ, խնդումն էր գալիս մէջերը,
Վիճակները հանումէին ձայներով։

«Երգողները յանկարծ մի տուն երգեցին,
Որի իմաստը այս էր ինչպէս միտքս է.
«Քո փեսացուն քաջ է սպիտակ է իւր ձին,
«Մետաքսից է նորա սանձը այլեւ պայտը ոսկի է.
«Կոճակները են հաղուագիւտ մարգարիտ,
«Ինքը չքնաղ, տեսքով նման արեւին։»
—Հանի՛ր, աղջիկ, ձեռքդ սափորի միջից.
Հանեց,—ձեռքումն էր իմ ոսկի մատանին։ —

«Ամեն կողմից ծափը ու ծիծաղ Թափվեցան,
Ասին—գտանք այս աղջկայ փեսացուն.
Ոսկի պայտով ձիու վերայ խօսեցան,
Դարձանք մեր տուն, երբ որ եղաւ իրիկուն.

«Ուրախ ուրախ այն գիշերը պառկեցայ,
Զուարթ սրտով, քաղցր քնով ննջեցի.
Լուսադէմին իմ փեսացուս ես տեսայ,
Երկու ձեռքով գրկեցի ու պագեցի։

«Փեսացուիս հասակըն էր բարձրագոյն,
Ինչպէս նոճին միւս ծառերի միջին է.
Կարմիր ճերմակ էր երեսի նորա գոյն,
Ծաղկանց միջին ինչպէս բացուած վարդն է։

«Իմ փեսացուն նստած էր ձի սպիտակ.
Պայտն էր ոսկի, սանձն մետաքս ոլորած,
Մարգարիտ էր ոսկիապատ իւր կոճակ,
Շրջապատը լուսակներով զարդարած։ —

«Ասաց.— «աղջիկ, մի՛ որոնիր այլ փեսայ
Ես քո վիճակն եմ պատրաստված ի վերուստ,
Ինձ սպասիր, ես շուտ կը գամ, տես ահա,
Չը լինի թէ սիրտդ մատնես ի կորուստ։»

«Ես զարթեցայ. կարծումէի իմ փեսան
Կուրծքիս վերայ սիրով վառված գրկիս կայ,
Բաղուկներս տարածված էր առ քաջն այն,
Աչքս բացի — տեսայ որ մօտս մարդ չը կայ.
Բայց ականջիս միշտ լսվումէր այն ձայնը,
Որ ինձ ասաց — «մի՛ որոնիր այլ փեսայ։»

«Այն իմ փեսի գալուն է իմ նայածը,
Աչքս արտասուք, սիրտս տրտում կ՚երերայ.
Ձեռքս ծոցում մին եմ գալիս գիշերը,
Իմ հառաչանքս միշտ յանձնումեմ հովերին.
Անմխիթար անցանումէ ցերեկը,
Անհանգիստ եմ երբ որ քնել ես կամիմ։»

* *
*

Բ.

Նարեկենդան չորեքշաբթի երեկոյ,
Կար աղջիկը նստած կրակի առջեւ.
Ձեռքը ծոցին թշուառութեան իւր միջում
Տրտում, տխուր, նորոգումէր ցաւերը։

«Այս ինչ դժբաղդ աղջիկ եմ ես—ասէր նա,
Որ ոչ արժան գտանվեցայ իմ փեսիս
Մինչև այսօր քանի ամի՞ս նայեցայ,
Սպասելով ինչ որ տեսայ երազիս։

«Քանի՛ աղջիկներ կարգվեցան իմ դիմաց,
Քանի՛ հարսնիք կատարվեցան այս տարի.
Աղքատկանաց, բարեկամաց, օտարաց,
Ես չորնալու ծառի նման մնացի։

Ահա կը գայ երկայն երկայն մեծ պահքը,
Նորանից յետոյ յիսունօրեայ կան տօներ,
Ո՞ւմ է գրուած հասնել աղջի պսակը,
Մինչև այն օր լինելու են ինչ բաներ։

Իմ փեսացուն ասաց «սպասիր իմ գալուն,
Մի՛ որոնիր դու քո համար այլ փեսայ.»
Սպասեցի, վերջը չը կայ սպասելուն,
Ես իմ քաջի նման ոչ ոք չը տեսայ։

Ա՜խ. արդեօք դու պիտի մի օր իմ մօտ գաս,
Պիտի մի օր միւսանգամ ինձ երևի՞ս
Կամ քո ձայնդ իմ ականջիս լսել տաս.
Արդեօք գրկումս պիտի մի օր փաթաթվի՞ս։—

Յանկարծ տեսնես—որ դուրսից մի ձայն եկաւ,
Մի մարդ ձիով սոյա դրանը կանգնեցաւ.
Առաջ շունը սկսեց հաչել դրսումը,
Յետոյ լսվեց քայլերու ձայն ներսումը։

Կրակի լոյսը աղօտանալ ըսկսեց,
Կրակի միջից կայծն ու պէծը ձայթոտեց.
Խեղճ աղջիկը չէր կարող շունչ քաշելու
Եւ չէր կարող դէպ ի յետև նայելու։

Այլ ի՞նչ տեսնես—իւր փեսացուն խնդալով
Յառաջ եկաւ կանգնեց դիմաց ասելով.
«Իմ սիրական—իմ աչքի լոյս հարսնացու,
Ես եկել եմ մեր հարսնիքը անելու։

«Իմ պայմանով թէպէտ փոքր ինչ ուշացայ,
Բայց մեծ պահքը անցուցանել չկամեցայ.
Երկայն պահքին, երկայն յիսնից օրերուն,
Ո՞վ է կարող համբերելու անցնելուն։

«Հայրդ մայրդ պիտի այժմ իմանան,
Քո հարսնութեան, մեր հարսանեաց դէմ կենան.
Նոքա չգիտեն, որ մեր սիրտը վառված է,
Ոչ թէ օժիտ, այլ հարսանեաց սէր կ'ուզէ։

«Բայց նոքա այդ չեն հասկանում բնաւին,
Պիտի ձգեն մինչև աշնի պսակին.
Պիտի մնանք մեք իրեարից հեռացած,
Պիտի թափենք դառն արտասուք մեր աչաց։

«Երբ երթանք առանց ծնողաց գիտութեան,
Առնունք պսակ եկեղեցու օրհնութեան.
Դառնանք յետոյ և պատմենք քո ծնողաց,
Թէ — մեք առինք սուրբ պսակը հարսանեաց։

«Թող ծնողքդ յետոյ առնեն հարսանիք,
Բարեկամաց, ազգականաց մի ընթրիք.
Ուտեն խմեն ուրախանան ցնծութեամբ,
Մեր պսակը թող զարդարեն օրհնութեամբ։»

Աղջիկը լուռ կանգնած էր դէմ փեսային,
Անթարթ աչքով նայէր նորա երեսին.
Փեսի խօսքը տարել էր իւր հանճարը,
Չը գիտէր թէ ի՞նչ թող անէ անճարը։

Մտածելու չէր մնացել ժամանակ,
Միտքը չէր գալիս ոչ մի հնար եղանակ.
«Ա՜խ, ինչ անեմ» — ասաց մնջիկ ինքն իւրեան,
Ձեռքը ձգեց, բռնեց փեսի աջ ձեռքից։

«Այս ի՞նչ սառն է քո ձեռքերդ, սիրական,
Երևի թէ դուրսը ցուրտ է բաւական.»
— «Դրսի ցուրտը չէ ինչ — ասաց փեսացուն,
Հոգուս ներսը բոց ու կրակ է հուր անհուն։» —

Աղջիկն առաւ ծածուկ գլխի փաթոյթը,
Զմեռնային վերարկուն և ծածկոյթը
Ելաւ տունից փեսի ձեռքից պինդ բռնած,
Չիմացաւ թէ ձիու մօտը ե՞րբ գնաց։

Ձին փորումէր իւր ոտքերով գետինը,
Դուրս էր գալիս գետնից փոշին և ձիւնը.
Նստաւ փեսան ձիու վերայ թռչելով,
Հարսին նստեցուց իւր առջևը գրկելով.

Զարկեց ձիուն մի մտրակով, ձին վազեց.
Հարսը շունչը իւր սրտի մէջ արգելեց։

Ձիու ոտքերը չէին դիպչում գետնին,
Օդի վերայ թռած գնում էր սպիտակ ձին.
Հարսը յանկարծ բացեց աչքը նայեցաւ,
Նորա ոտքի տակ տուներ, ջրեր երևեցաւ։

Անցնումէին սար ու ձորը վայրկեանում,
Շատ քաղաքներ իւրեանց քամակին թողնում.
Հարսը ասաց — «այժմ մեք ո՞ւր պիտ՚ երթանք,
Ինչո՞ւ այսպէս մեր տուներից հեռացանք։»

Փեսան հարսին քաղցր տուեց պատասխան,
«Ահա վանքը զարդարված կայ յանդիման։»
Աղջիկն ասաց — «այս մեր վանքին նման է,
Այս տեղ քահանայ կա՞յ որ մեզ պսակէ։»
Փեսան ասաց — «ամենայն ինչ պատրաստ է,
Թէ քահանայ, թէ վարդապետ, անդ լիքն է։» —

Հասան այն տեղ, ձիուց իջան ներս մտան,
Տեսան վանքը լուսաւորված հիացան.
Հազար տարվայ մեռած թաղված կարգաւորք,
Զգեստաւորված եղել էին հարսնևորք։

Ժողովրդոց արանց կանանց դասերը,
Լցվել էին փթած նեխված դիերը.
Որը ձիով, որը ոտքով եկել են,
Վանքի միջում խառն կարգաւ կանգնել են։

Առաջ տարին հարսն ու փեսին դէպ սեղան,
Ձեռքերն տուին մի մի կերոն պատուական.
Քաղցր ձայնով «Նայեա՛ց ՚ի մեզ» — երգեցին,
Յետևներից վանքի դուռը փակեցին։

Մի վարդապետ յառաջ եկաւ խնդալով,
Հարսի ձեռքից մեղմիկ բռնեց ասելով.
«Առեալ զձեռն . . .» — տուեց փեսի աջ ձեռքը,
Անցուց վիզը կանաչ-կարմիր նարօտը։

Ապա կանգնեց սկիզբն արաւ քարոզի,
Իբրու թէ այն է ճիշդ կանոն պսակի.
Եւ ճառի մէջ երկայն երկայն փաստերով,
Կամէր հարսի սիրտը փոխել խօսքերով։

«Քեզ ափսոս է, որ դու մնաս Հայաստան,
Քո պատիւը անդ ովքե՞ր կան որ ճանչնան.
Դու քո համար այս տեղ շինիր փոքրիկ տուն,
Քո փեսի հետ այս տեղ կացիր հաստատուն։

«Ամենայն օր մեր հետ սեղան կը նստիս,
Մեր երգերով, մեր տաղերով կը զմայլիս.
Վանքի ջուրը, վանքի պարտէզն ու այգին,
Քեզ բաւական զբօսարան է անգին։

«Այս քո փեսայն այս տեղացի կտրիճ չէ,
Շատ հեռաւոր աշխարհներից եկել է.
Տես իւր հագին, մարգարիտ է կոճակը
Եւ միտքդ բեր քեզ դուրս եկած վիճակը.

«Քո փեսացուն քեզ կը սիրէ մեծ սիրով,
Սիրտն ու հոգին այրվել են քո կարօտով.
Երբ քեզ տեսաւ — մոռցաւ բոլոր աշխարհը,
Քեզ նուիրեց բոլոր լցուած իւր սիրտը։

«Քո փեսացուն Հայոց ազգի պարծանքն է,
Հայկի թոռն է և Արայի նախնին է.
Հայաստանի փառք ու պատիւն համբաւով
Բոլոր աշխարհ տարածվել է սորանով։

«Սա գլխահար եղաւ անթիւ թշնամեաց,
Հայաստանը սորա ձեռքով է ազատված.
Ասորեստան և Բաբելոն միասին,
Սորա փառքից նախանձելով կը սարսին։

«Սա Նիւքարին կռուի մէջ յաղթելով,
Բոլոր զօրքը սուրի բերան ջարդելով.
Գերի տարաւ իւր Արմաւիր քաղաքը,
Կախեց վերից ցից զարկելով ճակատը։

«Բաբելացի Բարշամին սա սպանեց,
Նորա գանձը առաւ, զօրքը կոտորեց.
Քաղդէացոց աշխարհի մէջ յիշատակ
Իւր անունը թողեց գնաց համարձակ։

«Սա Պայաբիս աւազակին որ տեսաւ,
Իւր զօրքովը նորա հետը կռուեցաւ.
Ցամաքի մէջ կենալու տեղ չտուեց,
Խոր ծովերի կղզիները հալածեց։

«Իմացի՛ր դու թէ ով է քո փեսացուն,
Կամի՞ս սորա հարսն լինել հաստատուն.
Ասա՛ բերնով, — թէ ես քո՛ն եմ յաւիտեան
Եւ դու իմ ես անժամանակ, անվախճան։» —

Հարսը ասաց սրտի միջում դողալով,
«Ես միշտ քո՛ն եմ, քո՛ն յաւիտեան սիրելով։»
Փեսան ասաց — «դու իմն ես յաւիտեան,
Յաւիտեանն է անժամանակ, անվախճան։» —

Իսկոյն վանքը իւր հիմունքից շարժվեցաւ,
Կաթողիկէն գլորվելով քանդվեցաւ.
Պատերը և պատուհանները քանդվեցան,
Առաստաղքը գետնի վերայ փռվեցան։

Զգեստաւորված կարգաւորքը լռեցին,
Խոր գերեզմանք նորանց յանկարծ ծածկեցին.
Ուր որ յառաջ լոյս էր պայծառ տարածված,
Այն տեղ այժմ խոր խաւար մութն է պատած։

Այն ձիաւոր, այն հետևակ մարդիկը,
Որ վանքի մէջ բռնել էին դասերը.
Այժմ եղան հին հին մեռած դիակներ,
Ամենեցուն պատանատեղը կ՚երևէր։

Ո՞ւր գնացին այնքան հազար արք կանայք,
Ո՞ւր ծածկվեցան և օրիորդք և տիկնայք.
Ամենեքեան մութ հողի գիրկը գնացին,
Կենդանութեան չէր լսվում շունչ բնաւին։

Այսքան անհուն գերեզմանաց մէջ տեղը,
Կայր միայնակ սև փայտաշէն դագաղը.
Նորա առաջ հարսն ու փեսայ կանգնած են,
Ոչ ոք գիտէ — կենդա՞ն են թէ մեռած են։

Հարսի ձեռքից բռնած է ձեռք փեսային,
Բայց զգումէ հարսն, որ փեսի ձեռքը չէ մարմին.
Ցամաք ոսկր է, չունի կաշի փափկութեան,
Ո՛չ շունչ ունի, ոչ լոյս աչաց, ոչ կենդան։

Փեսայն շարժեց ձեռքն ու ոտքը, գլուխը,
Շըխռտալով ձայն հանեց չոր ոսկորը. —
Հարսը՛ նայեց իւր փեսայի երեսին,
Տեսաւ — մերկ է, չունի կաշի կամ մարմին։

Աչքը դատարկ, փոս էր մէջը լոյս չը կար,
Ատամները առանց լնտերք, տեսանողն կը սոսկար·
Ներքին ծնօտքը բաժանված էր իրեարից,
Վիզն ու կոկորդը հեռի էին միմեանցից։

Մի ձայն եկաւ գետնի տակի անդունդից,
Գերեզմանքը վարհուրեցան այն ձայնից.
Ձայնն ասումէր — «ահա՜ հասաւ կէս գիշեր,
Հարսն ու փեսայ — դուք ինչո՞ւ դեռ չէք պառկեր։»

Փեսայն քաշեց հարսի ձեռքից և ասաց·
— «Ահա բա՜ց է առագաստը քո դիմաց·
Մտի՛ր իմ հետ այս սև ու մութ դագաղը,
Իմ հետ պառկի՛ր, մտիր խաւար խոր հողը։

«Գիտեմ, որ դու ինձ սիրեցիր հարսի պէս,
Ինձ կամեցար քեզնից անուն տալ պէսպէս·
Իմաստութիւն և գիտութիւն լուսաւոր,
Համբաւ բարի, ազգի պարծանք փառաւոր.
Այլ չիմացար թէ ես պատկեր եմ ազգի,
Որ իմ անուամբ քաջայայտ է աշխարհի·
Իմաստութեան և գիտութեան չէ խնդրող,
Ո՛չ համբաւի, ազգի բարեաց ցանկացող։

«Ես կը սիրեմ քեզ ինչպէս դու ինձ սիրես,
Շատ սիրելով խնդամ, որ դու իմըս ես,
Բայց չեմ կարող քեզ պարգևել այլ տեղի
Բաց ի մթին խոր ու գիշին տապանի։

«Դու խոստացար իմս լինել յաւիտեան,
Ես քեզ առի անժամանակ, անվախճան·
Պառկի՛ր իմ հետ, թո՛ղ կորչի քո մանկութիւն,
Թո՛ղ քեզ ծածկէ անմխիթար տրտմութիւն։

«Դու մոռացիր քո հարսնութեան այս օրը,
Քեզ պիտ՚ ծածկեն մահու սև սև քօղերը·
Թո՛ղ լսվի այս ամեն աշխարհ, ամեն տեղ,
Թէ մեք մտանք այս գերեզման միատեղ։

«Թո՛ղ Հայկ կնճռէ իւր ճակատը թախծանօք,
Թո՛ղ որ Արայ չը նայի մեզ պանծանօք·
Թո՛ղ իմացվի, որ ես տեղի գիտութեան
Միայն կը տամ խոր ու խաւար գերեզման։

«Խօ՛ղ որ ասեն թէ գիտութիւն հարսնացաւ,
Քաջ փեսայի սիրով վառեալ գիրկն ընկաւ.
Բայց փոխանակ ուրախութեան հարսանեաց,
Փեսայն հարսին մահու պատանք պարգեւեաց։

«Դի՛ր գլուխդ չոր ոսկերաց իմ վերայ,
Թո՛ղ կատարիչ ծածկէ մեզ թող մթանայ.
Դու չես մնուկ, իմ հետ եղար դու ղառամ,
Տես, ի՛նչ պարգեւ շնորհեց քեզ քո Արամ։»

Բէոփէն։

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ։

—

Օրինակի համար վեր առնունք մի բոյսի սերմ և ճեղքենք, ինչ կը տեսանենք նորա մէջ. ո՛չինչ, գրեթէ ո՛չինչ, որովհետև մեր տեսածը կը լինի մի ամենափոքր և աննշան գիծ։ Առաջին անգամից, ի հարկէ այս սերմը մեր համար խորհուրդ ունենալու չէ, բայց եթէ ուշադրութեամբ մտածենք, կը լուսափայլի մեր առաջև այն խորհուրդը, թէ այս սերմի մէջ պարունակվում է ապագայ ծառը իւր արմատներով, բողբոջներով և պտուղներով։ Այս սերմը տնկելով երկրի մէջ, տալու է կամ անուշահոտ ծաղիկ, կամ մի փշոտ բոյս, կամ պտղաբեր ծառ և կամ թունաւոր բանջար։

Ահա այսպէս են մանուկները և նոցա վերայ արած ազդեցութիւնները։ Յայտնի բան է, ինչ որ կը սերմանես, այն ես կը բուսանի. ուրեմն հարկաւոր է աշխատել, որ նոր, անարատ և պտղաբեր հողի վերայ չընկնին որոմներ (անպիտան սերմեր)։

Պէտք չէ մտածել, թէ վնասակարը յետոյ ես կարելի կը լինի արմատախիլ անել. ո՛չ, ամենևին ո՛չ։ Յետոյ զուր կը լինին այն բոլոր աշխատութիւնքը, հնարները որ պիտի գործ դրվին ինչպէս երկիրը բրելու, նոյնպէս արմատները փշրելու կամ բնաջինջ անելու համար։ Նոր սերմանացանութեան ժամանակը, կարող եմ ասել, կ՚անցանէ անդառնալի։

Շատ անգամ պատահում է տեսնել որ, ախսոս, փափկասիրտ մայրեր իւրեանց մանուկների հետ խաղում են և զուարճանում, ինչպէս երեխան խաղում է իւր խաղալիքի հետ։ Նորահաս և անմեղ երեխայի մէջ նկատելով փառասիրութեան, անձնասիրութեան կամ ուրիշ ախտերի նշանը կամ ծիլը, ուրախանում են նոքա և ծիծաղում են առ ի սրտէ։ Երեխայի մէջ, օրինակ, փառասիրութիւնը յիրաւի շատ ախորժելի է սկզբումը, խորամանկութիւնը ի հարկէ նոյնպէս։ Եթէ մարդս կամենում է շարժել երեխայի կիրքերը, հարկաւոր է միայն ծաղր անել կամ ծիծաղել նորա կարեկցութեան վերայ, որ ունի դէպ ի իւր հայրը, մայրը և կամ ուրիշը, և մտադրութեամբ նկատել այն փոփոխութիւնքը որ լինում են նորա մէջ այն վարկենում։ Նա սկսում է արդարացնել իւր անձը, կարմրում է նորա երեսը, փայլում են աչքերը. մի խօսքով — նա երևում է հիանալի տեսքով և սիրելի։

Թէ ծնողների ուրախութիւնը և զուարճութիւնը ի՞նչ հետևանք պէտք է ունենան երեխայի համար, կը տեսնենք իւր տեղումը, բայց այժմ երթանք նորա կիրքերի հետևից և նայենք թէ ի՞նչ է լինում վերջը։

Մի քանի տարուց յետոյ, երբ առաջին ամենափոքր և ախորժելի ախտերը սկսում են կամաց կամաց զօրանալ, երբ նոքա դառնում են արդէն չսիրելի, կամ պակասութիւնք բոլորովին, ի հարկէ այն ժամանակ հարկաւոր է լինում ուղղել. բաց խլել նորանց, բայց երբեմն այս ուղղագործութիւնը պահանջում է պատիժ։ Եւ այս անգամ խեղճ երեխան չարչարվում է, պատժվում է իւր ծնողների ուրախութեան և հաճութեան համար. ո՛հ, ի՞նչպէս անողորմ և անօրէն ուրախութիւն է դա։ Երեխան չէ կարող իմանալ, թէ ուստի՛ են յառաջացել իւր պակասութիւնքը, բայց մայրը պէտք է իմանայ և տեսանէ այն բանը, որ նա ինքը սերմանել է իւր երեխայի սրտի մէջ։ Կարող է պատահել, որ երեխայի կրթութիւնը կամ պակասութենների ուղղութիւնը չյաջողվեցան կամ թէ ամենևին սկսուած ևս չէն։ Այնուհետև, հարցանում ենք, — այդպիսի երեխայից ի՞նչ կարող է դուրս գալ։ Դորանից դուրս կը գայ այն, որ երեխան կը լինի դատարկ, վնասակար, թեթևամիտ և յիմար, ինքնասէր մարդ, որի համար չկայ ոչ հաստատուն հաւատ, ոչ ճշմարիտ զգացմունք, ոչ սուրբ սէր. մի խօսքով, ոչ թէ մարդ, այլ — ներմարդացած խաբէութիւն։

Նա պաշտում է միայն իւր անձը. նորա ամեն մի քայլը խորամանկութիւն է և կեղծաւորութիւն։ Բաց ի սորանից, նոյն իսկ ախորժելի և բերկրական կիրքերը, զիպուածների առիթ տալովը և ժամանակով,

դառնում են զարհուրելի արատներ, որ անարգում են մարդկային ազնիւ բնութիւնը։

Յայտնի է, որ չկայ մի գործողութիւն, որ լինէր առանց պատճառի. ուրեմն և այս տեղ կայ մի պատճառ, բայց եթէ կայ, ո՞ւր է։

Կարող ենք անսխալ ցոյց տալ դաստիարակութեան վերայ։ Շատերը իւրեանց անձը արդարացնելու համար, աշխատում են բոլոր յանցանքը ձգել բնութեան վերայ, կամ մեղադրում են բնածին յատկութիւնները. թէպէտ այսպէս ասելով, կարող է մարդ արդարանալ, բայց ո՛չ ամենեւին։ Պիտոյ է որոշել միմեանցից, թէ ի՞նչ կարող էր լինել բնածին, ի՞նչ չէ։ Մարդս ծնւում է փոքր ի շատէ կատարեալ մարմնակազմութեամբ, որի մէջ ապագայի համար պարունակված են արդէն բնածին յատկութենների պայմանքը։

Ամեն անասուն ծնւում է իւրեան միայն պատկանած առանձին յատկութեամբ, որ կոչվում է «բնական ազդեցութիւն» որ և իւրաքանչիւր անասունի ի բնէ տուած մարմնակազմութեան հետևանքն է։ Գայլը պատառում է ոչխարին. մեղուն ծաղիկների վերայից հաւաքում է նիւթ մեղր պատրաստելու, սարդը գործում է ոստայններ։

Ուստի՞ են արդեօք այս կամ այն բնածին յատկութիւնքը։ Բոլորը պահանջում է, շարժում է նոցա մարմնի կազմուածքը։ Անասունքը ո՛չ ընդունում են դուրսից և ո՛չ ուսանում են միմեանցից, այլ նոքա կատարում են բոլորը ինչպէս բնական, ամենահարկաւոր պաշտօններ. և սոցա բոլոր արարքը միշտ միակերպ ուղիղ և կատարեալ է։ Անասունները որոշվում են մարդուց այն բանով ևս, որ նոքա չունին մարդուն միայն պատկանած գովելի յատկութիւնները, որ են կատարելագործութիւն և իրեարու հետ հաղորդակցութիւն։ Նոքա առնում են լոկ այն, ինչ որ պահանջում է նոցա կազմուածքը։

Մարդը ի հարկէ նոյնպէս շնչաւոր է, բայց իսկական զանազանութիւնը մարդու և անասունի մէջ այն է, որ բաց ի իւր հոգեգործող իմաստուն աղբիւրի ճառագայթից, ունի նա այն զարմանալի ընդունակութիւնը, որ կարող է փոփոխվիլ ազդեցութենների ներգործութեամբ, վատթարանալ կամ աւելի կատարելութիւն ստանալ. անարգել իւր բնութիւնը, կամ դորա հակառակ մեծացնել և ազնուացնել նորան իմացականաբար։ Ի հարկէ անասունը ևս կարող է փոքր ի շատէ լաւանալ, կրթուիլ, մինչև անգամ փոխել իւր բնութիւնը, բայց ո՛չ ինքն ըստ ինքեան, կամ իւր ձգտողութեամբ կամ թէ ուսանելով ուրիշներից, այլ միայն մարդու ձեռքի տակ։ Ի բնէ տուած կազմուածքի մէջ, մարդը ևս, ինչպէս անասունը, գտանում է ձգտողութիւնք, յօժարութիւնք դէպ ի այս կամ այն կողմը. բայց նա ծնւում է ա-

ռաւել տկար, քան թէ անասունը։ Նորա առաջին քայլը ևս կախված է ոչ թէ իւրեանից, այլ դաստիարակներից, որ կարող են գրեթէ բոլորը ոչնչացնել կամ թէ զարգացնել։ Դոքա մարզելով և կրթելով կարող են աճեցնել․ օրինակ, ձեռքերի զօրութիւնը, բայց մի և նոյն ժամանակ թողուլ անգործութեան մէջ ուրիշ անդամները։ Ինչպէս ամեն ֆիզիկական գործարան, օրինակ, ոտքի կամ ձեռքի մկնամիսքը, աչքերը և ուրիշ անօթները, նոյնպէս և ամենայն զգայողութիւն, ամենայն յատկութիւն հոգու, մի խօսքով ամեն բնածին, թէ բարի և թէ չար ընդունակութիւն կրթվում, մարզվում և պտղաբեր է լինում դաստիարակութեամբ միայն։

Վերջապէս երեխան թէ իւր բնածին պակասութենների և թէ գեղեցիկ յատկութենների համար պարտական է իւր ծնողներին։ Որովհետև բնութեան խորհրդաւոր արուեստանոցի մէջ ծնողների արտաքին կերպարանքին յարմար, կազմվում երեխայի ինչպէս արտաքին ձևը, երեսի, մարմնի և հասակի նմանութիւնը, նոյնպէս և ներքին իսկութիւնը։ Այս բնական օրէնքովը ահա, շատ ծնողների չէ յաջողվում իւրեանց մանուկների դաստիարակութիւնը, այն պատճառով, որ նոքա մոռանում են սկսել դաստիարակութիւնը իւրեանց անձնից յատկապէս, այսինքն նախ և յառաջ դաստիարակել իւրեանց անձը։

Յարութիւն Համասփեան։

(Շարունակութիւնը յետագայ տետրակներում։)

ՊԱՏՄԱԲԱՆԱԿԱՆՔ։

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՌԵՎՕԼԻՒՑԻԱՅԻ ՊԱՏՃԱՌՔԸ։

(Շարունակութիւն։)

Բոլոր Ֆրանսիան, սիրտը լցուած յոյսերով, հաւատարմութեան ուխտ կապեց Լուդովիկոս տասն և վեցերորդի հետ, որ էր Լուդովիկոս տասն և հինգերորդի թոռնը և յաջորդը։ Ժողովուրդը մոռացաւ այն բոլոր խայտառակ և տրտում իրողութիւնքը, որ անցած կառավարութեան միջոցին տեսած ու փորձած էր․ նա մոռացաւ իւր կրած տառապանքը և երևումէր պինդ և անյողդողդ անձնանուէր Աթոռին, որպէս և Բուրբոնեան տանը։ Մանուկ թագաւորը արժանի էր այդ սի-

րուն և յարգութեանը. Նորա անարատ մասնաւոր կեանքը, Նորա մաքուր վարքը, Նորա երկիւղած սիրտը, ընդհանուր բարեացակամութիւնը և սէրը դէպ ի ամենայն բարի բան — խոստանումէին Ֆրանսիային աւելի լաւ գալոց օրեր։ Թէպէտ Նորա իմացականութիւնը չէր բազմապարունակ և շրջանկատ, բայց առողջ և ուղիղ. Նորա գիտութիւնքը պէսպէս էին և մի քանի բաժիններում հիմնաւոր։ Նորա կարգասիրութիւնը, Նորա տնտեսութիւնը և պարզ կենցաղավարութիւնը կանուխ սիրելի կացուցին Նորան բարեմիտ մարդերի աչքում։ Նա ունէր մասնաւոր մարդու բոլոր առաքինութիւնքը, և որպէս որդի, եղբայր, ամուսին, յետոյ և որպէս հայր անըստգիւտ (անպարսաւ) էր Նա։ Բայց Նա բոլորովին անմասն էր քաղաքական առաքինութեններից, որ մանաւանդ թէ դժուար ժամանակներում անհրաժեշտ հարկաւոր են արքայ մարդերի. Նորա ընտիր յատկութեններից մի քանիքը կարող էին Նորա բարձր դրութեան մէջ համարվիլ որպէս պակասութիւնք, կամ թէ առիթ տալ վտանգաւոր սխալանքի և մոլորութեան։ Հուստափոյթ վճռողութիւն, զօրաւոր իրագործութիւն մի որոշած բանի, հաստատութիւն մի առաջարկութեան վերայ օտար էին Նորա բնութեանը. այնուամենայնիւ, այն միջոցին կարող չէին բանականութիւնը և արդարութիւնը կառավարել Ֆրանսիան, առանց մի ամուր, երկաթի կամքի. Լուդովիկոս տասն և վեցերորդի թոյլ դաստիարակութիւնը Նորա հօր վաղահաս մահուց յետոյ, Նորա համեստութիւնը, Նորա բարեսրտութիւնը բազմապատկեցին այս բնական պակասութիւնը կամքի զօրութեան։ Լինելով շատ փոքրահաւատ դէպ իւր անձը, միւսերին շատ հեշտ ընծայելով իւր հաւատը, բաց ու արձակ էր Նորա սիրտը օտարների թելադրութեններին և տպաւորութեններին։ Տարակուսամիտ, անվստահ, առանց Նուրբ վայելչութեան, չէր Նա պատկառելի Ֆրանսիացոց աչքումը, չէր շողոքորթում Նոցա ունայնասիրութիւնը գեղեցիկ և մեծափառ ծանրութեամբ, ինչպէս արած էին Նորա Նախնիքը, և չիմացաւ գրաւել, զմայլեցնել, հոգևորել Նոցա սիրտը, ինչպէս Նորա մեծ Նախապապը, Հենրիկոս չորրորդը արած էր իւր ասպետափառ կերպարանքով, իւր զուարթ բնութեամբ, իւր կենդանի հոգով։ Լուդովիկոս տասն և վեցերորդը ունէր բացասական յատկութիւնք քան թէ դրական, քաջաղնական, արքայական առաքինութիւնք։ Եթէ Նա ունեցած լինէր այնքան գործունեայ վստահութիւն հոգու, ինչքան կրաւորական սիրտ ցոյց է տուած Նա, վշտակիր լինելով և խաղաղութեամբ համբերելով ամենասոսկալի բանին, այնուհետև ազատուած ու պրծած կը լինէր այն վնասներից, որոնց տարաւ Նա մարտիրոսական խաղաղութեամբ ու համբերութեամբ։

Այսպէս էր ահա Լուդովիկոս տասն և վեցերորդը, եթէ միտ դնենք նորա ընդունակութեններին կամ արդէն կերպարանք ստացած բնաւորութեանը, երբ որ նա իւր պապի քայքայված ժառանգութիւնը յանձն առաւ և կոչվեցաւ քավելու նորա մեղքը։ Թագուհին (Մարիա Անտուանետտէ), մեծահոգի Մարիամ Թերեզիայի դուստրը, ինքը ևս նոյնպէս մեծահոգի ինչպէս իւր մայրը, ոտք կոխելով Ֆրանսիայի սահմանի վերայ ընդունվեցաւ ժողովրդից մի անպատմելի խնդութեամբ։ Մեծարանք ու սէր ամենայն կողմից թափվեցան նորա վերայ։ Նա զմայլեցնում էր աչքերը իւր գերօրինակ գեղեցկութեամբ, երևակայութիւնը իւր հոգելից և քաղցր խօսակցութեամբ, սիրտը իւր մարդասիրութեամբ և բարեգործութեամբ։ Բայց նա իւր գերազանց բնաւորութեամբ փոքր առ փոքր ստացաւ շատ մեծ իշխանութիւն թագաւորի վերայ. Նա տիրապետում էր նորան, գուցէ թէ առանց դիտաւորութեան, և ամուսին այրը ստորադիր էր նորա կամքին, անգիտութեամբ։ Մարիա Անտուանետտը լինելով մանուկ, պարզամիտ, վայելչութենների և փառահեղութեան անձնատուր, մի շքեղ և ճոխ աթոռի հասած, մոլորեցուցիչ և ագահ պալատականներից շրջապատված, վատնում էր շատ, բազմադիմի տեղիք էր տալիս վատնողութեան միւսերի օգտի համար. պալատումը, փոխանակ իւր անձը ծանր և պատկառելի պահելու, որ հարկաւոր էր մանաւանդ թէ Ֆրանսիայի մէջ, կարգ ձգեց նա մի մեծ թեթևաբարոյութիւն, թէպէտ անմեղ, բայց սանձակոտոր զբօսասիրութիւն և յօժարութեամբ անտես արեց այն պատշաճի և կենցաղավարութեան խիստ կանոնները, որ ծէսը և սովորութիւնը դրած էին Ֆրանսիայի թագուհիների վերայ որպէս պարտականութիւն։

Այսպիսի յատկութեններով և այսպիսի բնաւորութեամբ հրամայողք, կարողացած կը լինէին խաղաղ ժամանակներում լցուցանել իւրեանց բարձր վիճակի պաշտօնը և երջանիկ կացուցանել Ֆրանսիա։ Բայց այդ երկու արքայական ամուսինքը, թէև նշանաւոր իւրեանց առաքինութեամբ, այնու ամենայնիւ ծնած չէին այնպէս, որ կարողանային զգուշանալ փոթորկալից ժամանակներից կամ թէ ճակատը դէմ դնել նոցա։ Եւ հեշտ գուշակելի բան էր, որ այդպիսի ժամանակներ գալու էին Ֆրանսիայի վերայ։ Դոքա համարվելով կարելի քան թէ հաւանական, երևումէին շատ հեռաւոր կամ թէ կարող էին դեռ ևս ամենևին հեռացվել։ Եւ արդարև, թէպէտ շատ պատճառք կային տհաճութեան, թէպէտ իդէայքը յեղաշրջված և մեծ փոփոխութիւններ յառաջացած էին թէ նիւթական և թէ իմացական մասին, այնու ամենայնիւ Լուդովիկոս տասն և վեցերորդի թագաւորութեան առաջին տասներկու տարու մէջ մնաց ամենայն ինչ հանդարտ։ Ամենայն ինչ

փոքր առ փոքր շարժվումէր դէպ ի լաւը, կամ թէ բարուոքացաւ արդէն թագաւորի բարեգործ ձեռքով: Փոթորկի նիւթը ասես թէ ցանուցիր էր լինում և քաղաքականութեան երկնակամարը աւելի պարզվումէր Ֆրանսիայի ներսումը: Բայց կառավարութեան կողմից արվեցան ինչ ինչ սխալանք և անզգուշութիւնք: Յառաջացան պալատումը նորանոր պակասութիւնք, և միւս աշխարհապաժիններ միջ պատահեցան անցքեր, որ խորհրդաւոր ներգործութիւն ստացան Ֆրանսիայի տրամադրութեան վերայ և հեշտ կարող էին վտանգաւոր դառնալ արքայական աթոռին և քաղաքական կարգերին: Մեծ անբաղդութիւն էր տէրութեան համար, որ մանուկ թագաւորը հասարակաց գործերի կառավարութիւնը յանձնեց ալեւոր կոմս Մօրեպային: Այս մինիստրը լինելով ի բնէ թեթեւամիտ, վայր ի վերոյ և անսիրտ մարդ, թէպէտ ունէր իմացողութիւն և սրամտութիւն, բայց չունէր ոչ այն հաստատուն կանոնները, ոչ այն խորամուխ հասկացողութիւնը և ոչ այն մաքուր, զօրաւոր բնաւորութիւնը, որ հարկաւոր էին տէրութեան հիւանդութիւնքը քննելու, գտնելու և հիմնովին բժշկելու: Նորա տարիքը օրէ օր յաւելանալով, բազմապատկումէին և նորա սխալանքը: Անձնամոլութիւնը յառաջացուց նորա միջ անհոգութիւն և նա կարծումէր իւր խաղարկու հանճարով և թեթեւամիտ զուարթութեամբ բոլորը հանգարտեցնել կամ կառավարել այնպէս, ինչպէս պատշաճ էր Ֆրանսիացոց ազգային բնութեանը: Թագաւորը ցանկանումէր չափաւորել ծախքերը տէրութենական տնապահութեան բոլոր մասնբումը, բարեկարգել կառավարութեան բոլոր ճիւղերը. այս բաները կամեցած էր հաստատապէս, բայց առանց ցոյց տալու այն կամքի զօրութիւնը, որ հարկաւոր էր դորանց յառաջադէմ կացուցանելու: Մի այդպիսի հերքուլեան աշխատութիւն չէր այն զառամած ծերունու համար, որ կառավարումէր թագաւորութեան ղեկը. դա զարհուրանք բերեց նորա վերայ. նա չկամեցաւ այդ աշխատութիւնը ինքը յանձն առնուլ, որովհետև կարող չէր յուսալ, թէ կը լրացուցանէ նորան. և նա յօժարութիւն չունէր այդ գործը այլ ձեռքերի թողուլ, որովհետև արդարացի, թէպէտ արհամարհելի երկիւղ ունէր, մի՛ գուցէ նոքա նսեմացնեն նորա փառքը, այլև աւելորդ կացուցանեն նորա անձը:

Բայց արդէն զօրացած հասարակաց կարծիքը ազդեց և նորա վերայ իւր կարողութիւնը: Եւ նա գլուխ խոնարհեցրեց դորա առաջև, միայն թէ նորա տեղատուութիւնը չստիպէր նորան դուրս գալ իւր սովորական շաւղից: Այսպէս ահա, ժողովրդի ձայնը նշանակեց ծեր մինիստրի առաջև մի քանի մարդիկ որ իւրեանց քանքարներով, իւրեանց պատուականութեամբ, իւրեանց մաքուր, ազնիւ բնութեամբ

յաջողակ էին, երևում, Ֆրանսիայի բարին յառաջ տանելու համար։ Այս մարդիկը Մօրեպան յանդիման կացուց Թագաւորին, և սա յօժարութեամբ և ուրախութեամբ ընդունեց նորանց որպէս օգնականք աթոռին. այսպէս եղաւ Տիւրգօյի, Մալէսհերբէսի և Նեքքերի ընտրութիւնը։ Առաջինը սոցանից լինելով բանագէտ, բայց չափից դուրս անձնատուր առանձին մտաւորական կարգերի, գործունեայ, բայց անչափ արագընթաց իւր գնացքների մէջ, հասարակաց բարին մտածող բայց շատ փոքր խնայող մասնաւորների օգտին, աւելի տեղեակ լինելով իրերին քան թէ մարդերի սրտին, չկարողացաւ երկար պահպանել իւր գեղեցկապէս սկսած ասպարէզը։ Պալատականներից բամբասվելով, փոքրոգիներից և կարճատեսներից պարտաւորված որպէս մի վայրենի, նորաձևութիւնք ներս բերող մարդ, արձակվեցաւ իւր պաշտօնից, թէպէտ թագաւորը յօժար չէր այդ բանին։ Երկրորդը, Մալէսհերբէս, մի մեծահոգի, ամբիծ վարքով մարդ, արդար և մեղմ, իւր սրտի և մտքի մաքրութեամբը մի աւելի լաւ ժամանակի արժանաւոր, խօսումէր և գործումէր այն դիտաւորութեամբ, որ մարդերի անձը և սեփականութիւնը ապահով կացուցանէ բռնակալութեան երեսից. նա փորձ փորձեց մի օրինապաշտաճ ազատութեամբ փրկաւէտ սանձի տակ դնել խօսելու և գրելու անպատկառ լըբութիւնը. բայց և նա, ինչպէս ասումեն նորա թշնամիքը, անգիտութեամբ ծառայած է իւր ժամանակի վտանգաւոր ուսմունքին, կամ թէ այդպէս երևեցած է. և վհատվելով այն ընդդիմութենից որ ցուցած էին նորա պատկանաւոր բարեկարգութեններին և առաջարկութեններին, կամայապէս հրաժարվեցաւ իւր պաշտօնից և առանձնացաւ։ Նեքքերը վաճառականութեան հաշուետնից հետ պհետէ դէպ ի վեր ձգտելով, թէև դաւանութեամբ պրոտեստանտ, հասաւ գեներալ կօնտրօլեօրի (*) արժանաւորութեան, մի կաթոլիկեան աշխարհում. թէպէտ չունէր նա քաղաքագէտ մարդու ոչ հոգին և ոչ բնաւորութիւնը, բայց նշանաւոր էր նա իւր բանագիտութեամբ տէրութենական եկամուտքի տնտեսութեան մէջ, բարի վարքով թէպէտ ոչ առանց անձնացուցութեան, ամուր կամքով, թէպէտ ոչ առանց մի փոքր խոշորութեան։ Նա կարգ, արդարութիւն և անշահախնդրութիւն ներս բերեց այս մեծ տնտեսութեան մէջ որ հաւատացած էր նորան. նա հաստատեց հասարակաց հաւատը որ և բացեց նորա առաջև առատաբուղխ աղբիւրներ. բայց այս գործի մէջ յաղթեց Նեքքերին իւր նախապատիւ

(*) Controleur général, ընդհանրական արձանագիր տէրութենական եկամուտքի. սորա պաշտօնը այն է, որ տէրութեան ստացած եկամուտքը առանձնապէս արձանագրումէ իւր ցուցակի մէջ, առաւել ճշդութեան խորհրդով։

սէրը դէպ ի սեղանաւորութեան (բանկի) հնարագործութիւնքը, որ Նորա առաջին պաշտօնն էր։ Երբ որ Նա իւր հռչակաւոր համարատուութեամբը (Compte rendu) *մի վտանգաւոր լուսի տակ ձգեց տէրութեան եկամուտքը և դորանով առիթ տուեց մի աւելի վտանգաւոր հրապարակութեան, թէ ինչ դրութեան մէջ էին գործք, այդ պատճառով բարեմիտների աչքումը երևեցաւ Նա, որպէս թէ որոնումէր ժողովրդի շնորհը և կամէր գովասանութեան խունկ ծխել ինքը իւր քթին։ Նէքքերը կամենալով ևս առաւել բարձրանալ և թագաւորի խորհրդարանի անդամ դառնալ, վայր ընկաւ իշխանութենից, թէպէտ յետոյ ապաշաւեցին և շատ անգամ ցանկացան Նորա վերադարձին։*

Այն միջոցին, երբ որ Նէքքերը վերատեսուչ էր տէրութեան եկամուտքի վերայ, Ֆրանսիան հրապարակով, գործով և պարծանքով մասնակից եղաւ Ամերիկացոց պատերազմին։ Անգլիացոց գաղթականքը Հիւսիսային Ամերիկայի արևելքումը, որ վաղուց արդէն ծանօթ էին փոխանորդական կառավարութեանը (*) *և դորա պաշտպանութեան տակ վայելած էին քաղաքական ազատութիւնք, գործ դրեցին այս ազատութիւնքը և այն բարեկեցութիւնը որ յառաջացած էր դորանից, ամենևին ազատ կացուցանելու իւրեանց անձը Անգլիայից։ Այս մեծ ձեռնարկութեան առիթը էր մի չնչին բան։ Այն գանգատները որ ունէին գաղթականքը, թեթև ու փոքրիկ էին. Անգլիան դիտաւորութիւն չունէր ճնշել և հարստահարել իւր գաղթականքը, բայց սոքա աշխատումէին Նոր իրաւունքներ ձեռք բերել և ոչ թէ միայն պահպանել իւրեանց հին, բարեստացները։ Այս վէճերը արդէն երկար ժամանակ տևած էին գաղթականների և մայր աշխարհի մէջ, մինչև սաստկանալով դարձան մի ճշմարիտ կռիւ և մի արիւնհեղական պատերազմ։ Գաղթականքը հաստատելով մի մեծ դաշնաւորութիւն տէրութենների և անուն դնելով սորան «Միաբանեալ տէրութիւնք», բաժանվեցան իւրեանց մայր աշխարհից։ Այս խորհրդաւոր երկպառակութեան վերայ Նայումէր Ֆրանսիան ուրախ աչքով, ըստ որում կարծումէր թէ դորանից ստանալու է ինքը մեծ շահ, բայց Անգլիան հասանելու է մեծ վնասի և զրկանքի։*

Հասարակաց կարծիքը ժողովրդի վերին դասակարգերի, վաճառականների և մատենագիրների, Ֆրանսիայի մէջ, բարձրաձայն և յայտնապէս քարոզել էր իւր հաւանութիւնը Ամերիկացոց ձեռնարկութեան

(*) *Սորանով հասկանումենք այն կառավարութեան ձևը, որ ասվումէ ֆրանսիարէն* Constitution représentative *կամ* Système représentatif. *Սա այն ձևն է կառավարութեան, ուր կառավարողքը են ազգի ընտրած փոխանորդքը։*

և իրաւունքների մասին։ Մի մասը տեսանումէր այդ երկպառակութեան մէջ մի գեղեցիկ յաջող դիպուած, որով կարող էր Ֆրանսիան վրէժխնդիր լինել վերջին պատերազմի նախատական վախճանի համար և հատուցումն ստանալ. միւս մասը երազումէր, թէ աշխարհի վաճառականութիւնը ձգելու է իւր ձեռքը, կամ թէ յոյս ունէր գոնեայ, թէ կարող էր իւր առուտուրքի համար բանալ մի նոր անչափելի մեծ հրապարակ։ Մատենագիրները և նոցա բազմաթիւ հետևողքը ուրախանումէին Ամերիկացոց քաջ և վստահ ձեռնարկութեան վերայ և տեսանումէին դորա մէջ յաղթական հանդէսը այն իւրեանց յատուկ ուսմունքի, թէ ազգերի իրաւունքը անմերժելի են և իշխանների ու թագաւորների կարողութիւնը յափշտակութեամբ է։ Բոլորեքեան միաբանվեցան, որ քաջալերեն տէրութիւնը պատերազմ բանալ Անգլիայի հետ և այդպէս յաջողութիւն տալ Միաբանեալ տէրութենների ինքնիշխան ազատութեանը և ապահովապէս հաստատել նորան։ Բենիամին Ֆրանկլինը արդէն երկար ժամանակ Փարիզումն էր, որ յառաջացնէ այս վճռողական խրողութիւնը։ Նորա, բնագիտութեան հանդիսումը արած յայտնագործութենների պարծանքը յառաջընթաց էր եղել նորան, և ուսումնական մարդը բացել էր քաղաքականի համար ճանապարհ։ Նորա պարզ և անարուեստ կերպարանքը, որ ծածկումէր իւր մէջ շատ խորամանկութիւն և յաջողակութիւն, նորա հոգելից, զուարթամտութեամբ և առանձին հայեացքով համեմած խօսքերը բաղդաւոր գտանվեցան արքայական պալատումը և մայրաքաղաքի մէջ, և ոչ փոքր ձեռնտու եղան նորա միջնորդախօսութեան յաջող վախճանին։

Ֆրանսիան ծածկապէս օգնել էր արդէն Ամերիկացոց ձեռնարկութեանը։ Օգտախնդիր մարդիկ տէրութեան աչքի առաջև, առանց պատիժ կրելու, արծաթ և ամենայն տեսակ պատերազմական պիտոյք հասուցած էին Միաբանեալ տէրութեններին։ Դուրս էր եկել մի մեծ բազմութիւն գրուածների. որոնց մէջ Ամերիկացոց ձեռնարկութիւնը պաշտպանվումէր որպէս մի շատ օրինապատշաճ ընթացք. և այս միջոցիս աներկիւղ և անարգել հանդէս բերվեցան ընդհանուր մտահայեցութիւնք քաղաքական գիտութեան վերայ, որ և սրամտութեամբ ապացուցված և ճարտարախօսութեամբ զարդարված միջամուխ եղան սրտերի մէջ — մտահայեցութիւնք որ ծածուկ, նոյն իսկ Ֆրանսիայի վերայ գործ էին դնում, կամ թէ հեշտ կարող էին գործ դնել։ Սրտերի մասնակցութիւնը Ամերիկայի ձեռնարկութեան, սաստկացաւ մինչև մի հիացուցիչ ուրախութիւն։ Հասարակաց կարծիքը աճեց և դարձաւ մի հեղեղատ, որ վերջումը քարշեց տարաւ իւր հետ և Տէրութիւնը։ Պատերազմը որոշվեցաւ Ֆրանսիայի կողմից և սկսվեցաւ ամենամեծ ջեր-

մութեամբ։ Նեքքերը բարեհաշիւ փոխառութեններով ճարեց դորա համար պիտոյ եղած արծաթը։ Ծովային կարողութիւնը Ֆրանսիայի մի զարմանալի արագութեամբ վեր բարձրացաւ մինչև այն աստիճան, որի վերայ գտնված էր մինչև Լա-Հոգեան կռիւը, և միաւորվելով Շպանիայի հետ, երկու աշխարհաբաժինների մէջ ճակատը դէմ դրեց Անգլիային։ Մի Ֆրանսիական զօրք որին առաջնորդումէր Րօշամբօն, փոխադրվեցաւ դէպ ի Ամերիկա։ Բոլոր երիտասարդ ազնուական պաշտօնակալքը հետամուտ էին այն պատուին, որ գործ ստանան այս ձեռնարկութեան մէջ և ազատութեան համար—ինչպէս ասումէին նոքա—թափէին իւրեանց արիւնը։ Լաֆայէտը և Նօայլէսը վաղուց արդէն որպէս աղատակամ զինուորք պատերազմած էին Վաշինգտօնի դրօշակի տակ։ Պատանի ազնուականքը բորբոքվելով նոցա օրինակից, հետևեցան նոցա ուրախութեամբ։ Երկարատև կռիւներից յետոյ ըստիպվեցաւ Ագլիան խոստովանել Միաբանեալ տէրութենների ինքիշխանութիւնը։ Ֆրանսիան հաշտութեան մէջ ստացաւ մեծ օգուտներ և ճարեց իւր համար ևս առաւել մեծ պատիւ։

Այս ոչ ստիպական, այլ յօժարակամ յանձնառած մասնակցութիւնը Ամերիկացոց պատերազմին, անխորհուրդ չմնաց Ֆրանսիայի ներքին տրամադրութեան համար։ Դա ոչ թէ միայն կարող էր համարվել որպէս մի յայտարար նշան, այլ որպէս մի ներգործութիւն որ յառաջացուցել էր ժամանակի հոգին, այլև դա ունեցած է մի խորհրդաւոր անդրադարձ ազդեցութիւն ժամանակի հոգու վերայ, սաստկացուցել է և փութացուցել է նորա ձգտողութիւնը։ Լուդովիկոս տասն և վեցերորդը շատ ուղիղ դատողութիւն գործեց այն մեծախորհուրդ անցքի մասնակցութեան վերայ, որ պիտոյ է յանձն առնուր նա, ստիպուած իւր խորհրդականներից և հասարակաց կարծիքից, և այն պատերազմը որ սկսել էր Ֆրանսիա, միաբանեալ տէրութենների ազատութիւնը պաշտպանելու համար, երևումէր նորան նոյնքան ևս անարդար, ինչքան և վտանգաւոր։ Բայց Լուդովիկոս տասն և վեցերորդը, ինչպէս նորա սովորութիւնն էր, գործ գործեց ընդդէմ իւր սրտի առողջ վկայութեանը, և թոյլ տուեց առնուլ տանել նորան դէպ ի մի ձեռնարկութիւն որին անհաւան էր ինքը։ Եւ արդարև նորա դատողութիւնը և նորա անյօժարութիւնը արդարացաւ նոյն իսկ անցքերովը։ Ֆրանսիացոց մատենագիրքը ցոյց տալով որպէս թէ պաշտպանումէին անգլիացի գաղթականների ինքնիշխան ազատութիւնը, սկսեցին զանազան ձևերով, արձակ համարձակ քննելու վճռել շատ վտանգաւոր և խորհրդաւոր խնդիրներ, այսինքն թէ ինչ բան էր օրինապատշաճ իշխանութիւնը տէրութեան մէջ, ինչպէս էր յառաջացել դա և ուր էին դորա սահմանքը, և այսպէս

կորստական ուսմունք տարածել։ Զինուորական պաշտօնակալքը, այո և սոսկականքը որ պատերազմել էին Ամերիկայումը, վերադարձան իւրեանց հայրենիքը, բերելով իւրեանց հետ այնպիսի մտքեր որ ամենևին միապետական չէին, և հիմնական կանոններ կամ գաղափարներ, որ շատ հեշտ կարող էին գործ դնել Ֆրանսիայի վերայ, թէև դոքա ինքն ըստ ինքեան անգործադրելի էին նորա վերայ։ Այն հոգեպայծառ ուրախութիւնը պատերազմի յաջող աւարտման վերայ, որ տիրապետել էր բոլոր սրտերին, թէպէտ այդ ուրախութեան նիւթը մի ապստամբութիւն էր, ամենայն տեղ դուրս երևեցաւ մերկ և յայտնի, որպէս և աննախատ։ Բայց այն մեծ անհրաժարելի ծախքերը որ պատճառել էր պատերազմը, յառաջացուցին օրէ օր աւելի մեծ անկարգութիւնք և վնասք տէրութեան տնտեսութեան մէջ։ Նեքքերը մեծ արծաթի փոխառութեամբ զանազան տեղերից, հասուցել էր պատերազմի ծախքերը. եթէ նա իմացած լինէր իմաստութեամբ գործ դնել նորան ցոյց տուած հաւատը, և տնտեսութեամբ փոքրացնել սովորական ծախքը տէրութեան և պալատի, գուցէ թէ ապահոված կը լինէր փոխառած արծաթի տոկոսիքը։ Բայց երբ որ նա ստիպուեցաւ դուրս գալ իւր հրապարակական պաշտօնից, օրէ օր աւելի զօրացաւ խառնակութիւնը, և անհաւասարութիւնը եկամուտքի ու ծախքի մէջ գնալով գնալով աւելի մեծացաւ։ Նորա հռչակաւոր գրուածը տէրութեան եկամուտքի տնտեսութեան մասին, արձակ համարձակ մերկացրեց այն ցաւը, որ ճնշումէր տէրութիւնը և օրէ օր աւելի վտանգաւոր էր լինում նորան։ Արդեօք այդ գրուածի պատճառը նորա ունայնասիրութիւնն էր, թէ իւր անձը արդարացնելու հարկաւորութիւնը — այդ բանը մնումէ տարակուսական. բայց անտարակոյս էր այն խմորումը որ այդ գրուածը յառաջացրեց սրտերի մէջ։

Նեքքերի յաջորդը էր Կալոնն. սա մի աւելի հնարագէտ և վստահամիտ մարդ էր քան թէ նա, բայց և շռայլութեան անձնատուր, անառակ, անզգաստ, թեթևամիտ, յանկուցն նորանոր խորհուրդներ յղանալու մէջ և շատ արագ գործ դնելով նորանց։ Նորա կառավարութեան միջոցին տէրութեան ծախքերը միշտ աճելով առաւելանումէին քան թէ եկամուտքը։ Այս ցաւին դարման տանելու համար, Կալոննը յղացաւ իւր մէջ այն խորհուրդը որ նոյնչափ և պատշաճ էր ժամանակին, որչափ և համեմատ իւր նպատակին. այսինքն այն երկու առանձնաշնորհ կարգերը ժողովրդի, Հոգևորները և Ազնուականքը հարկատու կացուցանել և վերացնել նոցա ազատութիւնը ամենայն ուղղակի հարկերից։ Այն ընդդիմութիւնը որ այս առաջարկութիւնը պիտոյ է գտանէր այն երկու նախամեծար կարգերի իրաւունքի մէջ, կորագլուխ առնելու կամ թէ նորանից հեռի մնալու համար, Կալոննը յորդորեց թա-

գաւորին ժողով անել թագաւորութեան մէջ եղած նշանաւոր մարդերի հետ, յուսալով թէ մեծամեծքը Ֆրանսիացոց ազգաժողովի առաջև կը կամենային հասկանալ իւրեանց պարծանքը և տեղիք տալ հասարակաց կարծիքին: Այլև, ազգին մի տեսակ ապահովութիւն տալու նորա ստանալի եկամուտների գործադրութեան մասին, ազգի սիրտը գրաւելու իւր խորհուրդների համար և տալու նորան օրինապատշաճ գործարաններ որոնց միջնորդութեամբ կարող էր նա իւր ցանկութիւնքը յայտնի կացուցանել, Կալոննը կամենումէր կարգել և ներս բերել գաւառական ժողովներ: Բայց նորա բոլոր բարեմիտ առաջարկութիւնքը անընդունելի գտանվեցան, ըստ որում նորա անձը չագդեց ազգի մէջ ոչինչ հաւատաւորութիւն, որովհետև ժողովրդի վերին դասակարգերը դեռ ևս խելամուտ չէին որ նոցանից խնդրած զոհաբերութիւնքը պահանջումէր ստիպող հարկը, որովհետև պալատի ազնուականքը, այլև թագաւորի եղբայր, Պրօվանսեան Գրաֆը, միաբանվեցան ընդդէմ Կալոննին, և թագաւորը չունէր ոչ այն քաջ հոգին և ոչ այն հաստատ կամքը, որ զօրաւոր հնարներով պաշտպանէր իւր գործակալի առաջարկութիւնքը:

Կալոննը արձակվեցաւ իւր պաշտօնից: Նորա տեղը բռնեց Սէնս քաղաքի արքեպիսկոպոս Բրիէննը, որի արժանից վեր մեծարած քանքարքը ամենևին անբաւական էին օգնելու Ֆրանսիայի գործերի խառնաշփոթ դրութեանը: Բրիէննի գործակալութիւնը մեծ անբաղդութիւն էր Ֆրանսիայի համար: Այնուհետև յառաջացան միմեանց քամակից շատ համարձակ և անխորհուրդ ձեռնարկութիւնք, տէրութենական տնտեսութեան մէջ վերստին հաստատելու հաւասարակշռութիւնը: Պիտոյ էր նորանոր հարկեր դնել ժողովրդի վերայ, պիտոյ էր նոր հարկահանութեան հրամաններ արուեստագործել. սահմանադրեցին, որ փոքրացնեն փոխ առած արծաթի տոկոսիքը. բայց այս բոլոր հնարները անյաջող գտանվեցան Պարլամենտների ընդդիմութեան պատճառով: Լուդովիկոս տասն և վեցերորդը, կամենալով իւր թագաւորութեան սկզբումը սիրելի կացուցանել իւր անձը, այս մեծ դատաստանական ընկերութիւնքը վերստին կարգել էր այնպէս, ինչպէս նոքա կային Մօպուից յառաջ, և նախ քան թէ սա նորոգել էր իրաւասութեան կարգը, այսինքն կրկին շնորհելով Պարլամենտներին նոցա լիակատար իշխանութիւնը յառաջ բերելու ազգի պահանջելիքը: Ժամանակը դժուարանալով, զօրացաւ և նոցա վստահութիւնը. նոքա հաստատաբար հրաժարվեցան արձանագրել Բրիէննի ատելի օրինադրութիւնքը, բարձր և զօրաւոր ձայնով քարոզեցին հասարակաց կարծիքը, և, թէպէտ դոքա ամբողջ դարեր արձանագրելով սրբազանել էին հարկահանութեան հրամանները, խոստովանեցին այժմ, թէ ինքեանք ոչ իրաւունք ունէին

և ոչ կոչված էին թոյլ տալու այդպիսի հրամանք, և պահանջեցին ազգի փոխանորդքը որպէս այն մի հաստ օրինապատշաճ իշխանութիւնը, որ ունէր համարձակութիւն նոր հարկեր դնել ժողովրդի վերայ:

Այսպէս ահա յառաջացան և ներգործեցին ազդողապէս, բայց ծանրընթաց, նախապատրաստող, հեռաւոր պատճառքը Ֆրանսիական Ռեվօլիւցիայի: Երկու դար ժողովել ու կուտակել էին այս մեծ համաշխարհական անցքի նիւթը: Այնպիսի ձևեր, որ պիտոյ է ազգի համար սուրբ և անմօտենալի մնացած լինէին, այլ և կարող էին փրկաւէտ դառնալ, խափանվեցան կամ թէ ընկան մոռացութեան մէջ. միւս ձեւերը որ հնարագործել էր կամապաշտութիւնը, որ և ծառայումէին դորան, ներս բերվեցան կամ թէ հետ զհետէ կերպարանք առան: Ամենայն տեսակ անկարգութիւնք բազմացել էին և պատճառեցին ընդհանուր տհաճութիւն: փոխ առ փոխ բռնակալութիւն և թուլութիւն. պատերազմական փառք թանգ գնով առած, և պատերազմական ամօթ որ գնած էին ևս աւելի մեծ վճարով. մի քաղաքական կառավարութիւն երբեմն գործունեայ, բայց անարդար, երբեմն անվնաս և անմեղ, բայց առանց բանագիտութեան և զօրաւոր ներգործականութեան. մի կորստական շռայլութիւն, բայց վայելչութեան, արժանաւորութեան, մեծամեծ խորհուրդների հետ կապակից. ապա դարձեալ մի տարասահման վատնողութիւն որ ևս առաւել ատելի էր ժողովրդին վատթարութեան, հեշտասէր փառահեղութեան, անարժանների քսակը լցուցանելու պատճառով. մեծամեծների մէջ մի անամօթ անառակութիւն և մի ամենևին սառնասրտութիւն դէպ ի ժողովրդի բաղդաւորութիւնը և անբաղդութիւնը. ահա այն իրողութիւնքը որով նշանաւոր էին երկու անցած դարերը: Այս անառակութեան մէջ, թէպէտ Լուդովիկոս տասն և վեցերորդը մնաց անարատ, սրբակրօն և ազնուամիտ. բայց թագաւորի վարքին չէին նմանում, այլ և դոքա ազդում չէին այն պատկառանքը և սէրը դէպ ի արքայական աթոռը, ինչքան որ ատելութիւն և արհամարհանք յարուցանումէր անառակութիւնը: Բաց ի սորանից կրթութիւնը տարածվել էր ժողովրդի բոլոր դասակարգերի մէջ, որ յառաջուց օտար էին նորանից, և առանձին բաժիններում բարձրանալով հասել էր մի ճշմարտապէս զարմանալի աստիճանի: Այնուհետև օրէնստուութիւնը ոչ ամենևին յարմար էր ազգի պիտոյքին. ժողովուրդը յառաջ խաղալով, օրէնստուութիւնը յետ էր մնացել նորանից: Կառավարութեան առաջնորդող կանոնքը արքունի պաշտօններ տալու մասին ոչ թէ համեմատ էին ստորին ժողովրդակարգերի օրէ օր յառաջընթաց կրթութեանը, այլ և ներհակ էին նոցա պահանջողութեններին, որ և վատահամբաւվեցան որպէս յանդգնութիւնք: Հին հիմնականոննե-

րի, յառաջուց ընդհանրապէս թագաւորած կարծիքների և մտքերի կարողութիւնը չքացել էր, և նորանոր հիմնականնք, կարծիքներ և մտքեր հաստատուել էին, արմատանալով սրտերի մէջ, յառաջ քան թէ կառավարութիւնը նկատել կամ թէ գուշակել էր այս փոփոխութիւնքը։ Այսպէս էր աչա Ֆրանսիայի դրութիւնը, և հեշտ կարելի էր նախատեսանել, որ վառելի նիւթը կարող էր յառաջացնել մի ահագին քաղաքական հրայրեացք, եթէ կառավարութիւնը, փոխանակ վառող կայծը հեռացնելու, անզգուշութեամբ կամ թէ ժողովրդի աչքումը ստապէս սիրելի լինելու համար, քրքրէր սկսուած կրակը։ Բայց, թող գտանվէին այդ բոլոր նախապատրաստող պատճառքը և հանգամանքը, որ կարող էին մի րեվօլիւցիա հնարաւոր, այո հաւանական կացուցանել, այնու ամենայնիւ չէր պատահելու դա, եթէ չեղած լինէին աւելի մօտ, աւիթ տուող պատճառները։ Դա ոչ անհրաժեշտ հարկաւոր էր, և ոչ ևս անփախչելի, միայն թէ չկամէինք հաստատել թէ յաղթող կողմի յանցանքը հարկաւոր են եղած և յաղթված կողմի սխալանքը որպէս և անյաջողութիւնքը անփախչելի։

Վերանորոգութիւնք, հիմնովին, մեծատարած, հաստատուն վերանորոգութիւնք հարկաւոր էին, և անպատճառ պիտոյ էր տէրութեանը լայն և շրջանկատ տեսութեամբ, քաջ և զօրաւոր կերպով և տոկուն համբերութեամբ ձեռնարկել և գլուխ տանել այդ վերանորոգութիւնքը, եթէ չկամէր նա պատրաստել իւր և թագաւորութեան կործանումը։ Փորձը ապացուցել էր արդէն, թէ, ինչքան և բարեմիտ ու բարեացակամ էր թագաւորը, անկարգութիւնքը կարող չէին սովորական հնարներով արմատախիլ լինել, և ոչ ևս նոցա միւսանգամ զօրանալը խափանվիլ։ Առանձին մարդերի ներգործականութիւնը և բանագիտութիւնը բաւական չէր մի այդպիսի հսկայաձև աշխատութեան համար։ Անչափ շատ և կարող, խորամանկ և նենգաւոր մարդիկ աշխատումէին յայտնապէս և ծածուկ ընդդէմ սոցա. անչափ շատ մարդիկ հաց էին ուտում տէրութեան հիւանդութեամբը և երկիւղ ունէին նորա առողջանալուց։ Պիտոյ էր ներս կամ յետ բերել տէրութեան մէջ մի խոբարմատ բժշկող և կենագործող պատճառ, որ իւր իմացականութեամբը ըմբռնէր պատշաճաւոր ուղղագործութիւնքը, սոցա ճանապարհ տար իւր մեծակշիռ զօրութեամբը, սորանց մի օրինապատշաճ իշխանութեամբ յաղթող կացուցանէր և տևողապէս ներգործելով ապահովէր նոցա լրութեան պսակը։ Մի այսպիսի ազդող պատճառ կարող էին միայն կացուցանել ազգի փոխանորդքը։ Դորանց պահանջումէին Պարլամենտքը, դոցա ցանկանումէր ազգը, դորանց կամէր թագաւորը և թոյլ տուեց։ Ափսո՜ս, որ տէրութեան դժուարութիւնը արծաթի մասին պատահեցաւ

ազգային փոխանորդների վերստին նորոգութեան միջոցին և ասես թէ առիթ էր տուել դոցա դուրս երևելուն։ Բայց հարկաւոր եղած վերանորոգութիւնքը կարող էին մի այդպիսի վերանորոգող իշխանութենից միայն յառաջանալ։ Ազգային փոխանորդների միւսանգամ հանդէս բերվիլը, եթէ տեսանենք այդ բանը ինքն ըստ ինքեան, չէր մի քաղաքական յեղափոխութիւն, այլ մանաւանդ թէ դորանով յետ տարվեցաւ տէրութիւնը դէպ ի իւր առաջին կարգերը։ Յառաջուց թագաւորը իւր քաղաքական իշխանութիւնը բաժանած էր ազգի փոխանորդների հետ. պատճառ, նոցա գործակցութիւնը օրէնսդրութեան և հարկահանութեան մէջ թոյլ էր տուած օրէնքով, այլ միայն անտես էին արված թագաւորից և մոռացված էին ազգի կողմից։ Միւսանգամ կենդանանալով ազգի փոխանորդքը, կարող էին ժողովրդի պիտոյքներին և պահանջմունքին մի զօրաւոր խօսող բերան տալ, արքայական աթոռը շըրջապատել ճշմարտութեան լուսովը, նորան ցոյց տալ և մօտեցնել իւր ճշմարիտ բարեկամքը, ինչպէս և հեռացնել նորանից իւր թշնամիքը։ Դոքա կարող էին քանքարաւոր մարդերին, հասարակաց հոգուն, ամէնայն բանագիտութեան համար մի գեղեցիկ ներգործութեան ասպարէզ բանալ և նոյն միջոցին լինել դաստիարակիչ դպրոց ազգի։ Օրէնսդրութիւնը և հարկահանութիւնը բազմակողմանի խորհրդածութեան տակ ընկնելով, պատշաճապէս կատարելագործված կը լինէր։ Բայց այս փրկաւէտ պտղաբերութիւնը յառաջացնելու համար, հարկաւոր էր, որ ազգի փոխանորդները ինչպէս դոքա եղած էին հին կարգերով, այժմուս մի քանի թեթև փոփոխութեամբ որ չէին յեղաշրջելու նոցա էութիւնը, կազմակերպվելով պահվէին իւրեանց օրինապատշաճ չափի ու սահմանի տակ։ Ուրեմն թագաւորի հաւանութիւնը ժողովել ազգի փոխանորդքը, չէր ինքն ըստ ինքեան մի Րեվօլիւցիա և չէր ևս առաջնորդելու դէպ ի այդ, եթէ այս հաւանութենից յետոյ, իսկոյն ներս խառնված չլինէին ախտերը և կառավարութեան մոլորութիւնքը, նոյնպէս ևս եթէ ստորադրեալների յանցանքը առիթ տուած չլինէին ապականիչ անցքերի, դուրս գանչելով և թևաւորելով դորանց։

Թագաւորը խոստացաւ հանդիսապէս, ազգային փոխանորդքը ինչքան կարելի է շուտով ժողովել։ Մի պատշաճաւոր, այո մի հարկաւոր որոշումն, որ ոչ թէ պիտոյ է յառաջացնէր Րեվօլիւցիան կամ թէ ահա սկսանէր նորան, ինչպէս շատերը հաստատումեն, այլ մանաւանդ թէ կարող էր շրջանկատ վերանորոգութեամբք բժշկել Ֆրանսիան ամենայն արմատացած ցաւերից, և արդարև բժշկած կը լինէր, եթէ տէրութիւնը այս մեծ առաջարկութիւնը իրագործելու միջոցին չարած լինէր սխալանք սխալանքի վերայ։ Ազգային փոխանորդների

ժողովը փրկաւէտ ու օրհնաւէտ կացուցանելու համար, այլև դորա վտանգներից փախչելու, պիտոյ է թագաւորը և կառավարութիւնը միաւորէին բանագիտութիւն ու զգուշութիւն զօրութեան և հաստատութեան հետ, և, ժողովը դեռ ևս չեղած, այլև ժողովը սկսած, պիտոյ է այնպէս նախապատրաստէին և հոգաբարձութիւն գործէին, որ այս բարի անօթը չգտանէր մի սատակիչ զէնք ընդդէմ ամենայն բարի բանի։ Բայց երբ որ սորա ներհակը արեցին, յառաջուց չզգուշացան այնպիսի անցքերից որ կարող էին պատահել, արժանից վեր յոյս դրեցին կառավարութեան հնարների վերայ և հանգամանքների կարողութիւնը չհասկացան. երբ որ չափից դուրս երկիւղ կրեցին հասարակաց կարծիք ասած բանից և այդ երկիւղին անձնատուր եղան, այնուհետև ազգային փոխանորդների ժողովը հեշտ կարող էր կործանիչ լինել։ Ի՛նչ բան աւելի վտանգաւոր էր քան թէ կամայաբար մի օրինապատշաճ իշխանութիւն վերստին կարգել, մի այդպիսի ներգործող կարողութիւն հանդէս հանել, երբ որ սրտերը ընդհանրապէս խմորված էին, և անպատրաստ ու անզէնք դէմ կենալ նորան։ Գուշակելի էր ահա, որ այդ իշխանութիւնը կարող է թշնամաբար ներգործել ընդդէմ ներկայ կարգերին, այժ ներգործելու է այդպէս, եթէ արքայական աթոռը իւր ժամանակին գործ չդրեց հարկաւոր հնարները իւր անձը պահպանելու և պաշտպանելու, և չաշխատեց այն ահարկու վնասողական զօրութիւնը, որ կարող էր գտանալ ընդդէմ նորան, անգործ կացուցանել նոյն իսկ արմատի մէջ և թուլացնել նորա կապերը։ Կարող չէ՞ր կառավարութիւնը այսպէս ընթանալ, չէ՞ր նա գիտակից իւր հարկաւոր գերադանցութեանը. կամենում չէ՞ր կամ թէ չէ՞ր կարող մի այդպիսի խորհուրդ յառաջ տանել, ապա պէտք էր թագաւորին զգուշանալ, ազգի փոխանորդքը չժողովել. պատճառ, դորանով տալիս էր նա բոլոր ախտերին և իւր բազմաթիւ թշնամիների դիտաւորութեանը մի օրինաւոր սիւն հաստատութեան, որ անպատճառ պիտոյ է հասուցանէր նոցա մի տարապայման կարողութիւն։ Առանց մի այդպիսի կենսական կենտրոնի որ ցան և ցիր խմորական նիւթերին ցուցանումէր մի հնար կապակցութեան և միաւորութեան, դժուար թէ յառաջացած կը լինէր տէրութեան վերանորոգութիւնը, բայց չէր լինելու մի Ռեվօլիւցիա։ Աղմուկ ու խռովութիւն թագաւորութեան մի մի տեղերում չէին պակասելու, բայց տէրութեան յեղաշրջութիւնը անկարելի եղած կը լինէր։

Ինչ բան որ այսպիսի հանգամանքների մէջ պիտոյ է պատահէր և գործվէր, կամ թէ չէ պիտոյ պատահէր կամ գործվէր, դորա իսկ ներհակը ընտրեցին և իրագործեցին։ Կարելի է նշանակել շատ միջոցներ, երբ կառավարութիւնը կարողացած կը լինէր զգուշանալ այն վնասից որ գա-

լու էր Ֆրանսիայի վերայ, բայց նա սխալանքով ու անհոգութենով տեղիք տուեց նորան։ Ամենեին պարզ հնարներ, գործ դրած իւր ժամանակին, կարողացած կը լինէին այն փրկաւէտ ժողովը ազգային փոխանորդների պահպանել ամենայն վատթարութեան երեսից, և բժշկական դեղը երբէք չէր դառնալու մի կործանական թոյն։

Երբ որ ազգային փոխանորդների մասին որոշված էր բանը, պարտ էր թագաւորին, և թագաւորին միայն, հին ձևերը և նոր իրողութիւնքը հասողութեամբ կշռելով, այնքան յեղափոխել նորանց ինչքան հարկաւոր էր, առանց անտես առնելու փոխանորդական կարգերի հիմնական կանոնը, նոցա բաժանակարգութիւնը և յարակցութիւնը արքայական աթոռի հետ։ Բայց փոխանակ այսպէս ընթանալու, հրաւիրեցին հանդիսաբար բոլոր Ֆրանսիացոց ժողովուրդը, որ այն խնդիրքը թէ ազգի փոխանորդները ի՛նչպէս պիտոյ է կազմակերպվէին և ի՛նչպէս պիտոյ է լինէր նոցա օրինապատշաճ գործակատարութեան շրջանակը, յառաջ բերեն ժողովրդի դատաստանի առաջև, պատասխան տան նոցա, և բազմութեան կարծիքը հրատարակեն։ Այս հրաւիրանքը էր մի հրապարակական պահանջողութիւն, որ հակառակ կողմերը դուրս գան դէպ ի պատերազմ։ Այս ընթացքով մերկանդամ ցոյց տուեց և բարձրաձայն քարոզեց տէրութիւնը, թէ ի՛նչ դժուարութեան, տարակուսանքի և թուլութեան մէջ էր ինքը. նա յառաջացրեց մի ընդհանուր հրատարակութիւն խորհուրդների, հայեցուածների և ախտերի. ինչ որ դեռ ևս խմորվումէր ծածուկ, այնուհետև դուրս թռաւ մի ահարկու կերպով։ Ազատամիտ մարդիկը ծանօթացան միմեանց հետ, զարմացան և ուրախացան իւրեանց մեծաթիւ բազմութեան վերայ և ասես թէ մի ընտրական խնամխօսութեամբ (*) զուգաւորվեցան կացուցանելով մի ամբողջութիւն։ Այս կողմնակցութիւնը համարձակվեցաւ յղանալ իւր մէջ ամենավստահ խորհուրդներ և հրատարակել շատ անամօթ խօսքեր, և մնայ անպատիժ։ Միապետութեան կուսակիցքը ամենեին տարբեր ու ջոկ հոգով լցուած, հանդէս եկան դոցա ընդդէմ։ Երբ որ այդ երկու կողմերը իւրեանց կարծիքը միմեանց հասկացրել էին, իւրեանց

(*) Այս ընտրական խնամխօսութիւնը, որ ասվումէ Քիմիականութեան մէջ ֆրանսիարէն affinité élective, գերմաներէն Wahlverwandtschaft, է այն ազգակցութիւնը մարմինների մէջ, որ օրինակ, մի երրորդ նիւթ Գ միաւորվումէ երկու Ա և Բ զուգաւորված մարմինների Ա-ի հետ և ստիպումէ Բ-ն, որ հրաժարվի, ուրեմն այդ երկուքից որպէս թէ ընտրումէ Ա-ը, որովհետև խնամի է նորա հետ։ Գերմանացոց բանաստեղծ Գեօթէն, այս ըմբռնողութիւնքը գործ է ածել և այլաբանօրէն մարդերի և նոցա հոգու և սրտի որպիսութեան վերայ, իւր գրուածի մէջ, որ ասվումէ die Wahlverwandtschaften (ընտրական խնամութիւնք)։

առաջնորդող կանոնքը և իւրեանց դիտաւորութիւնքը հրապարակով խոստովանած էին, այնուհետև բացվեցաւ նոցա մէջ մի կատաղի պատերազմ։

Այս սխալանքի վերայ յաւելացուցին մի այլ սխալանք, որ ևս աւելի վնասակար կացուց առաջինը, ըստ որում նորա հետևանքներին աւելի մեծ ասպարէզ բացեց։ Փոխանորդների ընտրութեան միջոցին զգուշանալու դաւաճանութենից, երկպառակութիւնը հեռի պահելու կամ թէ խափանելու և հսկելու այն բանի վերայ, որ ևս առաւել չը սաստկանար խռովութիւնը սրտերի մէջ, որ առանց դորան ևս բաւական մեծ էր, շատ հարկաւոր եղած կը լինէր, մի կարճ ժամանակ միայն թողուլ փոխանորդների հրաւիրելու և ժողովելու միջոցումը։ Նորա փոխանակ, թոյլ տուեցին երկու ամսերի միջոցումը անց կենալ հինգ ամիս, որ կորած չմնացին վատթարամիտ մարդերի խորհուրդների համար։ Ախտերը գրով ու խօսքով օրէ օր աւելի բորբոքվեցան. ամէնաթունաւոր բամբասանքներ արքայական տան վերայ, Ազնուականների և Հոգևորների վերայ տարածվեցան ժողովրդի մէջ. ակնկալութիւնքը, յոյսերը, պահանջողութիւնքը չգիտէին ոչինչ սահման, և այն գաղափարը, թէ կարելի է միայն օգնել տէրութեանը, ամէնևին կերպարանափոխ առնելով նորան, օր ըստ օրէ աւելի արմատ բռնեց հասարակաց կարծիքի մէջ, և փոխանակ ճանապարհ պատրաստելու պատշաճաւոր վերանորոգութենների, օրէ օր աւելի փակեց այն խաղաղ, օրինապատշաճ ճանապարհը, որով միայն հնարաւոր ու յառաջադէմ կարող էին լինել նոքա։

Ցաւելի բան էր, որ Թագաւորի խորհրդականքը իւրեանց մէջ և միմեանց հետ իսկապէս անմիաբան էին, թէ ինչպէս պիտոյ է ազգային փոխանորդների կազմակերպութիւնը և խորհրդակատարութիւնը լինէր։ Շատ ու շատ հարկաւոր էր, որ, ինչքան թոյլ էին տալիս միայն սեփականութեան և անձնաւորութեան փոփոխված որպիսութիւնքը, անխախտ պահվէին հին ձևերը։ Թագաւորը միայն ունէր իշխանութիւն վճիռ տալու։ Բայց սորա փոխանակ, երբ որ անթիւ ու անհամար թեթև գրուածներով հաստատված էր կարծիքը ընդդէմ հին կարգերին, ժողովեց Թագաւորը ազգի մեծամեծքը (les Notables), որ հարցանէ նոցա կարծիքը ազգային փոխանորդների կազմակերպութեան մասին։ Յառաջուց արդէն կարելի էր իմանալ, որ նոքա յայտնելու էին իւրեանց համաձայնութիւնը այն սիրելի գաղափարին որ պատկանում էր առաւել մեծ բազմութեանը, այսինքն թէ պիտոյ էր նոյնքան փոխանորդք տալ երրորդ ժողովրդակարգին (քաղաքացոցը) ինչքան երկու միւսերին միասին. կէս մի որ և քաղաքացիքը վառվելու էին նորասիրութեամբ,

և կէս մի երկիւղ կրելով կամ թէ պատուելով մայրաքաղաքի ձայնը և ժամանակի կարծիքը։ Երրորդ ժողովրդակարգի փոխանորդների կրկնապատկութիւնը որոշվեցաւ. այս սահմանադրութեամբս նորա պահանջողութիւնքը ստացան մի նոր սաստկութիւն. նա դերակշիռ հանդիսացաւ բոլորովին. այս սահմանադրութենից բացայայտ էր ահա, որ ղեկը կառավարութեան ձեռքից անց էր կացել կամ թէ անց կենալու էր նորա ձեռքը։ Եթէ կամենումէին փոխանորդների ժողովի մէջ կազմակերպել մի հզօր, ամենայաղթող աշխարհակալութեան կարողութիւն որ վեր ի վայր կործանէ բոլոր ներկայ բարեստաց իրաւունքները, այնուհետև կարելի չէր հնարագործել աւելի յարմարաւոր ճանապարհ, քան թէ դա։ Բայց միտ դնելով սրտերի տրամադրութեանը այն միջոցին, գլխաւոր բանը լինելու էր հաստատել մի պահպանողական սիւն, տէրութեան հիմքերը, թագաւորի գերագոյն իշխանութիւնը և օրինապատշաճ սեփականութիւնը ապահով ու անխախտ կացուցանելու, առանց փակելու հարկաւոր բարեկարգութենների ընթացքը։ Բայց երրորդ ժողովրդակարգի փոխանորդների կրկնապատկութիւնը չլինեց այս բանը գրեթէ անհնարաւոր։ Պատճառ, ամենայն մարդու, որի միտքը նախապաշարված չէին, պիտոյ է լուսափայլ լինէր որ այն կրկնապատկութիւնը աւելորդ էր, եթէ ազգի փոխանորդքը, ինչպէս յառաջ, ամեն մինը իւր համար պիտոյ է տային իւրեանց ձայները. բայց եթէ նորա ներհակը պատահէր, և ազգի փոխանորդքը մի ժողովի մէջ միաւորվելով և միախառնվելով տային իւրեանց ձայնը, այնուհետև այդ կրկնապատկութիւնը ոչնչացնելու էր բոլոր հին քաղաքական կարգերը և կարող էր անչափ վտանգաւոր լինել որպէս արքայական աթոռին, նոյնպէս և երկու միւս ժողովրդակարգերին։

Այս հիմնական սխալանքը առնելու յետոյ, դեռ ևս կարելի եղած կը լինէր անվնաս կացուցանել նոցա կործանական հետևանքների մի մասը, եթէ զգուշութիւն գործ դրած լինէին, ժողովրդի փոխանորդքը ժողովելու Փարիզից հեռաւոր, մի չափաւոր մեծութեամբ քաղաքի մէջ, ուր նոքա հանդարտ, մայրաքաղաքի ընկերական ժողովների (սալոնների, կլուբների, զբօսարանների) ազդեցութենից ազատ, մի անհամար ամբոխի աղաղակից ու ֆիզիկական բռնութենից անկախ, կարող էին իւրեանց ծանրակշիռ գործը սառնարիւն խորհրդակատարութեամբ յառաջ տանել և իւրեանց սուրբ պարտականութիւնքը լցուցանել։ Առաւել վտանգաւորը էր, մի կողմից այն, որ ազգային փոխանորդները հպատակվեցան մայրաքաղաքի կրթեալ ու ապականեալ մասնի տարապայման կարծիքների հետ, միւս կողմից նորա անկիրթ, կոպիտ, վայրենի արատաւոր ժողովրդի բազմութեան հետ։ Այսպէս լինելով բա-

նը, այնուհետեւ հարկաւոր էր, որ ժողովը փոխանակ հրամայելու, ինքը հնազանդվէր. ժողովը պիտոյ է Թագաւորեալ սուտ վարդապետութեններին կցորդ լինէր և ընդունէր դորանց. պիտոյ է յանցանքներ յառաջանային այս վարդապետութեններից. ժողովը և մայրաքաղաքը պէտք է միշտ փոխադարձաբար ներգործէին միմեանց վերայ մի շատ կործանական ազդեցութեամբ, գերակշիռ մնալով մայրաքաղաքը։ Ազգի փոխանորդքը գրեթէ չկարողացան ազատ մնալ այն վտանգից որ էր, կամ մոլորութենների և ախտերի հոսանքի հետ որ Փարիզի մէջ յարուցանումէր ահա բարձր ալիքներ, յօժարակամ լող տալ, կամ թէ իւրեանց անձը թողուլ այդ հոսանքի կատաղութեանը և ջարդուփշուր լինել։ Կառավարութիւնը կարծումէր խափանել այս անյարմարութիւնը, ժողովելով ազգի փոխանորդքը Վերսայլ քաղաքի մէջ. բայց մի շատ ձախող ճանապարհ էր դա. նոյն իսկ Փարիզը եղած կը լինէր աւելի փոքր վտանգաւոր։ Պատճառ, այդ հեռաւորութիւնը բաւական մեծ էր, որ ժողովրդի բորբոքված երեւակայութիւնը լցուցանէր կասկածանքով ու երկմտութեամբ այն բանի մասին, որ լինումէր կամ թէ պատրաստվումէր Վերսայլումը, և այդպէս նորան մասնակից անէր այն ամենայն բամբասանքներին որ լինումէին արքայական պալատի վերայ։ Միւս կողմից դարձեալ, այնքան փոքր էր հեռաւորութիւնը, որ ժողովի և մայրաքաղաքի փոխադարձ ազդեցութիւնը միմեանց վերայ անփախչելի էր և ամբոխի բռնակալութիւնքը շատ հեշտ կարելի էին։

Այս սխալանքների վերայ յաւելացաւ յետոյ այն գլխաւոր սխալանքը, որ կառավարութիւնը բանալով ազգային փոխանորդների ժողովը, անզգուշութեամբ, առանց մի որոշեալ, հաստատուն, խորհրդաւոր նպատակի անվճիռ թողեց մեծամեծ խնդիրներ, որ առաջին խորհրդակցութեան մէջ արդէն անպատճառ պիտոյ է դուրս երևէին, որ և իւրեանց պատասխանիքով միասին պիտոյ է յառաջընթաց լինէին խորհրդակցութեանը։ Թագաւորը միայն իշխանութիւն ունէր, այլև պարտական էր այդ խնդիրքը յառաջ բերել, քննել, լուծանել և իւր դատավճիռը ծանուցանել ազգային փոխանորդներին նոցա առաջին ժողովի մէջ։ Այս խնդիրների մէջ նախակարգը այն էր, արդեօք պիտո՞յ էր փոխանորդներին ջոկ ջոկ, իւրաքանչիւրը առանձին, թէ միաբանութեամբ ասել իւրեանց կարծիքը։ Այդ խնդիրը թողվեցաւ նոյն իսկ փոխանորդների խորհրդարարութեանը, թէև ամեն մինը կարող էր պայծառապէս հասկանալ, թէ խորհրդարարութեան կերպը պիտոյ է արդէն վճռած լինէր, որ կարողանային նոքա այս խնդրի վերայ խորհուրդ կատարել և ասել իւրեանց կարծիքը։ Նոքա պիտոյ է խելամուտ լինէին, որ այս խնդիրը տալու է առաջին նիւթը երկպառակութեան փոխանորդների

մէջ, և թէ գործ հետ կցորդվելու էին շատ վտանգաւոր բացասութիւնք և անցքեր։ Բայց այս առանձին, խորհրդարարութեան կերպին պատկանեալ իրողութեամբը չէր վերջանալու գործը։ Թագաւորին պարտ էր իսկոյն հանդէս բերելով մի քաղաքական կարգադրութեան առաջարկութիւն, բանալ ազգային փոխանորդների ժողովը․ եթէ մի այդպիսի առաջարկութիւն յանդիման կացուցանէր այն հին փոխանորդական կարգերի հիմնական կերպարանքը, որ դարաւոր ժամանակներով սովորական էին եղած Ֆրանսիայի մէջ, և ներս բերած լինէր այն հարկաւոր փոփոխութիւնքը միայն, որ ցուցանումէր և պահանջումէր ներկայ դրութիւնը լուսաւորութեան, կրթութեան, սեփականութեան և գոյքի․ այնուհետև հին քաղաքական կարգերի մեծ մասը պահպանված կը լինէր, յարմարվելով ժամանակի պիտոյքին, և նոցա էութիւնը բարեխառնվելով նոյնքան ևս աւելի ամրացած կը լինէր։ Մի այդպիսի առաջարկութիւն փոխանորդների ժողովը բացվելու միջոցին ուրախութեամբ ընդունված կը լինէր։ Հակառակ կողմերը դեռ ևս կերպարանված չէին, դեռ ևս չէին յայտնած իւրեանց կարծիքը և ոչ ևս թշնամացած միմեանց հետ։ փոխանորդները եկան գաւառներից, թէև ժամանակի հոգովը շարժված և այս կամ այն կարծիքը ընդդէմ ներկայ կարգերին իւրեանց մէջ հաստատած․ բայց դեռ ևս չգիտէին միմեանց, դեռ ևս կարողացած չէին փոխադարձաբար քննել միմեանց, խօսել իրեարու հետ։ Նոքա մի մասով օտար էին մայրաքաղաքին և դեռ ևս պատրաստված ու կաշառված չէին Փարիզի բազմութեան ձայնի գլխաւոր առաջնորդների ձեռքով․ Նոքա դեռ ևս հաղորդակցութիւն ունեցած չէին ժողովրդի բազմութեան հետ և չգիտէին, թէ ինչ ահարկու զօրութիւն է գտանվում ամբոխի մէջ և ինչպէս հեշտ կարող էր այս վայրենի, անսանձ ամբոխը բորբոքվել ընդդէմ ընկերական կարգին և գործ դրվել դէպ ի չարը։ Ուրեմն վատթարամիտքը փոխանորդների մէջ դեռ ևս տեղեակ չէին այս շարժարաններին որ կարող էին սպասաւորել նոցա․ բարեմիտները դեռ ևս առիթ չէին ունեցած երկիւղ կրելու այս, դեռ ևս նոցա անծանօթ, ահաւոր կարողութենից․ մի մասը չէր տակաւին համարձակված, միւսերը չէին դեռ ևս համեստացած․ չարը տակաւին ծանր և զգոյշ քայլով սողումէր մթի մէջ․ բարին, հասարակօգուտը, բանաւորը, օրինապատշաճ իշխանութեան ձեռքով իւր ժամանակին գործ դրված, որոշակի և զօրաւոր կերպով յառաջ մատչելով, անտարակոյս գտած կը լինէր ընդունելութիւն և հնազանդութիւն։ Դիցուք թէ մի շրջանկատ, առաջարկութիւն հին քաղաքական կարգերից պիտանին ու օգտակարը պահպանելով և նոցա հետ զհետէ կատարելագործութեանը միտ դնելով, չէր գտանելու մի ընդհանուր հաւանու-

թիւն, այնու ամենայնիւ կարողացած կը լինէր միապետութեան բարեկամներին սպասաւորել որպէս գործակցութեան դրօշակ և որպէս կենտրոն միաւորութեան։ Բայց սորա փոխանակ, կառավարութիւնը իւր անաջողակութեամբ և փոքրոգութեամբ անփոյթ արեց իւր անձը. չմօտեցաւ մեծամեծ խնդիրներին, կուրօրէն թոյլ տուեց դորանց ախտերին կամ թէ թողեց դիպուածի կամքին։

Փոխանակ ազգի գործակալներին ցուցանելու և հրամայելու մի օրինապատշաճ, ամուր և յաջողակ ձեռքով նշանակած շաւիղ, կառավարութիւնը բացեց նոցա առաջև մի անորոշ, անսահման, անչափելի ասպարէզ, որպէս թէ ոչինչ երկիւղի տեղիք չունէր սրտերի խռովութենից, ճանապարհից դուրս շեղած գլուխներից և ժողովրդի արատաւոր, դեռ ևս վարագուրված խռովեցուցիչներից։

Թագաւորը ծանուցումն անելով 1787 թուականի Յունիսի 20-ին, աշխատեց տալ գործին իւր ճշմարիտ ընթացքը. բայց այս հնարը գործ դրվեցաւ շատ անագան և անպատշաճ կերպով։ Իրողութենների դրութիւնը շատ փոփոխված էր. երկու ամիս անցած էին ազգային փոխանորդների ժողովից յետոյ. սիրտերը բորբոքված էին այն խնդրի մասին, որ եղած էր ժողովրդի գործակալների զատուցանելու վերայ. նոքա մի տևողական կռուով արդէն դառնացած էին միմեանցից։ Ազգի գործակալքը յառաջուց լինելով իրեարու օտար, ծանօթացած էին միմեանց հետ և դասակարգված էին նայելով իւրեանց ընտրական խնամութեանը, որպէս առանձին բաժիններ։ Այն բաժինը, որ երազումէր կամ թէ կամենումէր մի յեղաշրջութիւն ներկայ կարգերի և մի ամենևին վերածնելութիւն Ֆրանսիայի, քաջ գիտէր իւր կարողութիւնը և զգումէր թէ հասարակաց կարծիքը ունի իւր համար որպէս սիւն ամրութեան, և շատ հեշտ կարող էր գործ դնել ֆիզիկական զօրութիւնը որպէս իւր խորհուրդների շարժարան։ Արքայական օգտին պատկանեալ կողմը ծանուցել էր իւր դիտաւորութիւնքը, նոյն և յայտնել էր իւր երկմտութիւնը և թուլութիւնը։ Այնու ամենայնիւ արքայական խորհրդարարութիւնը գուցէ թէ չէր մնալու առանց ազդեցութեան, և ոչ ևս արքայական ծանուցումը լինելու էր անօգուտ, եթէ Նեքքերը ներկայ եղած լինէր այս խորհրդարարութեան մէջ և թագաւորը այն հայրական յորդորանքի հետ, որ ուղղեց դէպ ի ազգային փոխանորդքը, և այն մեծամեծ շնորհների հետ որ առաջարկեց նոցա, միաւորած ու ցոյց տուած լինէր հաստատութիւն և ներգործականութիւն։

Նա նոյնքան ևս կարողութիւն և իրաւունք ունէր այդպէս ընթանալ, ինչքան որ յունիս ամսի ծանուցումը յարմարաւոր էր լցուցանելու բոլոր ցանկութիւնքը բարեմիտների և բոլոր պահանջողութիւնքը

ազատութեան ճշմարիտ բարեկամների։ Այդ ծանուցումը, եթէ միտ դնենք դորա խորհրդին և բովանդակութեանը, բաց ի ձևից, շատ բանով հաւասարաձայն էր յետոյ ժամանակի եղած Շարթ անունով հրովարտակին (*)։ Երեք ժողովրդակարգերը թէպէտ պահպանվեցան, բայց էապէս բարեխառնվեցան։ Այս կարգաւորութիւնը որով ազգը պիտոյ է հանդիսացնէր իւր անձը, ունէր մի քանի նախապատւութիւնք. ոչ թէ միայն հիմնած էր նա իրողապէս եղած անցքերի վերայ, այլ և էր նա մի ձև, որ համեմատ էր թէ ներկայ կարգերի պահպանութեանը և թէ ընկերութեան յառաջադիմութեններին. նա միջնորդաբար կապակցումէր այն տեղականութիւնը որին, կարօտ է իւրաքանչիւր տէրութեան գոյութիւն, այն յառաջադէմ շարժողութեան հետ որ նոյնպէս հարկաւոր է ամենայն տէրութեան։ Այդ հրովարտակը մօտաւոր էր հին իրաւունքներին, այդու ամենայնիւ աչք դարձուցանելով նորակերպված կամ թէ նորակերպվող իրողութենների վերայ այն օրերին Ֆրանսիայի մէջ։ Բոլոր կատարելագործութիւնքը, որոնց կարօտ էր աշխարհը, կարելի էին, եթէ ազգային փոխանորդները, ինչպէս կարգադրած էր այն ծանուցման մէջ, ընդհանուրին վերաբերեալ նիւթերի վերայ խորհուրդ կատարէին և սահմանադրէին ամենեքեան միասին, բայց այն խնդիրների վերայ, որ պատկանումէին նոցա առանձնական օգտին, ջոկ ջոկ, իւրեանց դասակարգերի մէջ։ Ամենայն բարի բան կարելի էր յուսալ այս ձևից, այն պատճառով, որ երկու առաջին ժողովրդակարգերը հրաժարվել էին իւրեանց հարկերի ազատութենից։

Նոյնպէս ահա, թէպէտ յանդիմանութեան արժանի են այն ձախող գործերը և սխալանքը որով տէրութիւնը պարտական էր կացուցել իւր անձը, դեռ ևս ոչինչ բան անդառնալի կորած չէր։ Անկարգութիւնքը վերացնելու, տէրութիւնը իւր նպատակին մօտեցնելու համար, ամենևին հարկաւոր չէր Րեվօլիւցիա։ Բոլոր վերանորոգութիւնքը որոնց կարօտ էր Ֆրանսիան, կարող էին յառաջանալ Լուդովիկոս տասնևվեցերորդի ձեռքով ցոյց տուած ճանապարհովը։ Այս ազնիւ և անբաղդ թագաւորը առաջարկեց Ֆրանսիացոց, ճշմարիտ, օրինապատշաճ ազա-

(*) Շարթ (Charta) բառովս միջին դարերումը հասկացվումէր ամենայն հրովարտակ. այլև գործածով հասկանումենք այժմ մանաւանդ թէ մի հրապարակական հրովարտակ, որ վերաբերվումէ մի տէրութեան հիմնական կարգերին (այդպէս է և Անգլիացոց Magna Charta տուած օրինադրութիւնը)։ Ֆրանսիայի մէջ, Շարտ, Շարթ կօնստիտիւսիօնել (Charte—Charte constitutionelle) բառերով իմացվումէ հրովարտակը նոր Ֆրանսիայի քաղաքական կարգերի, այնպէս, ինչպէս արքայ Լուդովիկոս տասնևութերորդը 1814 թուակ. որպէս հիմնական օրէնք տուած է Ֆրանսիացոց ազգին։

տութիւնը։ Կարգը և մի կենդանի շարժողութիւն զօրութենների հետ միաբանվելով, կարող էին յարմարվելով ժամանակի պիտոյքին մանկացուցանել հին ձևերը, ներկան անցածի հետ զուգաւորել, աւելի լաւ օրեր ապագայումը հետ զհետէ պատրաստել և հասուցանել Ֆրանսիային բոլոր օգուտները մի ճշմարիտ միապետութեան և մի հարազատ փոխանորդական կառավարութեան։ Բայց ժողովրդակարգերի գործակալների մեծ մասը անձնատուր լինելով ճանապարհից դուրս եկած հասարակաց կարծիքին, չկամեցաւ ընդունել օրինապատշաճ իշխանութենից յառաջացող կարգադրութիւնը։ Դոքա չկամէին ազատութիւնը ընդունել, այլ սուրը ձեռքին ստանալ և հնարաւորել, և մտածումէին թէ պարտ էր նոցա ամենայն ինչ քարուքանդ առնել, որ այդ աւերակների վերայ ամենայն ինչ կարողանային նոր ի նորոյ կերպարանագործել հետևելով իւրեանց կամամտածական (ֆանտաստիկեան) իդէաներին։

Այս սխալանքը և ձախող ընթացքը որ առիթ տուեցին Ռեվօլիւցիային, կշտամբեցինք մեք և չծածկեցինք այն բաները որով կառավարութիւնը մեղապարտ է կացուցել իւր անձը, յաջողութիւն տալով այն զարհուրելի ողբերգական հանդիսին և այն հեշտ փախչելի անցքերին։ Ինչ որ սկսել էին սխալանքը, կերպարանք ստացաւ Ախտերի վայրենի ընթացքովը. կամաւ և գիտութեամբ գործ դրած ամբարշտութիւնը և ամենայն տեսակ յանցուածներ տուեցին դորան իւր լրութեան պսակը։

Փոխանորդներից առաւել մեծ մասնի ամբարիշտ ընթացքը և Փարիզեան ամբոխի բռնաւորական գործերը յուլիս ամսի մէջ, վճռեցին Ռեվօլիւցիան. բոլոր անցքերը որ այս աղետաբեր օրերից յետոյ եկան, էին միայն նոցա հասունացած պտուղքը և պիտոյ է համարվին որպէս յաւելուածք այն գործերի, որով նշանաւոր են այս օրերը։ Կարելի է ասել արդարութեամբ, թէ բոլոր Ռեվօլիւցիան, եթէ միտ դնենք նորա առաջնորդող կանոններին և խորհրդին, կազմ ու պատրաստ էր արդէն, երբ որ երրորդ ժողովրդակարգի փոխանորդքը միաբանվելով միւս կարգերի փոխանորդներից քանի միների հետ անուանեցին իւրեանց անձը այդպիսի ազգային ժողով (assemblée nationale) և յայտնեցին իւրեանց անձը այդպիսի անունով։ Այդ ընթացքովը ահա քարոզեցին նոքա, թէ հին քաղաքական կարգերը կործանված են, թէ արքայական իշխանութիւնը չէր գերագոյնը թագաւորութեան մէջ, այլ թէ պիտոյ է տեղի տար միւս աւելի վերին իշխանութեան. թէ կար մի այլ աղբիւր քաղաքական իրաւունքի և օրէնստուութեան, քան թէ այն ներկայ միապետական կարգը իրերի, որ դարաւոր ժամանակներով

*տրքաշանված էր Ֆրանսիայի մէջ. Դոքա մոռացել էին թէ նոցա ըն-
տրութիւնը, նոցա կազմակերպութիւնը, նոցա գոյութիւնը, նոցա իրա-
ւունքը և գործակատարութիւնը էր միայն թագաւորի կամքի շնորհը.
Եթէ այս կամքը չեղած լինէր վճռական, հրամայող, օրինապատշաճ,
գերագոյն կամք, ապա և նոքա կարող չէին օրինապատշաճ կերպով
հանդէս գալ. նոքա լինելով ոչնչից յառաջած, չիք կը դառնային
նոյնպէս. Նոցա իրաւունքը հետևումէին նոցա պարտականութիւններից
և հիմնաւորվումէին սոցա վերայ. և երկուքը էին միայն դուրս բղխած
արքայական իշխանութենից. Թագաւորը միայն կարող էր այդ իրա-
ւունքը սահմանափակել և այդ պարտականութիւնքը որոշել. Բայց
նոքա դուրս գալով իւրեանց չափից, դարձուցին իւրեանց պայմանական,
փոխառած և յանձնած իշխանութիւնը ընդդէմ արքայական աթոռին
որից ամենայն բան ստացել էին, և իւրեանց պարտականութիւնը դրե-
ցին այն բանի մէջ, որ իւրեանց կարծիքապէս նախնական իրաւունքը
բոլոր միւսերից վերադաս առնեն և ոչնչացնեն նորանց. Այս ամբարիշտ
գնացքը արդարացնելու համար, հանդէս բերեցին այն վարդապետու-
թիւնը ժողովրդի գերագոյն իշխանութեան մասին, որպէս թէ սա էր մի-
այնակ, յաւիտենական, մաքուր աղբիւրը ամենայն օրինապատշաճ իշխա-
նութեան. մի հիմնական, որ իւր ահաւոր անորոշութեամբը ոչինչ
սահման, ոչինչ հաստատուն ուղղութիւն, ոչինչ կանոն, ոչինչ չափ ոչ
խոստովանումէ և ոչ կարող է խոստովանել. մի ամենակարող զօրու-
թիւն, որ ոչինչ բանով չկապած, ոչինչ բանով չկանոնաւորված, կա-
րող է ամենայն ինչ ստեղծագործել և ամենայն ինչ կործանել, բայց
ոչ կարող է և ոչ հարկաւոր է համարում հաշիւ տալ կամ իւրեան
կամ թէ միւսերին, իւր աւերման կամ թէ շինութեան մասին. մի կա-
մապաշտական ամենակարողութիւն, որ Կռոնոսի պէս ծնուցանումէ
զաւակներ, որ յետոյ կլանէ նորանց. մի ամենակարողութիւն որ բնա-
կումէ մի վերացական էակի մէջ, որ ամենայն տեղ և ոչինչ տեղ չկայ,
և ժողովրդի անունով կամայապէս շինվումէ.*

*Արժանի է մտառութեան, որ ազգային փոխանորդքը, ինքնիշխա-
նաբար փոխելով իւրեանց անձը մի ազգային ժողով, և կամենալով
իւրեանց յափշտակութիւնը վարագուրել ժողովրդի գերագոյն իշխա-
նութեան տակ, արժանի է մտառութեան, որ այդ մարդիկը ոտնակոխ
արեցին քարոզած կամքը նոյն ազգի բազմութեան որ ընտրել էր դո-
րանց իւր փոխանորդք. Պատճառ, աւելի մեծ մասը իւր տուած յան-
ձնարարութիւնների մէջ թէպէտ պատուիրել էր նոցա պահանջել կամ
թէ դէպ ի կատարումն ածել շատ անկարգութիւնների արտաքսելը և
այս ու այն բարեկարգութիւնների ներս բերելը, բայց նոյն միջոցին*

պարտք էին դրել նոցա վերայ, որ միապետական սկիզբը և փոխանորդական կառավարութեան կարգը ոտքի վերայ պահպանեն։ Ուրեմն ազգային ժողովը քրէական մեղքով մեղանչեց ոչ թէ միայն դէպ ի թագաւորը, այլ, խօսելով նոցա բերանից, դէպ ի նոյն իսկ ազգը, ըստ որում սեփականեց իւրեանց մի այնպիսի պաշտօն, որ ոչ Աստուծուց և ոչ մարդերից յանձնած էր նորան։ Այս յանցանքից յառաջացան բոլոր անիրաւութիւնքը, որ ազգային ժողովը հետ զհետէ մի ահարկու շարակցութեամբ և արագութեամբ դուրս երևեցուց։ Ժողովրդի գերագոյն իշխանութեան անհիմն կանոնի խորքից, որպէս մի մշտավառ վուլկանի միջից, բղխումէր անդադար մի հրեղէն հոսանք հեղեղելով Ֆրանսիա, և փլատակելով բոլոր հաստատուն իրաւունքները կառավարութեան, արքայութեան, ընդհանուր ազգի և մասնաւորների։ Այս կործիքական կանոնով ազգային ժողովը ոչնչացրեց բոլոր մինչև այժմ եղած կարգերը և դարձուց Ֆրանսիան մի անապատ դաշտ և երեխայական անձնասիրութեամբ շինեց նորա վերայ այն նոր կարգերի խախուտ և թոյլ տունը, որ պիտոյ է փուլ գար և փուլ եկաւ արդարև, որ տեղի տայ միւս նոյնպիսի առօրեայ կերպարանութեններին։

Այսպէս, եթէ Րէվօլիւցիան, միտ դնելով նորա հիմնական կանոններին, կատարեալ էր արդէն այն օրին, երբ ազգի փոխանորդքը յայտնեցին իւրեանց անձը ազգային ժողով, նոյնպէս, եթէ միտ դնենք նորա գործակատարութեան հնարներին, կատարեալ էր նա այն օրին, երբ ժողովուրդը զինուորված ձեռքով տիրապետեց Բաստիլլէ անունով բանտին։ Այս առաջին փորձը, ֆիզիկական բռնութեամբ և ակնյայտնի ապստամբութեամբ ձեռնտու լինել այն մոլար, կորստական ուսմունքին և սահմանադրութեններին, որ տրած էին Ֆրանսիայի օրէնադիրքը, այս փորձը, ամենայն ընդդիմութիւն ու արգելք, որ խափան էին նոցա օգեղէն մտահայեցութեանը, ջարդել ու փշրել, շուտով կրկին նորոգվեցաւ և գործ դրվեցաւ աւելի մեծ չափով։ Երբ որ խաժամուժ ամբոխը թափել էր միանգամ անմեղ արիւն, այնուհետև դարձաւ նա արիւնածարաւ, և այնուհետև կարելի էր նորան մոլորեցնել, քաջալերել և գրաւել դէպ ի ամենայն չարագործութիւն։ Այսպէս ահա Րէվօլիւցիան դուրս յարձակվեցաւ որպէս մի զինուորված հսկայ, որի գլուխը մի մառախլային փիլիսոփայութեան շոգիներով լցուած և բթացած էր, և որի երկաթի բազուկը ամենայն ինչ վայր էր խորտակում, որ ինչ ընդդէմ էր նորա ֆանտաստիկեան երազների կատարմանը։ Արդարև երկու դար պատրաստել էին նորան ճանապարհ ու նիւթ։ Բայց կառավարութեան սխալանքը առիթ տուեցին նորա ծնանելուն, ամենայն տեսակ մոլորութիւնք, բայց կամայական, ամբարտաւանութենից և փառասի-

րութեննից ազդեցած մոլորութիւնք յաջողեցուցին նորա շուտ աճեցողութիւնը, զանազան կերպ յանցանքներ զարգացուցին նորա զօրութիւնը և նշանաւոր գործեցին նորա քայլափոխքը, մինչև որ դա, իւր չարագործութենների դիզացած ծանրութեան տակ ճնշվեցաւ և վերջացրեց իւր ասպարէզը։

Այսն արդարակշիռ լինելու և դէպ ի նոցա կողմը որ ամենայն տեսակ անարդարութիւնք անխնայաբար ու անամօթաբար արած են, պիտոյ է խոստովանել այս բանը. երբ որ առաջին յանցանքները ազգային ժողովի յառաջացած էին նորա կործանիչ ուսմունքից և անձնասիրական ախտերից, և երբ որ կատարված էին առաջին չարագործութիւնքը ժողովրդի որ սկզբումը մոլորեցուցած և ճանապարհից դուրս հանած, բայց յետոյ ահարկու և հրամայող էր դարձած, այնուհետև թագաւորող կողմը ազգային ժողովի մէջ չէր տիրում աւելի, այլ միւսները բռնաւորապէս տիրումէին նորան. նա ստանումէր իւր շարժողութիւնը հանգամանքներից, փոխանակ սանձահարելու սորանց, և այսպէս այն զառ ի վայր յատակի վերայ, ուր կանգնած էր նա, չկարողանալով պահպանել իւր անձը, օրէ օր աւելի խոր և արագ դահավէժ եղաւ մոլորութեան և ցնորքի անդունդի մէջ։ Իւր վայրենի, կապից արձակած ամբոխը օրէ օր աւելի սիրեց իւր ձեռք բերած սանձարձակութիւնը, և սովորեց ամենազարհուրելի տեսարանների։ Իւր չարագործութեններով աւելի քաջասրտված, յանձն առաւ նա անհաւատալի բաներ, և դուցէ թէ վերջումը ինքը ևս զարմացած էր իւր յառաջադիմութեան վերայ դէպ ի չարը։ Հիմնական սխալանքը որ եղել էր նոցա առաջնորդ, ծնաւ նոր սխալանքներ. ախտերը գնալով գնալով աւելի բորբոքվեցան, նոցա տարապայմանութիւնքը իսկ, տուեցին նոցա կերակուր, տարածեցին բոլոր ժողովրդակարգերի վերայ իւրեանց ուտող մաշող կրակը և յառաջացուցին միշտ նորանոր ախտեր։ Այսպէս, արդարև, Րեվօլիւցիայի ընթացքի մէջ կամայական սխալանքներից և յանցանքներից յառաջացաւ մի տեսակ հարկաւորութիւն, որ իբրև մի վրէժխնդիր Նէմեզիս քաղաքական յեղափոխութեան հեղինակքը ակամայ քարշեց տարաւ իւր հետ. այն հնարաստեղծած գործին, խաժամուժ ամբոխի իշխանութիւնը, ինքը վարժապետ դարձած դասումէր իւր վարժապետը և ազգը, և բաժանվեցաւ երկու կողմ. որոնց մինը անամօթաբար և դժոխական ուրախութեամբ կատարումէր և ամենազարհուրելի գործը, մինչ միւսը և ամենազարհուրելի վիշտը յանձն էր առնում և համբերումէր մի բթասիրտ համբերատարութեամբ։ Ճշմարիտ է, որ և ամենանզովելիքը ազգային ժողովի մէջ դուցէ թէ ահից ու սարսափից յետ փախած կը լինէին, եթէ սկզբումը ցուցած լինէին

Նոցա իւրեանց յանցաւոր համարձակ գործի հետեւանքը։ Նոյն իսկ Ռօբեսպիեռ և Դանթօն ֆրանսիացիքը, եթէ մի վերնագոյն կարողութիւն մի կախարդական հայելիու մէջ, ռեվօլիւցիայի սկզբումը երեւեցուցած լինէր նոցա աչքին իւրեանց կեանքը և վերջը, երկուսը եւս որպէս անկարելի բաներ բաց մերժած կը լինէին իւրեանցից։ Բայց այս տեսակ հարկաւորութիւնը գործերի և նոցա հետեւանքների, որ գոյանումէ ազատութեան չարաչար գործադրութիւնից, չէ կարող ոչ անմեղադիր կացուցանել և ոչ եւս արդարացնել մի այդպիսի քաղաքական ռեվօլիւցիայի հեղինակք, այլ այդ հարկաւորութեան մեղքը եւս մնումէ նոցա վզին և ծանրացնումէ նոցա պատասխանատուութիւնը։ Որովհետեւ մարդս գիտէ, թէ ումանք գործեր որ կարող էր նա անել և թողուլ, միանգամ պատահելով և նորա ձեռքից փախչելով, երբ որ կցորդված էին անցքերի անչափելի շղթայակապի հետ, այնուհետեւ կարող չէին հնազանդվիլ նորա կամքին, այլ անդառնալի իրողութիւնք փոխվելով, ճիւղաւորումէն իւրեանց ներգործութիւնքը անվերջանալի կերպով, ուրեմն պարտական է մարդս զգուշանալ և չհամարձակվիլ յանձն առնուլ առաջին յանցաւոր գործերը որ մի տէրութիւն կարող են դուրս խլել իւր հիմքից ու յատակից։ Բայց եթէ կամաւորապէս պատառել էին այն թումբերը որ սահմանի տակ են պահում խաժամուժ ամբոխի բնութիւնը և ամենացուն ախտերը, այնուհետեւ անհնարին է լինում նոցա, որ արած էին այդ անզգուշութիւնը, ալիքների կատաղութիւնը և հեղեղը որոշեալ սահմանների մէջ պահել, թէեւ նոքա իւրեանց յատուկ գործի վերայ զարհուրած, յօժար էին փորձել այդ բանը։ Եթէ մեք կատարումենք մեր պարտականութիւնը և անումենք այն, ինչ որ հրամայումէ յաւիտենական օրէնքը, ապա կարող ենք խաղաղ հոգով սպասել մեր գործերի հետեւանքին և թողուլ նորանց մի աւելի վերին կարողութեան կամքի. թող այնուհետեւ պատահի, ինչ որ կամի. մեք մեր պարտականութիւնը և ինչ որ կարելի էր մեզ, արած ենք. մնացածի համար չենք պատասխանատու։ Բայց անհաշուելի, մեր իշխանութեան տակ չեղած հետեւանքները մեր գործերի, են արդարեւ, որ մեր սիրտը լցուցանումէն ահ ու դողով, որ եւ պիտոյ է ամենայն զօրութեամբ յետ պահէին մեզ այն րոպէին, երբ որ մեք կամէինք մի յանցաւոր գործ գործել և մոռանալ պարտականութիւն ու արդարութիւն։

Ուշադրութեան արժանի է, թէ Լուդովիկոս տասն և վեցերորդը որ իւր բնաւորութեան թերութիւններով և իւր խորհրդականների անզգուշութեամբ առիթ տուեց ռեվօլիւցիայի, նոյնպիսի վերջ ունեցաւ, որպիսի Կարոլոս առաջինը, թագաւոր Անգլիայի, և ամենեին ներհակ պատճառներից։ Կարոլոսը անգիտացաւ իւր ազգի խնդիրքը և պիտոյքը.

Նա անգիտացաւ նոյնպէս այն փոփոխութիւնքը, որ երրորդ ժողովրդակարգի առաւելացած բարեվիճակութիւնը և կրթութիւնը յառաջացուցել էր ամենայն դրութեան մէջ։ Փոխանակ յարգելու իրաւունքը Պարլամենտների որոնց բերանով ծանուցանվումէր հասարակաց կարծիքը, փորձ փորձեց նա կառավարել առանց Պարլամենտների, մինչև հարկը ստիպեց նորան միւսանգամ ապաստան լինել նորա թևերի տակ. թէպէտ նա այժմ գտաւ այն տեղ զայրացած թշնամիք միայն։ Լուդովիկոս տասն և վեցերորդը մի երկար մոռացութենից դուրս հանեց ազգային փոխանորդները։ Երբ որ այս ապերախտ, ճանապարհից դուրս հանած, վայրենացած ազգային փոխանորդները համարձակվեցան մի անօրինակ յանդգնութեամբ ընդդէմ դուրս գալ արքայական իշխանութեանը, Լուդովիկոսը տեղի տուեց նոցա պահանջողութեններին. Կարոլոսը և նորա հետ միասին կործանվեցան Անգլիայի քաղաքական կարգերը, ըստ որում ընդդիմութիւնը գործ դրեց նա այն տեղ, ուր պատշաճ ու հարկաւոր եղած կը լինէր թոյլտուութիւն։ Սորա հակառակ, Լուդովիկոսը և նորա հետ միասին անբաղդացաւ Ֆրանսիան, որովհետև նա ցոյց տուեց թուլութիւն և այն տեղ, ուր միայն ընդդիմութիւնը արդար ու փրկաւէտ եղած կը լինէր։ Իւր թագաւորութեան առաջին տասն և հինգ տարումը, Կարոլոսը սաստկացրեց իւր հաստատութիւնը մինչև կամակորութիւն. Լուդովիկոսը սկզբից մինչև վերջը մեղմացրեց իւր քաղցրութիւնը մինչև թուլութիւն։ Կարոլոսը ընդդէմ էր և հարկաւոր վերանորոգութենների, ըստ որում կարծումէր, թէ վերանորոգութեան հրեշտակը ունի իւր քամակում Ռեվօլիւցիայի դևը։ Լուդովիկոսը ճակատը դէմ չդրեց Ռեվօլիւցիային, որովհետև իւր բարեացակամ, անսահման քաղցրասրտութենից յոյս ունէր թէ Ռեվօլիւցիայի դևը վերջումը կը յաղթվի վերանորոգութեան հրեշտակից։

Լուդովիկոսը անգիտացաւ մի մեծ ճշմարտութիւն, որ իրաւացի կարելի է համարել թագաւորների բարոյականութեան հիմքը. այսինքն, թագաւորական աթոռի իրաւունքը հիմնած է նորա պարտականութենների վերայ. այն թագաւորը որ քարոզումէ իւր անձը այս պարտականութեններից ազատ, նա և հրաժարվումէ այն իրաւունքներից։ Այնպէս բարեխիղճ, ինչպէս նա էր, չէր ցուցանելու մի այդպիսի վտանգաւոր թուլութիւն, եթէ խելամուտ եղած լինէր այս հիմնական կանոնին։ Բայց նա զոհ բերեց արքայական աթոռի օրինապատշաճ իշխանութիւնը, որպէս թէ այս տեղ խնդիր էր նորա անձնական գործի վերայ, և այնուհետև չմնաց նորան այն կարողութիւնը որ հարկաւոր էր ապահով կացուցանելու տէրութիւնը։

Ս. Նազարեանց։

ԱՍՏԵՂԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ.

(Շարունակութիւն.)

ՏԱՐԵԿԱՆ ՇԱՐԺՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՐԿՐԻ.

Այն անհամար փայլուն կէտերի մէջ, որով ցանած էր երկնակամարը, նշանաւոր են մի քանիքը կէս մի իւրեանց երևելի մեծութեամբ և իւրեանց աղօտակայծ լուսով, և կէս մի այն բանով, որ ոչ թէ միայն բոլոր աստղների հետ միասին շրջաբերվումէն արևելքից դէպ ի արևմուտք, մի օրի մէջ (որ, ինչպէս վերևումը ասվեցաւ, յառաջանումէ երկրի շրջանակութենից), այլև ունին մի այլ շարժողութիւն, որովհետև այն աստղների մէջ, միջատների պէս, դատարկ գունդի վերայ ծանրաքայլ սողումէն դէպ ի այս և այն կողմ, և ըստ մեծի մասին արևմուտքից դէպ ի արևելք, երբեմն դադարումէին, և մի փոքր յետոյ երևումէր թէ յետ էին դառնում դէպ ի հակառակ կողմը։ Արդէն առաւել հին աստեղաբաշխքը նկատած էին հինգ այդպիսի տիեզերական մարմինք որ և այս պատճառով անուանած էին «պլանետք», այսինքն մոլորական աստղներ, մոլորակք, և տուած էին նոցա Յունաց աստուածների անուններ, զոր օրինակ Մերկուրիոս, Վենուս, Մարս, Իւպիտեր, Սատուրնոս, որպէս և միւս լուսատու կէտերը որ իւրեանց կայութիւնը, նայելով միմեանց, երբէք փոփոխում չէին, ասվումէն «անշարժ աստեղք»։ Թէ այս տիեզերական մարմինները ունին մի ճշմարիտ և ոչ թէ միայն երևութական շարժողութիւն, որպէս անշարժ աստղները, պիտոյ է հետևէր այն իրողութենից ահա, որ այդ շարժողութիւնը չէ ամենների մէջ հաւասարատեսակ, այլ մինը շարժվումէ աւելի արագ, միւսը աւելի ծանր, որ մինը յառաջ է գնում, երբ որ միւսը յետ է քարշվում, որ ուրեմն իւրաքանչիւր մոլորակ ունի իւր սեփական, միւսերից զանազան շարժողութիւնը, որ առ հասարակ ամենների մէջ այնպէս խառնափնդոր է, որ չէ կարելի նորանից լուսափայլ կացուցանել գոնեայ երկրի շարժողութեամբ միայն։

Մի նմանապիսի շարժողութիւն կարելի է նկատել լուսնի վերայ մի լոկ գիշերում միայն. այս տիեզերական մարմինը շարժվումէ, օրէ օր շատ զգալի կերպով յառաջ խաղալով դէպ ի ձախ կամ արևելեան կողմը. բայց որովհետև այս շարժողութիւնը 30 անգամ աւելի ծանր է քան թէ օրական շարժողութիւնը որ նա բոլոր աստղների հետ միասին կատա-

րումէ (որովհետև դա յառաջանումէ երկրի շրջաբերութենից միայն, ուրեմն պիտոյ է տարածվէր բոլոր առարկաների վերայ երկրից դուրս), այդ պատճառով շրջաբերվումէ նա այնու ամենայնիւ բոլոր երկնքի հետ միասին դէպ ի աջ կողմ։ Այս շարժողութեան միջոցին պարզապէս նկատումենք, որ լուսինը հեռանումէ այն աստղներից որ կային նորա աջակողմումը և մօտենումէ ձախակողմեաններին. նոցա մօտից կամ թէ նոցա վերայից անց է կենում (սորան ասումեն Աստեղածածկումն՝ որ այնքան յաճախ է ամեն տարու մէջ), և այսօր գտանվումեն նորա աջակողմումը աստղներ որ երէկ նորա ձախակողմումն էին։ 27 օրից յետոյ լուսինը դարձեալ երևումէ նոյն աստղների մօտ և նոր ի նորոյ սկսանումէ կատարել մի և նոյն ընթացքը աստղների միջով։ Այս ընթացքը լուսնի զանազանվումէ մոլորակների շարժողութենից այն բանով էապէս, որ անդադար, գրեթէ հաւասարապէս ուղղած է աջակողմից դէպ ի ձախակողմ, երբէք չէ ընդհատվում յետադնաց շարժողութեամբ և երևումէ մի կատարեալ շրջանակ, որի միջնավայրումը գտանվումէ երկիրը։ Ով որ մեր ընթերցողներից մտաբերումէ վերևումը դրած պատճառները երկրի շարժողութեան մասին, հեշտ, ինքն ըստ ինքեան կարող էր նա տեղիք տալ մտածութեան թէ և այս շարժողութիւնը լուսնի գուցէ թէ երևութական էր միայն, ըստ որում դժուար չէ նոյնպէս բարւոք մեկնել դորան երկրի շարժողութեամբ լուսնի չորս կողմով։ Անշարժ աստղները են մեր համար սահմանագլուխ քարեր, որոնց վերայ նայելով նկատումենք մեք լուսնի և իւրաքանչիւր այլ տիեզերական մարմնի շարժողութիւն, ինչպէս մեր յատուկ սեփականը։ Այժմ պատկերացուցէ՛ք ձեզ մի ահագին բոլորակ ծածկոց, որի վերայ նկարած էին աստղներ, և որի մէջ գտանվումէինք մեք փոքր ինչ հեռաւորութեամբ մի ուրիշ մարմնից որ ներկայացնումէր լուսինը։ Երբ որ այս մարմինը աւելի մօտենումէ իւր ձախակողմեան աստղներին այն բոլորակ ծածկոցի մակերևութի վերայ և հետ աչհետէ ծածկումէ նորանց, այնուհետև երևումէ թէ նա շարժվումէր մեր չորս կողմով. բայց մեք անտարկոյս մտածելու էինք նոյն բանը, եթէ նա դադարուն լինէր և մեք նորա չորս կողմով նոյն ուղղութեամբ վազէինք. այն կէտը բոլորակ ծածկոյի վերայ, որ մեր աչքից ծածկումէ այս մարմինը, կամ թէ երևումէր որ տեղ է բռնում այն ծածկոյի վերայ, շարժվելու է նոյնպէս դէպ ի ձախակողմ։ Եթէ մի բոլորակ դահլճի մէջ տեղումը դնէինք մի ճրագ սեղանի վերայ, և մօտից այս սեղանի չորս կողմով ման գայինք, ապա կը տեսանենք որ ճրագը նոյնպէս շրջանակով յառաջ էր շարժվում պատի վերայ, որպէս լինելու էր, եթէ մեք դադարէինք դահլճի մէջ տեղումը և թողուինք, որ ճրագը ման բերեն մեր չորս կողմով։

Այն խնդիրը թէ որը այդ երկուքից ճշմարիտ էր, ինքն ըստ ինքեան կը վճռվի, եթէ մեք քննենք և Արեգակի շարժողութիւնը որ բոլոր երկնային շարժողութիւնների մէջ առաւել խորհրդաւորն է մեր ֆիզիկական դրութեան համար, և ամենևին նման է լուսնի շարժողութեանը երկրի չորս կողմով: Թէպէտ արեգակի շառաւիղները թոյլ չեն տալիս մեզ լոկ աչքով տեսանել թէ ինչպէս այդ լուսեղէն գունդը, լուսնի նման, մասնակից լինելով երկնքի ընդհանուր շարժողութեանը մի և նոյն միջոցին մի աստղից դէպ ի միւս աստղը յառաջ է գնում. բայց այս յառաջխաղացութիւնը արեգակի երևումէ յայտնի, եթէ միտ դնենք այն աստղներին որ տարու զանազան ժամանակներում տեսանելի են, մանաւանդ թէ նոքա որ մօտ կէս գիշերին հարաւումը երևումեն, ուրեմն հանդիպակաց էին արեգակին: Գարնան սկզբումը, մօտ կէս գիշերին հարաւակողմեան երկնակամարի վերայ տեսանումենք այն չորս գեղեցիկ աստղները Առիւծի և Կուսի, բաց ի սոցանից մեծ աստղներ սակաւ: Առաջին ամառնագիշերներումը բարձր դրութեամբ կանգնած են հարաւումը Հերքուլէսը, Քնարը և Արծիւը, որ քանի մի ամիս յառաջ շատ բացակայ էին դէպ ի արևելք: Աշնան սկզբումը նոցա տեղը բռնումեն Պեգասոս, Քասիոպէյա, Անդրոմէդա և Ձկունքը: Պայծառ ձմեռնային գիշերներումը երևումէ հարաւային երկնակամարը շատ փառահեղ զարդարված. Ալդեբարան, հարաւային աչքը ցլի որի գլուխը և քամակը շրջապատումեն որպէս պսակներ Հիադների և Պլէյադների անհամար աստեղները, կայծակնափայլ Կապելլան, Օրիոնի փառահեղ համաստեղութիւնը, այնքան ճոխ աստղներով առաջին և երկրորդ կարգի մեծութեամբ. նորա հաւատարիմ ճանապարհորդակից, բոլոր միւս աստղներ նսեմացնող Սիրիուսը, Երկուորեակների զոյգքը և փոքր Շունը, անհամար բազմութիւնք աստղների և մառախլային բիծեր հաւաքվումեն Մերիդիանի (միջօրէական շրջանի) չորս կողմը, որ մի փոքր յետոյ տեղ բացեն փոքր աստղներով պատած Խեցգետնին, և առ փոքր փոքր անհետանալով քարոզեն արեգակի մօտաւորութիւնը և բարեխառն օրերի գալուստը: Ինչպէս մեք միջօրեայ (կէսօր) ասումենք այն օրաժամանակին, երբ արեգակը հարաւումը հասանումէ իւր ամենամեծ բարձրութեանը մեր հորիզոնի վերայ, այնպէս ևս մէջ գիշերոյ (կէս գիշեր) ասումենք այն ժամանակին, երբ որ արեգակը երկնքի հակառակ կողմումը, հիւսիսումը, շատ ցած ներքև է իջել հորիզոնի տակ. ուրեմն այն աստղները որ ապա հարաւումը երևումեն մեզ, հասած լինելով իւրեանց ամենամեծ բարձրութեանը, կանգնած են ամենևին հանդէպ արեգակին: Եւ որովհետև սոքա, ինչպէս տեսանք վերևումը, հետ զհետէ բոլոր տարու ընթացքումը էին նախ և յառաջ արևմտեան, և ապա օրէ օր դէպ ի

արեւմուտք յառաջխաղացող աստղներ, ուրեմն որովհետև արեգակի հանդիպակաց կէտը անընդհատ յառաջ է գնում արևմուտքից դէպ ի արեւելք, դորանից բացայայտ է ահա, թէ և արեգակը լուսնի պէս, բայց ի իւր ընդհանուր օրական շարժողութենից որ է արևելքից դէպ ի արևմուտք, ունի և մի յատուկ շարժողութիւն, որով նա ներհակ ուղղութեամբ աստղների միջից կատարումէ մի շրջան երկրի չորս կողմով։ Այդ ընթացքի միջոցը որ բաղկացնումէ $365\frac{1}{4}$ *օր (աւելի ճիշդ խօսելով,* 365 *օր,* 5 *ժամ,* 48 *մինուտ,* 45 *սեկունդ և* 30 *տերց) ասումենք տարի։*

Լուսնի և արեգակի ընթացքները կարելի է երեք կերպ մեկնել, կամ այնպէս, որ այդ երկու տիեզերական մարմինքը ստուգապէս շրջաբերվումեին երկրի չորս կողմով, կամ թէ լուսինը միայն և կամ թէ արեգակը միայն. որովհետև այդպէս երկիրը շրջաբերվելու էր միւս տիեզերական մարմնի չորս կողմով։ Բայց մի չորրորդ հնարաւորութիւն, այսինքն թէ երկու շարժողութիւնքը ևս երևութական էին միայն, ամենևին անմտածելի է, ըստ որում երկիրը լուսնի լրման միջոցին, ինչպէս բացայայտ է, ընկնումէ արեգակի և լուսնի մէջ տեղումը, ուրեմն չէ կարող մի և նոյն ժամանակ պտոյտվիլ երկուքի չորս կողմով ևս։ Սորանով լինումէ նոյնպէս շատ անհաւանական, որպէս թէ երկիրը շրջաբերվումէ լուսնի չորս կողմով, ըստ որում այնուհետև պիտոյ է արեգակը վազէր երկրի չորս կողմով, բայց նա, ինչպէս կը տեսանենք յետոյ, գրեթէ 100 *միլիոն անգամ աւելի մեծ է քան թէ լուսինը. ուրեմն եթէ մինը այդ երկու մարմիններից պիտոյ է դադարուն լինի, ապա բնական է դադարուն համարել աւելի մեծը։ Սոյն իսկ պատճառը վճռումէ նոյնպէս թէ որը այն երկու դեռ ևս մնացած մեկնութեններից ուղիղ էր. արդեօք երկու տիեզերական մարմինքը վազումեին երկրի չորս կողմով, թէ լուսինը երկրի չորս կողմով, և երկիրը արեգակի չորս կողմով։ Որովհետև երկու մարմինք պիտոյ է շարժութեան մէջ լինէին, ապա ոչ թէ միայն աւելի բնական էր, այլ և հիմնած է մեքենականութեան օրէնքների վերայ, որ աւելի փոքր մարմինը վազէ աւելի մեծի չորս կողմով, և ոչ թէ անդրադարձաբար։ Եւ որովհետև աստեղաբաշխների ամենաճիշդ չափելով ու հաշուելովը ապացուցված է, որ արեգակը գրեթէ միլիոն ու կէս անգամ աւելի մեծ է քան թէ երկիրը, և սա մօտ յիսուն անգամ աւելի մեծ քան թէ լուսինը, ուրեմն շատ բնական է ենթադրել, որ երկիրը վազումէ արեգակի չորս կողմով։ Այս ենթադրութիւնը նիւթերի զանազանութեամբ ստանումէ շատ մեծ հաւանականութիւն որ և ֆիզիկական և մեքենական պատճառներով ստանումէ հաւաստութիւն։ Մի մարմին չէ կարող միւսի չորս կողմով ման ածել, առանց և սորա ճանապարհ կատարելուն նորա չորս կողմով. բայց այս ճանա-*

պարհը համեմատելով նորա ճանապարհին, աւելի փոքր է, ինչպէս նորա նիւթը աւելի մեծ է։ Ուրեմն մի ֆիզիկական հարկաւորութիւն է, որ երկիրը ճանապարհ կատարէ արեգակի չորս կողմով, մի ճանապարհ որին համեմատելով ամենեին անզգալի էր արեգակի շարժողութիւնը, նորա անչափ աւելի մեծութեան պատճառով։ Հին աստեղաբաշխերը չունենալով այնքան ֆիզիկական տեղեկութիւնք, ի հարկէ կարող չէին իմաստասիրել այս մաթեմատիքական ապացոյցը, բայց կան և այլ ապացոյցներ երկրի շարժողութեան համար, դէպ ի որ կողմը կարող էր առաջնորդել նոցա մոլորակների շաւիղների աւելի մօտ քննութիւնը։

Մոլորակների թափառականութիւնը աստղների միջով, ըստ մեծի մասին ցուցանում է մի շարժողութիւն դէպ ի ձախակողմը, բայց ինչպէս երևում է, իւր ամենեին անկարգութեամբ ու անկանոնութեամբ շատ զանազանվում է արեգակի և լուսնի կանոնաւոր շարժողութենից։ Նոցա արագութիւնը ոչ թէ միայն ցուցանում է զարմանալի փոփոխութիւնք, այլ դոքա շատ անգամ անշարժ դադարումեն այս կամ այն աստղի մօտ և ապա սկսումեն յետ շարժվիլ դէպ ի աջ կողմը։ Այսպէս, նոքա ման են գալիս շատ կնճիռներից բաղկացած մի այնպիսի խառնափնդոր գծով, որ անկարելի էր համարել դորան նոցա իսկական ընթացքը։ Եթէ Ալէքսանդրիական Յոյնքը այնու ամենայնիւ ընդունումէին այդպէս, այս պատճառով ստիպված էին նոքա հնարաստեղծել մի այնպիսի արուեստական ենթադրութիւն, որ հարկաւոր էր միայն ծանօթ լինել դորան, որ իսկոյն հրաժարվէինք դորանից։ Որովհետև նոքա անպատճառ կամենումէին պաշտպանել մոլորակների շարժողութիւնը երկրի չորս կողմով, և այս շարժողութիւնը, ինչպէս բացայայտ է, չէ կատարվում շրջանաձև կամ թէ նմանապիսի կոր գծով (որ միայն, ինչպէս նոքա դուշակումէին ուղիղ, պատշաճ էր բնութեան պարզ օրէնքներին), այս պատճառով ընդունեցին նոքա թէ ամեն մի մոլորակ կատարում է մի փոքր շրջան, որի կենտրոնը մի և նոյն միջոցին ձևացնում է շրջապատը մի ուրիշ աւելի մեծ շրջանի որի կենտրոնումը չէ դրած երկիրը, բայց և ոչ հեռի նորանից. ասել է միւս բառերով, թէ մոլորակները ձևակերպումեն այն, կնճիռներից միախառնած գիծը որի մէջ շրջափակվում է երկիրը։ Թէպէտ զարմանալի էր նոցա, թէ այս մոլորակների մէջ կային երկու հատ (Մերկուրիոսը և Վէնուսը) որ երբեմն արեգակից յառաջ են վազում և երբեմն հաւասարվումեն նորա հետ։ Այս պատճառով երևումէր բացայայտ, թէ ոչ թէ երկիրը, այլ արեգակը էր շաւիղների կենտրոնը, գոնեայ այս երկու մոլորակների շաւիղների կենտրոնը։ Եւ արդարև հին աստեղաբաշխերի մի մասը թոյլ էր տալիս, որ այդ մոլորակները վազեն արեգակի չորս կողմով, և արե-

գակի հետ միասին երկրի չորս կողմով։ Երբ որ այս եղած էր, չէր կարող ծածուկ մնալ նոցա, թէ յիրաւի և միւս մոլորակների շաւիղքը շրջափակումեն արեգակը։ Երբ որ Մարսը հանդիպակաց է արեգակին, ապա մեք գտնվումենք երկուքի մէջ տեղումը. բայց երբ որ նա մօտ կէս տարուց յետոյ անտեսանելի է լինում նսեմացուցիչ արեգակի արևելեան կողմումը և մի փոքր յետոյ արևմուտքումը դուրս է երևում նորա ճառագայթների միջից, ապա պիտոյ է նա կամ մեր և արեգակի, կամ թէ արեգակի միւս կողմից անցած լինի։ Եթէ լինումէ առաջինը, ապա կարելի էր միւսանգամ տեսանել մոլորակի անցանելը արեգակի բոլորակի մօտից, մանաւանդ. երբ որ նորա շարժողութեան ուղղութիւնը էր դէմ ու դէմ արեգակի միջով, ինչպէս այս նկատողութիւնը այնքան յաճախ արած է Վենուսի և Մերկուրիոսի վերայ. բայց այդ բանը երբէք պատահած չէ միւս մոլորակների մասին։ Բաց ի դորանից, նոր ժամանակի աստեղաբաշխների ձեռքով գտած հնարները որով կարելի էր սահմանել տիեզերական մարմինների հեռաւորութիւնը միմեանցից ապացուցել են, թէ այն մոլորակը որ արեգակի մօտից անց է կենում, աւելի հեռաւոր է մեզանից, քան թէ արեգակը, ուրեմն նա ոչ թէ արեգակի առաջից, այլ քամակից բոլորվումէր, ապա ուրեմն և նորա ընթացքը շրջափակումէր թէ արեգակը, թէ երկիրը։ Սոյն այս նորագիւտ հնարները ցուցանումեն թէ Մարսը, երբ որ հանդիպակաց էր արեգակին, աւելի մօտ էր մեզ, քան թէ երբ որ կանգնած էր արեգակի մօտ, այլև ճշդապէս այնքան մօտ էր մեզ, ինչքան կրկնապատիկ հեռաւորութիւնը երկրից բաղկացնումէր. ուրեմն նորա հեռաւորութիւնը երկրից փոփոխվումէ աւելի քան թէ 40 միլիոնաչափ աշխարհագրական մղոն (*), բայց նորա բացակայութիւնը արեգակից անզգալի կերպով. ասել է թէ երկիրը և ոչ թէ արեգակը, էր նորա շաւղի կենտրոնը։ Սոյն այս լինումէ և միւս մոլորակների մասին։ Բայց և այն կնճիռները մեկնելու համար, որոնցից մոլորակների շաւիղքը զուգախառնված էին, այլև նոցա դադարառութիւնը և նոցա յետադնաց շարժողութիւնը, չը կայ ոչ մի այլ հնար, քան թէ Կոպերնիկոսից առաջարկածը. այսինքն թէ պիտոյ էր թոյլ տալ, որ և երկիրը միւս մոլորակների հետ միասին վազէր արեգակի չորս կողմով։ Այս խորհուրդը կայծակի պէս յեղափոխումէ խաւար գիշերը դէպ ի լուսափայլ օր. խառնիխուռն երևեցած շարժո-

---

(*) Աշխարհագրական մղոնը աւելի փոքր է քան թէ գերմանականը, այսինքն 7 վէրստ. որովհետև 15 աշխարհագրական մղոն և 12 գերմանական մղոն հաւասար են մի աշխարհագրական աստիճանի. ուրեմն նոցա համեմատութիւնը է 15 : 12. այսինքն գերմանակ. մղոնը հաւասար է $1\frac{1}{5}$ աշխարհագրական մղոնի, և սա է $\frac{4}{5}$ մասը գերմանական մղոնի։

ղութիւնքը ամենևին պարզանումեն. այն կնճիռները բացվումեն ինքն ըստ ինքեան. յետադնաց շարժողութիւնը էր միայն երևութական, աչքախաբութիւն, բոլոր մոլորակները հետևելով մի ընդհանուր օրէնքի, կատարումեն կանոնաւոր շրջաններ արեգակի չորս կողմով, և այն անհամար երկրորդական շրջանակութիւնքը և արտակենտրոն շրջանառութիւնքը Պտղէմայոսի ոչնչացնումեն, ինչպէս կը տեսանվի յետոյ։

Եթէ երկրի շարժողութիւնը արեգակի չորս կողմով այդքան շատ հաւանական լինելով, այնու ամենայնիւ կարող էին մարդիկ երկմտել դորա մասին, ապա տեղիք կար մտածելու, թէ դորա պատճառը էր այս ընդդիմադրութիւնը (հակառակ պատճառաբանութիւնը)։ Մի՛ թէ, ասումէին մարդիկ, այս ահագին շարժողութիւնը երկրի պիտոյ է լինէր մեզ ամենևին անզգալի. մի՛ թէ ոչինչ ներգործութիւն չէ պիտոյ երևէր դորանից, որովհետև օրական շարժողութիւնը երկրի յայտնի երևումէ նորա տափակացած ձևից, նորա դէպ ի Էկվատորը փոքրացած ծանրութենից և այլն։ Այս ընդդիմադրութեանը պատասխանելու համար, պիտոյ է նախ և յառաջ ծանօթաքանել, թէ երկրի շրջանակութիւնը մի ամենևին այլ բան է, քան թէ նորա յառաջախաղաց շարժողութիւնը։ Նա լինումէ երկրի վերայ և երկրի մէջ, և ցուցանումէ մի պայմանական շարժողութիւն երկրագնդի զանազան բաժինների մէջ. այն բաժինները որ դրած են առանցքի մէջ, չունին ոչինչ շարժողութիւն. ոմանք կատարումեն փոքրագոյն, և ոմանք մեծագոյն շրջաններ. այդ պատճառով բնական է, որ դոցա ներգործութիւնքը երևումէին նոյն իսկ երկրի վերայ։ Բայց տարեկան շարժողութիւնը արեգակի չորս կողմով ունի ամենևին այլ յատկութիւն. դորա մէջ չէ պատահում ոչինչ ներքին շարժողութիւն, բոլոր մասները երկրի հաւասար արագութեամբ յառաջ են խաղում դէպ ի մի և նոյն կողմ. ուրեմն այս շարժողութիւնը երբէք կարող չէ զգալի լինել նոյն իսկ երկրի վերայ. նա կարող է միայն մեզանից դուրս, տիեզերքումը ազդեցութիւնք ունենալ, բայց դոքա զգալի էին միայն աչքի համար, որպէս մոլորակների զարմանալի երևեցած շարժողութիւնը. բայց այս շարժողութիւնը երևումէ ստուգապէս և մի ներգործութեամբ որ ոչ թէ միայն առ աչօք էր, այլև ֆիզիկական, որ և առիթ էր տուել գործելու գերապանծ գիւտերից մինը, որ երբ և իցէ յաջողել է մարդկային հանճարին։ Այս գիւտը արվել է այնպէս, ինչպէս այնքան միւսեր. այսինքն գտած են մի ամենևին այլ բան, քան թէ որոնած էին. այժ այս տեղ և դորա հակառակը։

Եթէ երկիրը ստուգապէս շարժվումէ, այսինքն եթէ նա իւր դրութիւնը դէպ ի արտաքին մարմինները փոփոխումէ, ուրեմն անպատճառ պիտոյ է մեզ նկատել այս փոփոխած դրութիւնը։ Թէպէտ յիշե-

ցինք մեք թէ այս շարժողութիւնը երեւումէ մոլորակների վերայ, բայց մի՛ թէ դա, որպէս օրական շարժողութիւնը, չէր նկատելի լինելու անշարժ աստղների վերայ· մի՛ թէ չէր պիտոյ սպասել, որ դոքա երեւէին, որպէս թէ հանդէպ էին գալիս մեզ, կամ թէ հեռանումէն մեզանից· թէ այն մարմինների դասակարգքը որոնց վերայ վազումէր երկիրը, բաժանվումէին միմեանցից, միւսերը փոքրանումէին աչքի համար ջրեղերեայ ծառերի պէս, որոնց մօտից նաւարկումէինք մեք: — Առաջին նկատած բանը որ այս տեղ հանդիսանումէ, այն էական զանազանութիւնն է որ կայ լոկ շրջանակութեան և յառաջախաղաց շարժողութեան մէջ: Առաջինի վերայ ոչինչ ազդեցութիւն չունի արտաքին առարկաների հեռաւորութիւնը· աւելի աշխատութիւն ու ժամանակ չարժէր ինձ, մի առարկայից շրջել իմ երեսը որ հեռի էր ինձանից թէ երկու քայլափոխ և թէ երկու մղոն· բայց այլ բան է յառաջախաղաց շարժողութիւնը: Եթէ մի մարդ կանգնած էր մի ծառազարդ երկար ճեմելիքի մուտքի վերայ, որի ծառերը մեծ հեռաւորութեան պատճառով, երեւումէին վերջումը որպէս թէ միանումէին, ապա հարկաւոր էր միայն միանգամ շրջել երեսը, և բոլոր ծառազարդ ճեմելիքը, ինչպէս աստեղազարդ երկինքը երկրի շրջանակութեան պատճառով, երեւելու էր որպէս թէ պտոյտվումէ, թէպէտ ծառազարդ ճեմելիքի վերջը բացվում չէր, կամ թէ հեռաւոր ծառերի մեծութիւնը և կերպարանքը փոխվում չէր: Բայց տարեկան ճանապարհորդութիւնը երկրի կատարումէ աւելի քան թէ մի քանի քայլափոխ· մեք կը տեսանենք յետոյ, թէ այդ ճանապարհորդութեան երկարութիւնը չափվումէ աւելի քան թէ 40 միլիոն մղոնով· բայց այս տեղ խօսք չկայ մի ծառազարդ ճեմելիքի երկայնութեան մասին, այլ անշարժ աստղների հեռաւորութեան վերայ է մեր խօսքը· և դուցէ թէ 40 միլիոն մղոններ էին հազիւ թէ մի քայլափոխ դէպ ի տիեզերքի ճեմելիքի ներսը: Բոլոր քանակութիւնքը, բոլոր արագութիւնքը, որոնց հետ գործ ունէինք մեք, այնքան ահագին են, որ առ փոքր փոքր սովորումենք ոչինչ բան մեծ չհամարել· բայց և մի գիտութեան մէջ, ուր չէ կարելի մի քայլափոխ յառաջ գնալ առանց երկրաչափութեան լուսատու ճրագին, ոչ մի մեծութիւն չընդունել կամապաշտութեամբ, եթէ կարելի էր դորան չափողութեան տակ ձգել: Այս պատճառով աստղաբաշխերը պարտականութիւն դրեցին իւրեանց վերայ ամենաճիշդ զննողութեններով հետաքննել, արդեօք երկրի տարեկան շարժողութիւնը նկատելի՞ էր անշարժ աստղների վերայ:

Թող պատկերացնենք մեզ մի ուղիղ գիծ երկրի միջնակէտովը և մի աստեղաբաշխական դիտանոց ուր կատարվումէին այս զննողութիւնքը· թող երկայնացնենք այս գիծը մինչև անշարժ աստղները, և

ընդունենք թէ այդ գիծը գարնան սկզբումը, երբ որ այս զննողութիւնքը սկսած էին, կէս գիշերի մօտ հանդիպեց մի աստղի, որին կամենումենք ասել Ա։ Այս գիծը ամեն օր պտոյտվումէ երկրի չորս կողմով, կատարումէ մի զուգահեռական շրջան երկնակամարի վերայ, և ամենայն գիշեր հանդիպելու է Ա աստղին, եթէ երկրագունդը չէ փոխում իւր դրութիւնը տիեզերական տարածութեան մէջ։ Բայց այն միջոցին, երբ երկիրը կատարումէ իւր ընթացքը արեգակի չորս կողմով, այն գիծը դագաթնակէտի միջով հետ զհետէ հանդիպելու է երկնքի այլ կէտերին, և, եթէ այժմ չը մտածենք օրական շրջանակութեան վերայ, կատարելու էր աստեղալարդ բոլորակի վերայ երկրի ընթացքի պէս մի շրջան, որ նորա պէս ունի մի միջաչափ 40 միլիոն մղոն լայնութեամբ։ Այնուհետև Ա աստղը չէ անցանելու դագաթնակէտի միջով, այլ միշտ աւելի շատ հեռանալու է նորանից և կէս տարուց յետոյ, երբ որ երկիրը կանգնած էր իւր շաւղի հակառակ կողմումը, ուրեմն 40 միլիոն մղոն տեղից շարժված էր դէպ ի այն կողմ, ուր կանգնած է արեգակը, մի այլ աստղ Բ անցանելու է դագաթնակէտի միջով, որ 40 միլիոն մղոն դէպ ի այս կողմ հեռացած է Ա աստղից· բայց Ա աստղը դէպ ի միւս կողմ նոյնպէս ևս հեռացած կը լինի դագաթնակէտից։ Երբ որ երկիրը և այն գիծը զննողութեան տեղի դագաթնակէտի միջով, նորա հետ միասին շարժվումէ դէպ ի աջակողմ, ապա այս գիծը շօշափելու է մի կէտ դէպ ի Ա աստղի աջակողմը, ուրեմն Ա պիտոյ է գտնվի ձախակողմումը, կամ թէ պիտոյ է երևի, թէ շարժվումէր դէպ ի ձախակողմը· և այսպէս առ հասարակ Ա և ամեն մի այլ աստղ երկրի շարժողութեանը ներհակ ուղղութեամբ կատարելու է երկնակամարի վերայ մի շրջան, որի միջաչափը բաղկայնումէր 40 միլիոն մղոն։ Բայց թէ այս շրջանը ի՛նչքան մեծ էր երևում մեզ և թէ առ հասարակ նկատելի՞ էր մեզ, այդ բանը կախ է աստղների հեռաւորութենից· պատճառ, ինքն ըստ ինքեան հասկանալի իրողութիւն է, թէ մի առարկայ այնքան ևս փոքր էր երևում, ինչքա՛ն աւելի է նորա հեռաւորութիւնը։ Ամեն մի երևութական տեղաշարժութիւն արտաքին առարկաների, որ՝ յառաջանումէր մեր յատուկ շարժողութենից կամ թէ մեր կացութեան փոփոխութենից, ասվումէ աստեղաբաշխութեան մէջ Պարալլաքսէ (Parallaxe) և երկու տեսակ է· այսինքն տարեկան, եթէ դա յառաջանումէ երկրի տարեկան շարժողութենից, և օրական, եթէ դորա պատճառը է նորա օրական շրջանակութիւնը։ Ուրեմն պիտոյ է քննել, արդեօք ունէին անշարժ աստղները մի տարեկան Պարալլաքսէ։

Երբ որ Բռադլէ անգլիացին մօտ 128 տարի յառաջ շատ տարիներ շարունակաբար նկատութիւնք էր արած այս մեծակշիռ առարկայի վե-

րայ, պարզապէս յայտնվեցաւ նորան, որ արդարև ամենայն աստղ տարուա մէջ երևում էր թէ կատարում է երկնքի վերայ մի շրջան որ այնքան ևս երկայնաձև կամ երկայնաբոլորակ (Էլլիպտեան) է, ինչքան փոքր բարձրացած էր աստղը երկրի շաւղի վերայ, և թէ այս շրջանի ամենամեծ միջաչափը բոլոր աստղների մասին, առանց բացառութեան երևումէր մի անկիւնի տակ որ չափումէ 40 սեկունդ։ Այս վերջին իրողութիւնը միայն հաստատեց վկայութեամբ, որ այս երևութական շարժողութեան պատճառը չէ կարող լինել Պարալլաքսէն, որովհետև շատ անհաւանական է, որ բոլոր աստղները ունենային ճշդապէս մի և նոյն հեռաւորութիւնը երկրից. բայց գործը ևս առաւել այն բանով վճիռ ստացաւ, որ այն շրջանը կատարվումէ աստղներից մի այլ ուղղութեամբ, այլև հետևելով առ հասարակ ամենևին այլ օրէնքների, քան թէ պիտոյ է լինէր տարեկան պարալլաքսի զօրութեամբ։ Այս նկատողութիւններից կարելի է այսպիսի խորհրդաւոր եզրակացութիւնք անել. 1) որովհետև այս շարժողութիւնը հասարակաց է բոլոր աստղներին, բայց նայելով նոցա զանազան դրութեանը դէպ ի երկրի շաւիղը, ենթարկվումէ փոփոխութիւնների. որովհետև այդ շարժողութիւնը ամենների մէջ ունի մի և նոյն տարեկան միջոցը, և այն տեղը որ ամեն մի աստղ բռնումէ իւր երկայնաբոլորակ ընթացքի մէջ, ամենևին կախ է տարու ժամանակից, այս պատճառով այս տեղաշարժութիւնը աստղների, եթէ անհնարին ևս լինէր մեկնել նորան փիզիկաբար, անտարակոյս յառաջանումէ երկրի տարեկան շարժողութենից, այլև ապացոյց էր դորա մասին. պատճառ, եթէ արեգակը վազէր երկրի չորս կողմով, ապա դորանից չէր կարող յառաջանալ ոչինչ տեղաշարժութիւն աստղների, որովհետև մեր աչքը չէր փոխելու այնուհետև իւր կացարանը։ 2) Աստղները չունին ոչինչ տարեկան պարալլաքսէ, գոնեայ ոչինչ զգալի. ուրեմն անշարժ աստղների հեռաւորութիւնը այնքան ահագին է, որ բոլոր երկրաշաւիղը, մի գիծ 40 միլիոն աշխարհագրական մղոն, էր միայն մի հաղիւ թէ նկատելի կէտ, համեմատելով նորա հետ։

Այս շարժողութիւնը արեգակի, որի մասին թէև ապացուցած է, թէ դա էր երկրի շարժողութեան հետևանքը, չը յառաջանալով այնպէս, ինչպէս գուշակած էին, այնու ամենայնիւ մնաց մի անհասկանալի խնդիր, մինչև Բռադլէ անգլիացին 98 տարի յառաջ վճռեց դորան մի յայտնագործութեամբ։ Այն մոլորակների մէջ, որ մեր երկրի նման կատարումեն իւրեանց ընթացքը արեգակի չորս կողմով, Յուպիտերը իւր մեծութեամբ, իւր չափաւոր հեռաւորութեամբ երկրից և իւր չորս արբանեակներով է այն մոլորակը, որ տուել է մեզ առաւել մեծակշիռ ծանօթութիւնքը մեր արեգակնային համակարգութեան վերայ։ Այս

չորս արբանեակքը կատարելով իւրեանց շրջանառութիւնը Իւպիտերի չորս կողմով, գրեթէ ամենայն գիշեր մտանումեն այն ստուերի մէջ, որ Իւպիտերը ձգումէ իւր քամակումը, որովհետև այն միջոցին, այս մոլորակի բնակիչքը ունին մի լուսնախաւարութեան հանդէս որին մասնակից ենք և մեք հեռացոյցների օգնութեամբ: Շուտով հասկացան այն օգուտը որ այս երևոյթքը պիտոյ է ունենային աշխարհագրութեան և նաւարկութեան մասին, և երկար ժամանակ շարունակված նկատութիւնների հիման վերայ հաշուած են արբանեակների շրջանակութիւնը Իւպիտերի չորս կողմով և նոցա խաւարմունքի ժամանակը: Բայց փորձով տեսան, որ նկատութիւնքը միշտ համաձայն չէին հաշուի հետ, որ զանազանութիւնը այնքան ևս մեծ էր, ինչքան Իւպիտերը աւելի մօտ էր արեգակին, կամ թէ ինչքան աւելի ուղիղ հանդիպակաց էր նա արեգակին. այլև այս խաւարմունքը 8 մինուտ 7 սեկունդ աւելի վաղ էին պատահում, երբ որ մոլորակը ուղիղ հանդիպակաց էր արեգակին, և այդքան ևս յուշ, երբ որ նա մօտակայ էր արեգակին, ուրեմն պիտոյ է նորա քամակից անցանէր ահա, կամ թէ մի փոքր յետոյ: Այս բանին կարելի էր տալ մի՛ մեկնութիւն միայն, որ այնքան պարզ և բնական է, որ կրումէ իւր վերայ ճշմարտութեան կնիքը: Իւպիտերի շաւիղը, ինչպէս տեսանք արդէն, շրջափակումէ իւր մէջ երկրի շաւիղը. ուրեմն երբ որ այս մոլորակը հանդիպակաց է արեգակին, այսինքն երբ որ երկիրը գըտանվումէ նորա և արեգակի մէջ, ապա յայտնապէս այնքան, ինչքան բաղկացնումէր երկրաշաւիղի բոլոր միջաչափը, այսինքն 40 միլիոն մղոն աւելի մօտ ենք այդ մոլորակին, քան թէ երբ նա արեգակի միւս կողմումն է: Ինչու համար մեք նորա արբանեակների մի և նոյն խաւարմունքը տեսանումենք առաջին դիպուածումը աւելի վաղ քան թէ վերջինումը. որի պատասխանը աւելի բնական է, քան թէ այն, որ լոյսը որ մեզ ծանուցանումէ այդ խաւարմունքը, առաջին դիպուածումը կատարած էր մի աւելի կարճ ճանապարհ սկսեալ Իւպիտերից մինչև երկիրը, քան թէ վերջին դիպուածում: Թող լուսի արագութիւնը այնքան մեծ լինէր, ինչքան և կամենք մտածել մեք, այնու ամենայնիւ մի այնպիսի նիւթի մէջ, ինչպէս լոյսն է, որ այնքան մեծապէս ներգործումէ մեր տեսողական ջիղերի վերայ, շնչական և տնկական կենդանութեան վերայ, որ իւր ուղղագիծ ճանապարհներից կարող էր խոտորվիլ անցանելով ապակու, ջրի և այլ մարմինների միջից, որ և բացարձակվումէ հայելիներից, պիտոյ է անտարակոյս պատահի մի շարժողութիւն, և շարժողութիւն առանց ժամանակի, առանց մի որոշեալ արագութեան, թող լինէր դա շատ սաստիկ ևս, անկարելի է մտածել: Այսպէս ահա արած էր մի ամենամեծ յայտնագործութիւն և չափած ու սահմանած

էր լուսի արագութիւնը։ Բոլոր զանազանութիւնը որ կայ այդ խաւարմունքի վաղ ու յետոյ երևելի լինելու մէջ, բաղկացնում է 16 մինուտ, 15 սեկունդ. որ միջոցին լոյսը անցանում է երկրաշաւղի միջաչափը 40 միլիոն մղոն։ Եւ որովհետև սոյն իսկ միջոցումը երկիրը կատարում է իւր ընթացքով մի աղեղն 40 սեկունդաչափի որ ճշդապէս համաձայնվում է այն շրջանի միջաչափի հետ, որ աստղները կատարումեն երկնքումը, ապա Բռադլէի աչքից չէր կարող փախչել այս զարմանալի համաձայնութիւնը և այնուհետև հեշտ էր այն տեղաշարժութիւնը արեգակների մեկնել լուսի շարժողութեան հաղորդակցութեամբը երկրի շարժողութեան հետ։

Երբ որ արդէն ապացուցած էր, թէ այն զգացողութիւնը որին մեք ասումենք Տեսնելն, ոչ մի այլ բան չէ, եթէ ոչ, այն տպաւորութիւնը որ արագաթռիչ լոյսը գործում է մեր աչքի վերայ, այնուհետև բացայայտ էր, թէ այս զգացողութիւնը և նորանով յառաջացած ու տեսողական ջիղերի միջնորդութեամբ ուղեղին մատուցուած գաղափարը պիտոյ է զանազան լինի, նայելով շատ կամ փոքր սաստկութեանը, արագութեանը և ուղղութեանը, որով լոյսը ոչ թէ դուրս է հոսած լուսատու մարմնից, այլ որով հանդիպում է մեր աչքին կամ թէ գրգռում է նորան, որ մեք, զոր օրինակ մի առարկայ տեսանումենք ոչ թէ այն ուղղութեամբ, որի մէջ է նա ստուգապէս, այսինքն ինչ ուղղութեամբ լոյսը սկզբնաբար դուրս է ծագել, որ ուղղութենից գուցէ թէ զանազան պատճառներով իւր ճանապարհի վերայ խոտորված էր, և ոչ ևս այնպիսի ուղղութեամբ, որով նա մտանում է աչքի մէջ, այլ ինչ ուղղութեամբ մեք զգումենք լուսի մտանելը մեր աչքի մէջ. և այս բանը յայտնապէս կախ է մի և նոյն միջոցին մեր աչքի շարժողութենից. Երբ որ մի մարմին հանդիպում է մի այլ մարմնի որ դադարուն էր, ապա ստանում է նա նոյն տպաւորութիւնը, որպէս թէ ինքը ևս դադարուն էր, և որպէս թէ միւս մարմինը մի ներհակ շարժողութեամբ հանդիպում էր նորան։ Նոյն տպաւորութիւնը զգումենք մեք, երբ որ մեր ձեռքը զարկումենք մի սուր բևեռի որ նստած էր մի պատի մէջ, կամ երբ որ բևեռը ներհակ կողմից խթվում է ձեռքի մէջ։ Այլև եթէ մարմինքը ևս շարժողութեան մէջ են, երբ որ հանդիպումեն միմեանց, ամէն մինը նոյանից ստանալու է նոյն տպաւորութիւնը, և եթէ նա զգայուն էր, ապա զգալու է նոյն բանը, որպէս թէ և ինքը դադարուն էր. և միւս մարմինը, բաց ի իւր յատուկ շարժողութենից ունենալու էր մի շարժողութիւն, ներհակ առաջին շարժողութեանը։ Այս յայտնի ճշմարտութեան վերայ հիմնած է բոլոր մեքենականութիւնը, և մեր յատուկ զգայութիւնը վկայում է դորա համար։ Մեք, գնալու միջոցին, ընդդէմ մեր փչող

հողմը զգումենք աւելի սաստիկ, որովհետեւ նա այնպէս է ներգործում մեր վերայ, որպէս թէ բաց ի իւր յատուկ արագութենից ունէր և այն, որով մեք հանդէպ էինք դիմում նորան. մեք մեր քամակից փչած հողմը զգումենք աւելի թոյլ, որովհետեւ այն արագութիւնը, որով մեք փախչումենք նորանից, հակառակ կողմից կապակցվելով նորա հետ, այնքան ևս փոքրացնումէ նորան։ Դորա մի այլ ներգործութիւնը այն է, որ մեք հողմը զգումենք որպէս թէ ամենևին այլ կողմից էր փչում, քան թէ ստուգապէս փչումէր, այլև որպէս թէ հակառակ կողմից։ Երբ որ հողմը փչումէ արեւմուտքից, և մեք գնումենք ուղղակի դէպ ի հարաւ, ապա զգումէինք, որպէս թէ հողմը բաց ի իւր ստուգապէս շարժողութենից արեւմուտքի կողմից, ունէր և մի շարժողութիւն դէպ ի հիւսիս, կամ թէ հարաւից. աւել է, թէ նա փչումէր հարաւային արեւմուտքից. բայց եթէ նոյն ուղղութեամբ և աւելի արագ քան թէ հողմը, գնումէինք արեւմուտքից դէպ ի արեւելք, ապա զգալու էինք, որպէս թէ մի արեւելեան հողմ փչումէ մեր երեսին։ — Այս պատճառով, այն տպաւորութիւնը կշռելու համար, որ մի մարմին Ա կրումէր, երբ որ նա հանդիպումէ մի այլ մարմնի Բ, վաղուց ընդհանրապէս ընդունված կանոնը մեքենականութեան մէջ այն է, որ Բ մարմնին, բաց ի նորա սեփականից, տալիս են և մի այլ շարժողութիւն, որ ներհակ էր Ա մարմնի շարժողութեանը. որովհետեւ այն ժամանակ Ա մարմինը նոյնպէս ըզգածվումէր, որպէս թէ դադարումէ, և Բ մի այնպիսի շարժողութեամբ հանդիպումէ նորան, որ բաղադրած էր այս երկուքից։

Այս հիմնական կանոնը, գործ դրվելով լուսի և երկրի վերայ, շատ լիովին մեկնումէ Բրադլէի յայտնագործած շարժողութիւնը աստղների։ Եթէ երկիրը նոյն ուղղութեամբ, ինչպէս լոյսը մի աստղից դուրս է բղխում, շարժվէր, ուրեմն և հեռանար այդ աստղից և աւելի արագութեամբ քան թէ լուսի արագութիւնն էր, ապա մեք ամենևին չէինք տեսանելու աստղը, որովհետեւ նորա լոյսը չէր հասանելու մեր աչքին։ Բացայայտ է, որ աչքի աւելի նուազ արագութիւնը պիտոյ է յառաջացնէր և աւելի թոյլ ներգործութիւն և փոփոխէր երեւութական դրութիւնը աստղների։ Մեք տեսանումենք աստղը, երբ որ լոյսը նորանից դուրս հոսելով մտանումէ մեր աչքի մէջ, բայց ոչ նոյն ուղիղ գծով, որի մէջ կայ աստղը, որովհետեւ մեր աչքը երկրի շրջանառութեամբը արեգակի չորս կողմով, ինքը ևս շարժողութեան մէջ է, այլ մի այնպիսի ուղղութեամբ, որ, ինչպէս վերևումը ցոյց տուեցինք, կարելի է գտանել եթէ տայինք լուսին, թող նորա ճշմարիտ շարժողութիւնը աստղից մինչև դէպ ի երկիր, մի այլ շարժողութիւն ևս, որ հաւասար է երկրի արագութեանը, բայց մի ուղղութեամբ, որ ներհակ

է այն ուղղութեանը որով երկիրը այս րոպէիս վազումէր արեգակի չորս կողմով ։ Երբ որ երկիրը տարու վերջումը շարժվումէ ուղղակի դէպ ի լուսապայծառ աստղը Կոյսի մէջ որ ասվումէ Ցուլենի Հասկ, այն ուղղութիւնը որի մէջ տեսանումէնք զոր օրինակ Սիրիուսը, պիտոյ է բաղադրած լինի այն երկու ուղիղ գծերից որ ձգվումէն Սիրիուսից և Հասկից դէպ ի երկիրը ։ Ուրեմն այս երևութական ուղղութիւնը պիտոյ է ընկնի այն երկու գծերի մէջ և այնքան աւելի խոտորվի ճշմարիտ ուղղութենից, ինչքան աւելի մեծ էր երկրի արագութիւնը (ուստի յառաջանումէ այս խոտորումը), համեմատելով Կուսի արագութեան հետ ։ Մեք տեսանելու ենք բոլոր աստղները այն իսկական տեղից ուր գտանվումէին նոքա, մի փոքր շարժված իւրեանց տեղից, և արդարև դէպ ի այն կողմը, ուր շարժվումէ երկիրը ։ Եւ որովհետև երկրի ուղղութիւնը ամենայն րոպէ փոխվումէ, ապա պիտոյ է երևէր, որ և աստղները տարու միջոցումը կատարումէին մի նմանապիսի շրջան, որի մեծութիւնը կախ է այն համեմատութենից որ երկրի արագութիւնը ունի լուսի հետ, ուրեմն կարող է սահմանել այս համեմատութիւնը ։ Այս երևութական տեղաշարժութիւնը աստղների, որ յառաջանումէ լուսի և երկրի շարժողութենից, ասումէն Խոտորումն լուսոյ (Aberratio), և այն փոքրիկ շրջանը որ աստղները ամենայն տարի կատարումէն, որ և առաւել մեծ մասի շեղ դրութեան պատճառով դէպ ի երկրի շաւիղը ինչպէս ամեն մի կողմնակի նկատուած շրջան, երկայնաբոլորակ է, և ասվումէ Խոտորման երկայնաբոլորակ (Ellipsis aberrationis) ։ Այս երկայնաբոլորակը, որ այն աստղների մէջ, որ ուղիղ ստորահայեաց կանգնած են երկրաշաւղի տափարակի կամ թէ Եկլիպտիկայի վերայ, լինումէ կատարեալ շրջան, և այնպէս փոքր է, որ անտեսանելի է լոկ աչքի համար, կարելի է համարել ամենևին փոքրագիր պատկերը երկրաշաւղի, որ ինքն բնութիւնը աստեղազարդ երկնքի վերայ ստուերագրել է ։

Երբ որ, այս մտահայեաց տեսութեանը հետևելով, հաշվումէնք այն տեղը, որ ամեն մի աստղ տարու զանազան ժամանակների մէջ պիտոյ է բռնէ, ապա գտանելու ենք, որ բոլոր աստղների շարժութիւնքը շատ ճիշդ համաձայն են նկատութենների հետ ։ Ուրեմն երկրի տարեկան շարժողութիւնը արեգակի չորս կողմով Ֆիզիկապէս ապացուցած է սորանով, որպէս և լուսի շարժողութիւնը. և այժմ դժուար չէր երկու արագութենների համեմատութիւնը միմեանց հետ սահմանել ։

Պատկերացուցէ՛ք ձեզ մի ուղիղ գիծ Ա Բ, այնքան երկար, ինչքան էր այն ճանապարհը որ լոյսը մի որոշեալ միջոցում, զոր օրինակ մի ժամի մէջ, անցանումէ, և դորա վերայ ուղիղ ստորահայեաց մի գիծ Բ Գ, այնպէս մեծ, ինչպէս այն աղեղը որ երկիրը նոյն իսկ միջոցին կա-

տարում արեգակի չորս կողմով, այնպէս, որ երկու արագութիւնքը
բացայայտվումին այս երկու գծերով, և մի աստղի երևութական տե-
ղի խոտորումը իւր ճշմարիտ տեղից, կամ թէ խոտորումը սահմանվում
այս երկու գծերի մէջ եղած համեմատութեամբը. այսինքն դա, եթէ
Ա և Գ կէտերը կապակցէինք մի ուղիղ գծով, հաւասար է այն անկիւ-
նին որ ձևայնումեն միմեանց հետ գիծքս ԱԲ և ԱԳ։ Բայց այս ան-
կիւնը յայտնապէս համաձայն է փոքրիկ ԲԳ գծին, եթէ պատկերա-
ցնենք մեզ նորան, որպէս աղեղն մի գծի, որի կենտրոնը է Ա, և կիսա-
չափը ԱԲ։ Այժմ միտ դնելով Բռադլէի վերոյիշեալ նկատութեններին,
խոտորման երկայնաբոլորակի միջաչափը է 40 սեկունդ կամ թէ կիսա-
չափը 20 սեկ., այսինքն աստղի երևութական տեղը խոտորում իւր
ճշմարիտ տեղից որ բռնում երկայնաբոլորակի կենտրոնը, դէպ ի ամե-
նայն կողմ 20 սեկ., ուրեմն երկրի արագութիւնը համեմատվում լուսի
արագութեան հետ այնպէս, ինչպէս մի աղեղն 40 սեկունդ չափով հա-
մեմատվում շրջանի կիսաչափի հետ։ Այս համեմատութիւնը շատ
ճիշդ համաձայնվում վերոյիշեալ նկատութենների հետ Իւպիտերի ար-
բանեակների մասին։ Այս նկատութեններից հետևում, որ լոյսը եր-
կրաշաւիղի կիսաչափը անցանում 8 մինուտի և 7 սեկունդի մէջ, որ
միջոյին երկիրը (միտ դնելով տարու յայտնի երկարութեանը) կատա-
րում իւր ընթացքի մէջ մի աղեղն 20 սեկունդի չափ. ուրեմն և այս
տեղ երկրի և լուսի արագութիւնքը ունին այնպիսի համեմատութիւն
միմեանց հետ, ինչպէս 20 սեկունդը շրջանի կիսաչափի հետ։ Երկրա-
չափութենից յայտնի է, որ կիսաչափը 10,313 անգամ աւելի մեծ է
քան թէ մի աղեղն 20 սեկունդի մեծութեամբ։ Ուրեմն լուսի արագու-
թիւնը 10,313 անգամ աւելի մեծ է, քան թէ այն արագութիւնը,
որով երկիրը վազում արեգակի չորս կողմով։ Մեք կը տեսանենք յե-
տոյ, թէ ինչ կերպով սահմանումեն երկրաշաւիղի մեծութիւնը և գը-
տած են, թէ այս շաւիղի կիսաչափը կամ թէ հեռաւորութիւնը արեգա-
կից բաղկայնում 20 միլիոն աշխարհագրական մղոն, 112 միլիոն վերստ։
Այս ահագին ճանապարհը անցանում լոյսը 8 մինուտի և 7 սեկ. մէջ,
ուրեմն գնեայ 41,331 աշխարհագ. մղոն մի սեկունդի մէջ, մի երակի
զարկողութեան միջոցում, որ գրեթէ միլիոն անգամ գերազանց է շա-
ռաչիւնի արագութենից։

Եթէ մտածենք թէ քանի՛ քանի՛ վսեմական ճշմարտութիւնք բո-
վանդակած են այս սակաւաթիւ թերթերի մէջ, ինչ հանճարեղ կերպով
ամենամեծ յայտնագործութիւններ, ինչպէս ամենափոքր հնարները,
գրեթէ չնչին երևեցած նկատութիւնքը, յառաջացուցել են շատ խոր-
հրդաւոր տեղեկութիւնք բնութեան օրէնքների և տիեզերքի կազմու-

թեան մասին. եթէ լսումենք, թէ մի գիծ հազիւ թէ երկպատիկ աւելի հաստ քան թէ այս տառերը, որով տպած է մեր տետրակը, այսինքն թէ այդչափ միայն պիտոյ էր սեկունդացոյց ճօճանակը կարճացնել հարաւային Ամերիկայի մէջ, երկրի տափակացած ձևը, նորա օրական շրջանակութիւնը մի առանցքի վերայ և զանազան ծանրութիւնը նորա մակերևութի վերայ ապացուցանելու համար. եթէ յիշատակենք, թէ աստեղաբաշխի աչքը երկնքի վերայ որպէս մի փոքրացոյց հայելու մէջ պատկերացուցած տեսել է երկրի տարեկան շարժողութիւնը արեգակի չորս կողմով, թէ սոյն այս փոքրագիր պատկերը դարձել է ճանապարհ մաթեմատիկական ճշգութեամբ չափելու այն ահագին արագութիւնը լուսաշառաւիղների, որ հազիւ թէ կարող էր ըմբռնել երևակայական զօրութիւնը. եթէ մեք այս բոլոր բաների վերայ մտածենք պայծառապէս, ապա պիտոյ էր մեզ խոստովանել, թէ աստղաբաշխները բարւոք են գործ դրել իւրեանց ժամանակը, և թէ այս գիտութեան մէջ մարդկային իմացականութիւնը ճարել է իւր համար ամենագեղեցիկ պարծանքներ: Այս նիւթի վերայ խօսելու պարապ կ'ունենանք յետոյ, շատ անգամ. որովհետև այս մեր փոքրիկ ճառով հազիւ թէ ձգեցինք մի թեթև հայեացք տիեզերքի ներքին ճարտարապետական կազմածի վերայ: «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ և զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն» ձայն է տալիս հոգեզգեաց մարգարէն Դաւիթ, ուրեմն հրաւիրելով ամենայն բանական մարդ ուսմամբ ու քննողութեամբ ճանաչել Արարիչը նորա արարածներով. ըստ որում «Աներևոյթքն Աստուծոյ երևելւօքն նկատին». ի հարկէ ոչ յիմարաբար և անբանօրէն նայելով բնութեան հրաշքների վերայ, այլ մտածելով, քննելով և ուսանելով.

Ս. Նազարեանց.

ԳԻՒՏՔ ԵՒ ՅԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՔ·

ԳՐԵԼԻ ԹՂԹԻ ԳԻՒՏԸ·

Սակաւ մարդիկ միայն գրելով մեր օրերումը թէ «ես ստորագրեալս վկայումեմ թէ այս ինչ բանը այսպէս է և այլն» վերահասու են թէ եղած է մի ժամանակ, որ չէին կարող մարդիկ այդպէս խօսել, այլ պիտոյ էր նոցա ասել, թէ «ես ներքոյ նշանակեալս» և այլն: Եւ արդարև, մի ժամանակ չը կար ստորագրութիւն, այլ «ներքոյ նշանակութիւն», որովհետև չը գիտէին գրել: Եւ այս արուեստին տեղեակ չէին ոչ թէ ժողովրդի հասարակ մարդիկը, որոնց համար գրութեան արուեստը եղած է միշտ մի աւելորդ բան, այլև նոյն իսկ մեծատուն և կրթած մարդիկ, ղոր օրինակ թագաւորք, կայսրներ, կարճ ասեմ, ամենայն անձն, որ չէր պատկանում յատկապէս գիտնականների կարգին: Կարելի է ասել, որ այդ ժամանակումը Եւրոպան, այս մասին, շատ աւելի պակասաւոր էր, քան թէ Չինէացոց աշխարհը, ուր գրելու արուեստը, առանց համեմատութեան, աւելի դժուար է, թէպէտ այդու ամենայնիւ հասարակ ժողովրդի մէջ պակաս չեն մարդիկ, որ տեղեակ լինէին այդ արուեստին: Այո, գրագիտութեամբ չքաւոր ժամանակը այն է, որ իրաւացի ստացել է խաւար դարերի անուն. մի այնպիսի ժամանակ, երբ գիտութիւնք և ճարտարութիւնք, ինչպէս երևումէր, գլորվումէին դէպ ի մշտնջենաւոր քուն. երբ մնապաշտութիւնը և տգիտութիւնը թագաւորումէին անսահման իշխանութենով, երբ ոչինչ բան արժանաւորութիւն չունէր, բաց ի պատուանշանից և սրից, երբ նա կրվումէր առանց գիտնականութեան և երկիւղածութեան, և սա գործ էր դրվում առանց իմաստութեան և մարդասիրութեան. այն ժամանակն եմ ասում, որ սկսվեցաւ հռովմէական թագաւորութեան կործանվելովը գերմանական ազգերի ձեռքով և վերջացաւ միայն գրելի թղթի գիւտովը:

Այս երկար ու ձիգ հարիւրաւոր տարիների մէջ, բաց ի հոգևոր և սակաւաթիւ ուսումնականներից, գրեթէ չը կար ոչ ոք, որ կարողանար գրել գոնեայ իւր անունը. և կայսր Կարոլոս մեծը, որ անտարակոյս արժանի է ասվելու գիտութենների և ճարտարութենների պաշտպան, գուցէ թէ գերեզման իջաւ, առանց ուսանելու այբուբենքը: Այս պատ-

ճառով դիւանական արձանագրութիւնքը, պարգևատրական թղթերը, ստացուածների պայմանագիրքը այս ժամանակի, փոխանակ ստորագրութեան, մի այլ նշան ունին, և ըստ մեծի մասին խաչանշան և սորա մօտ դրած մի գրաւոր հաստատութիւն վկաների բերանից, թէ այսպիսի խաչ սորա կամ նորա յատուկ ձեռքով ձևացրած էր։ Դիւանական արձանագրութիւնքը չէին ստորագրվում, այլ ստուգապէս նշանաւորվումէին։ Ամեն մարդ ունէր իւր յատուկ նշանը, իւր յատուկ կերպը նշանակելու մի խաչ (որ ասվումէր խաչով ստորագրել), և ճանաչումէր իւր սեփականը հարիւրաւոր միւս խաչերի մէջ, այնպէս, ինչպէս ամեն մարդ որոշումէր իւր ձեռագիրը։ Մի այդպիսի ներքոնշանակութիւն ունէր սովորաբար այսպիսի յառաջաբան. «որովհետև տգէտ եմ գրութեան (գրութեան արուեստին), այս պատճառով նշանակեցի խաչով»։ Այս խոստովանութիւնը, առանց տարակուսի, արած են և թագաւորներ. Անգլօ-Սաքսոնացոց և սպանիական Գոթացոց թագաւորների բոլոր վկայարանքը ներքոնշանակած են այդպէս։ Արձանագրութիւնը մի ժողովի, որ եղած է 821 թուակ., վերջանումէ այս բառերովս. «կայսրը և գրեթէ բոլոր իշխանքը Ֆրանսիայի և Գերմանիայի ստորագրեցին այս ժողովի սահմանադրութիւնքը, ամեն մինը ներքոնշանակելով իւր խաչը։» Ուրեմն այդ բոլոր իշխանաւորքը չունէին պատճառ բամբասելու միմեանց, ըստ որում միապէս տգէտ էին գրութեան։ Այլև չը կայ համարձակութիւն մտածելու, թէ այսպէս էր բանը այն աշխարհների մէջ միայն, որոնց տիրապետած էին հիւսիսի ազգերը. այո՛ նոյն իսկ Յունաստանի մէջ, այսինքն գիտութեան և ճարտարութեան հին մայրատեղումը, ուր այն ժողովուրդքը ասվումէին բարբարոսք, գրելու հմտութիւնը չէր աւելի ծաղկած, և շատ ժողովների կարգադրութիւնք ստորագրված են խաչով բիւզանդեան կայսրներից։ Յուստինիանի սահմանադրութենների մէջ հրամայած կայ, թէ ով որ լաւ գրագէտ չէր, թող հինգ վկաների ներկայութեամբ ձևակերպէ գոնեայ մի տառ, եթէ կարող էր. ապա վկաներից մինը թող յաւելացնէ մնացած տառերը, կամ թէ անգրագէտ մարդու ձեռքը բռնելով, առաջնորդէ նորան։ Այս կայսրի հօրեղբայր Յուստինոս առաջինը, ինչպէս կը տեսանենք յետոյ, տալու է մեզ մի այդպիսի օրինակ։

Հեշտ հասկանալի է, թէ մի ժամանակ, երբ տառերի գիւտը որպէս թէ արած չէր ազգի հարստականների և մեծատունների համար, երբ նոյն իսկ հոգևոր մարդիկը իւրեանց ժամագիրքը կարող չէին կարդալ, կամ թէ չէին հասկանում ինչ որ կարդումէին, որովհետև գրած էր լատիներէն. հեշտ հասկանալի է, որ մի այդպիսի ժամանակ ոչինչ սէր չունէր որ և իցէ կրթութեան հետ, արած չէ ոչ մի գիւտ, որ ար-

ժանի լինէր այս անուանը, և ոչ մի գրաւոր վաւերական, որ այժմ կարելի լինէր վայելել։ Հասկանալի է, որ ոչ ով պարապում չէր գիտութեան, որ նոյն իսկ հմտութիւնքը, որ այժմ երևումեն այնքան հարկաւոր, կեանքը վայելչացնելու, կամ թէ միայն տանելի կացուցանելու համար, թողած էին անհոգ և անխնամ։

Այս ժամանակը համեմատելով Յունաստանի և Հռոմի ծաղկեալ դարերի հետ, նկատելով այն աՀագին բազմութիւնը գրուածների, որ թողած են Պղատոնը, Արիստոտէլը, Կիկերոնը և միւսեր. այլև միտ դնելով այն բանին, թէ նախապատիւ զօրավար Յուլիոս Կեսարը իւր բանակի մէջ զբաղված էր պատերազմական արշաւանքների ստորագրութենով, բանաստեղծութեամբ ու աստեղաբաշխութեամբ. այնուհետև ի հարկ է պիտոյ էր զարմանալ այն ամենևին բարբարոսութեան վերայ, որի մէջ ընկղմած էին Եւրոպայի բոլոր աշխարհները միջին դարերի մէջ. և ցանկալի էր գիտել այդ օտարոտի իրողութեան պատճառքը։ Այս պատճառների աղբիւրը ոչ թէ այն մեծամեծ անցքերն են, որ բաղկացնումեն աշխարհի պատմութեան մի պատկերը, ինչպէս զոր օրինակ մեծանուն Գիբբոնի ճարտարապետական ձեռքը նկարել է. այլ շատ անգամ կային իրողութիւնք որ այնչափ աննշան են երևում, որ ճարտարապետը արժան չէր համարում ընդունել նորան իւր պատկերացոյցի մէջ, կամ թէ հայեցողքը, պատերազմի խառնակութենից և թագաւորութենների կործանութենից խլանալով, ուշադիր չեն այդ աննշան կարծեցած բաներին, որ և թէպէտ ծանրաքայլ կերպով, այնու ամենայնիւ պակաս կորստաբեր չեն։ Մեք տեսանումենք թէ ի՛նչպէս յանկարծ ջարդվումէր ծաղիկը կարկտից և շատ անգամ վերստին զուարթանումէր. բայց անտեսանելի կերպով մի ճճի ուտումէ և մաշումէ արմատը, և աննկատելի կերպով ծաղիկը ցած է խոնարհեցնում իւր գլուխը, որ յաւիտեան չը բարձրացնէ նորան միւսանգամ։

Հնութեան շատ տեղեակ մարդերից մինը, Մուրատորի անունով, դատողութիւն անելով այս բանի վերայ, ասումէ, թէ այս բարբարոսութիւնը միջին դարերի առաւելապէս յառաջացած է գրելի թղթի պակասութենից. և յիրաւի՛ զարմանալի բան է, որ մեր այժմեան գործածական թղթի գիւտը, որով լցվեցաւ այդ պակասութիւնը, պատահած է նոյն միջոցին, այսինքն 12-երորդ դարումը, երբ որ գիտութիւնքը վերստին զարթեցան իւրեանց քնից. ինչպէս որ լուսաւորութեան ընդհանուր տարածումը է գրատպութեան արուեստի անմիջական հետևանքը։ Յոյնք և Հռովմայեցիք իւրեանց անմահ գործերը գրումէին մագաղաթեայ ոլորածոների վերայ, և այս նիւթի ծանրագնութիւնը ոչ թէ միայն պատճառ էր, որ կարող էին գտանվել գրեանք սակաւաթիւ

հարստականների ձեռքում, թէպէտ սոքա շատ անգամ գործ չէին ածում նորանց. այլև նոյնպէս, որ այն գրքերից շատերը կորան ու անյայտացան։ Արդարև հին ժամանակներումը ունէին և այլ աւելի թեթևագին նիւթ գրութեան, այսինքն եգիպտոսեան պապիրոսը. բայց սա, գոնեայ Եւրոպայի մէջ, անհետացաւ 8-երորդ դարումը, ըստ որում պապիրոսեան տերևաբոյսի տնկարկութիւնը անփոյթ թողնեցաւ նոյն իսկ Եգիպտոսի մէջ, կամ թէ դժուարացաւ առուտուրքը Եգիպտոսի հետ, Արաբացոց տիրակալութեան պատճառով։ Ուրեմն ստիպուած էին միւսանգամ լցուցանել հարկաւորութիւնը թանգագին մագաղաթով. Յունաց և Հռովմայեցոց ականաւոր գրուածների օրինակքը օրէ օր հազուագիւտ էին լինում. և եթէ դոցանից մի քանիքը փրկված էին բարբարոսների սրի, կամ թէ կրակի բերանից, այնուհետև դոցանից ևս մի քանիքը պիտոյ է տեղ տային միւս աւելի հարկաւոր գրուածների։ Դեմոսթենէսի մի ճառը, կամ թէ Լիվիոսի մի գիրքը քերումէին, որ դոցա թանգագին մագաղաթի վերայ գրեն մի սուրբի վարք, ժամագիրք կամ թէ մի ընծայաբերութեան նամակ որ տուած էր մի վանքի. սկսեալ 8-երորդ դարուց, չէ գտանվում մի գիւտնական արձանագրութիւն, մի գիրք, որ գրած լինէր եգիպտոսեան պապիրոսի վերայ. բայց դորա փոխարէն, շատ ու շատ գրուածք եղած են քերած մագաղաթի վերայ։

Եթէ համեմատէինք մեր այժմեան կտաւաթղթի թեթևագնութիւնը թանգագին մագաղաթի հետ, ապա չը կար տեղիք զարմանալու թէ միջին դարերումը սակաւագիւտ էին գրեանքը և փոքրաթիւ նոցա ընթերցողքը. և ոչ այն բանի վերայ, թէ կրթութիւնը և լուսաւորութիւնը պակաս էին։ Երբ որ թղթի պատրաստութեան գիւտը արած էր, իսկոյն անհամար փաբրիկայք բացվեցան Եւրոպայի մէջ, այնքան թուղթ պատրաստելով և այնքան թեթևացնելով նորա գինը, որ ամենևին անկարելի էր համեմատել նորան մագաղաթի հետ։ Դեռ ևս 18-երորդ դարու մէջ, ինչպէս ասումէ Մուրատորին, մի քանի մանէթով ստանումէին մարդիկ այնպիսի գրուածք, որ միջին դարերումը արժած կը լինէին հազար ոսկի։

Յիրաւի, միջին դարերումը այնքան թանգ էր մագաղաթը, որ հարուստ իշխանաւորք միայն կամ քաղաքներ կարող էին մի քանի կտոր գիրք ձեռք բերել, որ մեծամեծ գրատուններ ամենևին անհնար բան էին։ Ամենահարուստ վանքերի մէջ, կամ թէ Վատիկանումը գտանվումէին գրատունք, թէպէտ սոցա ցուցակները շատ պակասաւոր էին և քանի՛ քանի՛ գրատունք աւերված ու փոշիացած էին բարբարոսների պատերազմի երեսից։

Թէ այն ժամանակներումը ինչպէս թանգագին էին գրեանքը, կարելի է եզրափակել այս իրողութիւններից: Մի Հալբերշտատեան եպիսկոպոսի քարոզների օրինակի համար, որ եթէ մինչև այժմ մնացած լինէր, պիտոյ է գործ ածվէր որպէս փաթեթաթուղթ, հատուցած է մի Անժուեան կոմսուհի 200 ոչխար և 15 չափ ցորեան: Բռնակալ Լուդովիկոս տասն և միերորդին, երբ որ սա կամենումէր Փարիզի բժշկական ֆակուլտետից մի արաբական բժշկի գրուած միոս առնուլ, պիտոյ էր իւր արծաթեղէն անօթների մի մեծ մասը գրաւ դնել և բաց ի դորանից մի հարուստ երաշխաւոր կացուցանել: Մնացած կայ մի այլ նամակ, որի մէջ մի Ֆերրիեցի աբեղայ Լուպոս անունով, 855 թուակ. երրորդ Բենեդիկտոս պապից շատ պաղատագին խնդրումէ, առ ժամանակ մի ուղարկել նորա վանքի համար սուրբ Հիերոնիմոսի մեկնութիւնը Երեմիա մարգարէի, այլ և Կիկերոնի և Կվինտիլիանոսի գրուածքը ճարտարախօսութեան մասին, և խաչով ու աւետարանով խոստանումէ, թէ այս գրուածքը, ինչքան կարելի է, շուտով կ'օրինակվին և յետ կը դարձուցանվին. պատճառ, յաւելայնումէ այդ աբեղան, թէպէտ Ֆրանսիայի մէջ կային այդ գրքերի հատուկտոր նշխարքը, բայց ոչ մի հատ լիակատար օրինակ: Սորանից բացայայտ է նոյնպէս, որ սոյն ժամանակների աբեղայքը ախորժակ (սէր) ունէին կլասսիկական ուսումնականութեան մասին և սիրումէին գրեանք կարդալ, այլ և օրինակել, միայն թէ ունեցած լինէին: Մուրատորի գիտնականը մի ծանօթաբանութիւն է առնում, որ կարելի է վերաբերել և դէպ ի 19 դարը, այսինքն. ինչքան պիտոյ է մեզ շնորհակալ լինել այն ժամանակի աբեղաներից, որ օր ու գիշեր պարապած էին գրեանք դուրս գրելու, որ այդպէս բազմապատկեն նոցա օրինակները և պահպանեն գալոց ազգերի համար. և ինչպէս պիտոյ էր մեզ ամաչել, եթէ մեք, թէև հարուստ էինք գրքերով և այլ հնարներով դէպ ի լուսաւորութիւն, այնու ամենայնիւ աւելի ծոյլ և աւելի տգէտ էինք քան թէ նոքա: Մի մասը այն պարծանքի, որ Մուրատորին տալիս է միջին դարերի աբեղաներին Եւրոպայումը, պատկանումէ և Հայոց աբեղաներին նոյն ժամանակի միջոցում. բայց և նոյն ամօթը ու նախատինքը որ դնումէ նա ապագայ ծոյլերի և տգէտների վերայ, շատ ու շատ մասնով վերաբերվումէ դէպ ի այժմեան աբեղայքը Հայաստանի, որ ամենեին աննման են իւրեանց մրս գլուխ, իմաստասէր և առաքինի նախնիքին, որպիսի էին Սահակ Պարթևային, Մովսէս Խորենացին, Եղիշէն, Ներսէս Շնորհալին և այլն և այլն:

Այս պատճառով այն, գրքերից աղքատ ժամանակներումը, մի գիրք, որ այժմ մուրացկանը դժուար թէ ընդունելու էր որպէս տուրք,

առաւել պատուական պարգեւ է եղած, որ կարելի էր տալ մի մարդու, մի այնպիսի պարգեւ, որ իւր տիրոջը որ այդ գիրքը իւր փոքրիկ ժողովածոյից դուրս էր տուած, աւելի փառք ու պատիւ էր բերում, քան թէ այժմ մի գիրք իւր հեղինակին. պատճառ, այդպիսի պարգեւատուն, եթէ նորա ընծայաբերութիւնը արած էր մի վանքի, դորանով փրկումն իւր հոգին դատապարտութենից միւս կեանքում։ Այսպիսի ընծայաբերութեան համար ստացվումէր՝ մի մանրամասն վկայաբանութիւն, որ ընծայաբերի վարքագրութեան և տապանագրի մէջ յիշատակվումէր իբրև նորա բարեգործութենների պսակը։ Մինչև այժմ ևս կարելի է տեսանել Վերոնա քաղաքի մայր եկեղեցու մէջ մի աւագ սարկաւագի փառահեղ մարմարիոնեայ դերեզմանաքար 9-երորդ դարուց, և նորա վերայ մի տապանագիր որ այնպիսի սխրագործութեան պարծանք է տալիս նորան, որպէս թէ նա 218 յաղթութիւնք էր արել, ըստ որում այդքան գրչագիրք օրինակած էր և մի մեկնութիւն Աստուածաշնչի վերայ ընծայել էր մի վանքի։

Այս պակասութիւնը գրքերի առիթ տուեց մի հոգևոր կարգի հաստատութեան, որ Ռեֆորմացիայի և գրատպութեան գիւտի պատճառով անհետացել է։ Դէպ ի 14-երորդ դարու վերջը Գեռհարդոս Գրութը Դեվենթեր սահմանից հիմնարկեց Միահաղոյն կեցութեան եղբարց կուշէը որ և, ինչպէս դորա վերայ պատուաստած միաբանութիւնը կանոնաւոր ժամասացների Ուինդեսհէյմի մէջ, տարածվեցաւ Նիդերլանդիայի և նորա դրացի գերմանական աշխարհներումը, ունէր 120 ստորագրեալ վանքեր և իւր միաբանների մէջ մեծահամբաւ ուսումնականներ, զոր օրինակ Կեմպիսոս։ Այս հոգևոր եղբայրակիցների առանձին կանոնադրութիւնը և պարապմունքը այն էին, որ նոքա դաստիարակեն տղայքը և գրեանք օրինակեն. մանաւանդ թէ, ինչպէս ինքն ըստ ինքեան հասկանալի է, եկեղեցական սուրբ հարց գրուածքը։

Գրելի նիւթի թանգութիւնը թղթի գիւտովը վերջացաւ. այժմուս Եւրոպայցիք աւելի փոքր պատճառ ունէին գանգատելու գրքերի պակասութեան քան թէ լիութեան և առատութեան վերայ. օրինակ. Լէյպցիգեան տօնավաճառը ամեն տարի ասես թէ մի գետի պէս, որ պատառել էր իւր թումբերը, իսկապէս ջրհեղեղ է բերում բոլոր Գերմանիայի վերայ։ Եւ ինչպէս անցած ժամանակներումը մի ականաւոր հեղինակի մագաղաթեայ գրուած տեղ էր պատրաստում մի սուրբի վարքագրութեան համար, նոյնպէս այժմ Եւրոպայի տպարանքը և թուղթը թանգանումեն մատենագիր հեղինակների բազմութենից. և երբեմն այս կամ այն ուսումնական գրուածը հալածվումէ բոմաններից։ Այդու ամենայնիւ չէ կարելի ուրանալ այն օգտակար հետևանքը որ թղթի

գիւտը ունեցած է ոչ թէ միայն գիտութիւնքը յառաջադէմ առնելով, այլև տարածելով ընթերցանութիւնը (գիրք կարդալը) և կրթութիւնը ժողովրդի ստորին դասակարգերի մէջ. և մեր լուսաւոր 19-երորդ դարը ինչքան գերազանց է այն խաւար 8-երորդ կամ 9-երորդ դարերուց։ Այս միջոցին պիտոյ է գիտութիւնքը ծակամուտ լինէին վանքերի մութ խցերի մէջ և աբեղայ մարդը միայն գիրք էր կարդում իւր աղօտալոյս լապտերի մօտ։ Այժմ, թողունք Ասիան, որ թէպէտ մարդկութենից դուրս չէ, բայց ափսոս, որ զանազան տխուր պատճառներով շեղվել է մարդկութեան գեղեցիկ շաւիղներից, Եւրոպայի մէջ սպասաւոր աղախինք անգամ ընկեր են ընթերցանութեան ժողովների և ունին քաղաքավար նամակախօսութիւնք ծառաների հետ։ Այն ժամանակներումը կարող չէր կարդալ մեծ կայսրը, այժմ դպրատան մանուկները լինումեն մատենագիրք։ Այն միջոցներումը պիտոյ էր դպրոցների կամ թէ իւր ուսումնասենեկի մէջ երկար կեանք մաշել, որ իրաւունք ստացվէր դատողութիւն առնելու գիտնական առարկաների վերայ. այժմ հացկերութեան վերայ և ժողովների մէջ վճռվումեն ամենածանր խնդիրներ այնպիսի հեշտութեամբ, որ պիտոյ է ամաչեցնէր մեր նեղսիրտ իմաստակ նախահարքը. ով բաղդաւոր ժամանակ. երանի՜ նորան որ ապրել է այս մեր ամենաբաղդաւոր դարու մէջ։

՝Նշանագրերի գիւտը, որ գուցէ թէ առաւել մեծախորհուրդ գիւտն է որ մի ժամանակ արել է մարդկային հանճարը, ոչինչ յարակցութիւն չունի լեզուի հետ, այլ միայն պատկանումէ այն կերպին որ գործ ենք դնում, առանց խօսելու, մեր մտածութիւնքը գրաւոր նշաններով բացայայտելու համար։ Երբ որ Եւրոպան այս գիւտը ստացել էր Ասիայից, շատ բնական բան էր, որ Եւրոպացիք կամեցան գործ դնել նորան։ Տաղասացութիւնք, անցքեր և ամենայն բան, ինչ որ հարքը իւրեանց որդիների յիշողութեան մէջ տպաւորել էին, և ինչ որ այդպէս ազգէ ազգ աւանդել էին, այնուհետև սկսեցին պահպանել գրաւոր յիշատակով որ առաւել ապահովն էր։ Մի բնական բան էր, որ մարդիկ հոգ տանելով, գալոց դարերի համար անարատապէս յետ թողուլ անցած դարերից ժառանգած իմաստութիւնը, նախ և յառաջ մտածեցին մի անեղծանելի գրութեան կերպ հնարել. բայց նոյնպէս բաւական էր, որ, երբ գրութիւնը շատացաւ, պիտոյ էր թեթևացնել այդ գործը։ Այսպէս, սկզբումը գրումէին ամենապինդ նիւթերի վերայ և գնալով գնալով գործ դրեցին աւելի կակուղ նիւթեր, մինչև որ բնութեան գրեթէ բոլոր բերքերը, որ կարող էին սպասաւորել որպէս գրելի նիւթեր, հարկատու կացուցին սկսեալ մարմարինից մինչև կտաւի ծուէնքը, որ աւելածքի միջից փողոցումը հաւաքվումէին։ Քար, արճիճ,

փղի ոսկր, փայտ, շնչաւորների կաշի, ծառերի կեղև, տերևներ, մոմ, կտաւի ծուէնք (կտորտանք) հետ զհետէ գործ են դրված որպէս հնար, նախնի ժամանակների անցքերը, բանաստեղծի զգացողութիւնքը, իմաստունների խրատները և ամէնայն գիտք և տեղեկութիւնք աւանդելու գալոց ազգերին։

Սակայն հին, իսկապէս գրելի նիւթը, երբ որ արդէն բաց ի քարի մէջ փորելուց կամ թէ փայտի մէջ քանդակելուց գործածական էին և այլ նիւթեր, է անտարակոյս եգիպտոսեան պապիւրոսը, որի անունը պահպանվել է մինչև այժմ եւրոպական լեզուների մէջ։ Այդ գիւտը, ինչպէս ասումեն, արած է Մեմֆիս քաղաքումը, և բնապատում Պլինիոս հռովմայեցին դորա պատրաստութեան կերպը ճշգապէս նկարագրելով պատմումէ, թէ գրուածքը Նումա Պոմպիլիոսի, որ կեցած է 700 տարի Քրիստոսից յառաջ, 500 տարի նորա մեռանելուց յետոյ գտած են մի քարեղէն արկղի մէջ գետնի տակ, և գրած էին եգիպտոսեան պապիւրոսի վերայ. նմանապէս մի տաճարի մէջ գտած նամակ, որ 3,000 տարի յառաջ գրել էր Սարպիդոն թագաւորը Տրոյադայից։

Եգիպտացիք պատրաստումէին այս գրելի նիւթը մի ճախնային բոյսից, այսինքն, Նիլոսեան պրտուից որ ասվումէ Papyrus Nilotica, այլև Biblos. վերջին անունը պահվել է Աստուածաշունչ գրքի վերայ Եւրոպացոց մէջ, այսինքն βίβλος, βιβλίον և βιβλιοθήκη խօսքի մէջ, որ նշանակումէ գիրք։ Այդ բուսականը ունէր Եգիպտացոց համար նոյն բազմամասնեայ օգտակարութիւնը, ինչպէս բամբուսեան եղէգը Չինէացոց համար։ Նորա արմատը գործ էր ածվում որպէս վառելի փայտ և հիւսնութեան համար, բունը որպէս նաւաշինութեան նիւթ. ներքին կեղևից յօրինվումէին առագաստներ, հանդերձեղէնք, անկողնի ծածկոցք, չուանք, ջրախից արկղներ (որպիսի էր այն արկղը որի մէջ դրած էին Մովսէս մանուկը որ Նիլոս գետի վերայ գտաւ Փարաւոնի դուստրը). ծառաբունի հիւթալից մասունքը պիտանի են որպէս սնունդ և բժշկական դեղ. թաղանթային մասունքը (քարտա) որպէս գրելի նիւթ։ Եւ Սիկիլիա ու Մադագասկար կղզիքը բուսուցանումեն այդպիսի թղթատունկ. բայց հնարագէտ Եգիպտացիք միայն գործ են ածել այս տունկը բնութեան, այն խորհրդով, որի վերայ խօսումենք այս տեղ։

Պապիւրոսեան թղթի պատրաստութիւնը էր անչափ պարզ, ծառաբունից սնեղով բաժանած կտորները խաչաձև դրվումէին միմեանց վերայ, մինչև ստացել էին բաւական հաստութիւն. և ապա Նիլոսեան մածուցիկ ջրովը կապակցվումէին։ Երբ որ զանգուածը չորացած էր, ասվումէր «ἱερὰ πάπυρος», որովհետև գործ էր ածվում լոկ կրօնական գրուածների համար, և միւս գրեանք չունէին Եգիպտացիք բաց ի սոցանից։

Հռոմէական իմպերատորքը, Եգիպտոսի աշխարհը հպատակ կացուցանելով իւրեանց տիեզերասաստ գաւաղանին, հոգաբարձու եղան այս բազմապիտանի պատրաստութիւնը կատարելագործելու լուանալով և յղկելով: Միանգամ լուացած նիւթի պատրաստութիւնը ասվումէր Օգոստեան, Augusta, երկու անգամ լուացածի պատրաստութիւնը Լիվիեան Livia»: Վասն Հայրենեաց (Pro patria) անունով պապիրուսեան թուղթը չկար դեռ ևս Օգոստոսի օրերումը, կամ թէ անհետացած էր: Այս վաճառելի նիւթը նոր քաղաքական կառավարութեան և դիւանատների համար մի այնպիսի մեծակշիռ բան էր, որ Հռոմը կարօտ էր միշտ Եգիպտոսին ոչ թէ միայն իբրև իւր ցորենի շտեմարանին, այլև որպէս իւր թղթահասոյց գաւառին. և Եգիպտոսից ստանալի թէ ցորենի և թէ թղթի պիտոյքը յետանալով, յառաջացած են Հռոմի մէջ խռովութիւնք, զոր օրինակ Տիբերիոս կայսրի օրերումը: Թուղթը էր մինը այն գլխաւոր վաճառելի բաներից, որոնցով առուտուրք ունէր Աղեքսանդրիա, ամենամեծ վաճառաշահական քաղաքը հին ժամանակների, այնպէս որ բռնաւոր կամ դերակայսր Փիրմոսը տիրապետելով Եգիպտոսին, պարծենումէր թէ կարող է պահպանել իւր բոլոր զօրքը թղթավաճառութեամբ միայն. զարմանալու տեղիք կայ, որ ոչ մի պատմաբան այս իրողութիւնը յառաջ չէ բերած որպէս վկայութիւն, թէ այն ժամանակին ահա կային զօրքեր, որ իւրեանց թոշակի վճարը ստանումէին թղթից:

Երբ որ 8-երորդ դարումը եգիպտոսեան թուղթը չքացած էր Եւրոպայից, երևեցաւ բամբակեայ թուղթը որ 9 կամ 10-երորդ դարումը հնարագործվելով, դուցէ թէ իւր թանգագնութեան պատճառով չէ դարձել ընդհանրապէս գործածական: Նա առաւել անյարմար էր հին թուղթը որ պատրաստումէին ամենայն տեսակ ծառերի կեղևից, մանաւանդ թէ տիլիայի կեղևից, որովհետև շատ հաստ, կոշտ ու բեկանուտ (փշրելի) էր, այնպէս որ նորա վերայ գրած բանը հեշտ կարող էր բաց ստնուլ:

Հեշտ գուշակելի բան է, որ այն աշխարհումը ուր բամբուսեան գաւաղանով ամենայն բան յառաջ է գնում, ուր քաղաքավարութիւն և պալատական ձևեր անգամ ուսուցանումեն այդ գործիքով, պիտոյ է թուղթ պատրաստվէր բամբուսից: Բայց գիտելի է, որ չինէական թուղթը լինելով միշտ աւելի մեծադիր, աւելի նուրբ, կակուղ և կոկ քան թէ եւրոպականը, պատրաստվումէ շատ զանազան նիւթերից. և գրեթէ այս մեծ թագաւորութեան ամեն մի գաւառը ունի իւր յատուկ թուղթը: Չինէացոց Մետաքսեղէն ասած թուղթը որ Եւրոպացիք գործ են ածում, նուրբ պղնձատիպ պատկեր ծածկելու համար, պատրաստվումէ ոչ թէ մետաքսից, այլ բամբակից: Թող այս. Չինէացիք չինու-

մէն թուղթ շերամների բոժոժից, բամբուսեան եղէգնից, թթենու կե֊ղևից, կտաւից, յարդից և այլն․ բայց նոցա առաւել պատուական և սովորական թուղթը շինվումէ Քօւլօւ անուն ծառից այսպիսի կերպով, որ մերի հետ շատ նմանութիւն ունի։ Կեղևի նուրբ կաշին այնքան եր֊կար չարդումէն ջրի մէջ, մինչև դառնումէ խմոր․ այս հեղանուտ խմո֊րից գաղափարներով դուրս են հանում թերթեր 12 ոտնաչափ մեծու֊թեամբ․ սոքա կոխվումէն պաղեղեան ջրի մէջ, որ մեր սոսնձի փոխա֊նակն էր և տալիս է նոցա թղթին մի գեղեցիկ արծաթագոյն փայլողու֊թիւն։ Չինէացոց թղթի առաւել գերազանցութիւնը է նորա կատարեալ ողորկութիւնը, որ այն պատճառով աւելի հարկաւոր էր, ըստ որում Չինէացիք գործ չեն ածում մեր պէս գրիչ, այլ իւրեանց տառանշան֊քը նկարումէն մազեղէն վրձինով։ Բայց նոցա թուղթը աւելի շուտով է մաշվում քան թէ մերը, աւելի բեկանուտ է և աւելի հեշտ ընդու֊նումէ գիճութիւն և փոշի։ Ինչպէս որ մեր, նոյնպէս և Չինէացոց մէջ, թուղթը գործ է ածվում ոչ թէ միայն որպէս գրելի նիւթ, այլև որ֊պէս լուսամուտների աղիւսակք, զգեստի աստառ և այլն։

Ճափոնեան թուղթը պատրաստվելով նոյն ծառից, իւր փայլողու֊թենով և ողորկութենով ոչինչ պակաս չէ չինէականից․ բայց աւելի կոշտ է քան թէ սա, այնպէս, որ կարելի է նորանից պատրաստել չուան֊ներ և կերպասներ։ 150 տարի յառաջ Փարիզի մէջ կանայքը կրումէին դորանից շինած զգեստներ որ իւրեանց փողփողելովը և ճայթելովը ա֊մենևին նոյն պիտանութիւնը ունէին, ինչ որ հովահարքը։

Պարսկական թուղթը պատրաստվումէ բամբակեայ ծուէնքից և ողորկվումէ խեցեմորթով, որ շատ յարմար էր Պարսից գրութեան կերպին, այսինքն տափակ եղեգնեայ գրչով սողացնելով ձեռքը կոկած թղթի վերայ։

Անասունների մորթից պատրաստած գրելի նիւթը, որ շատ ծա֊նօթ էր հին ժամանակներումը, որ և Պերգամոս աշխարհից, ուր հնար֊ված է դա, ստացել է անունս Պէրգամէնօ (մագաղաթ), այլև փիլի ոս֊կրից յօրինած թուղթը գործ են ածվում մինչև այժմ, բայց միայն դիպլոմների կամ թէ գրատախտակների համար։ Մի նոր գիւտ է սևա֊քարեայ տախտակը որ առաւել տնտեսական գրելի նիւթն է, որի վերայ ներկայումս կատարվումէ աւելի մեծ մասը հաշիւների, սկսեալ ձուերի հաշուից, որ գրումէ նորա վերայ տանտիկինը, մինչև այն հաշուարա֊րութիւնքը որ կատարումէ աստեղաբաշխը մոլորակների ընթացքի խո֊տորման վերայ։

Մեր այժմեան թղթի գիւտը այնպէս է, ինչպէս միւս հանրաշահ գիւտերը ըստ մեծի մասին․ այսինքն անյայտ է մեզ, թէ ե՛րբ կամ ո՛վ

է արել այդ գիւտը։ Շատ հաւանական է, թէ դա 11 կամ 12-երորդ դարումը բերած է Արաբացոց ձեռքով Ասիայից դէպ ի Եւրոպա, թէ-պէտ միւսերը համարումեն դորան գերմանական գիւտ, և 14 դարուց յառաջ ոչինչ գրուած չէ գտանվում այսպիսի թղթի վերայ։

Նրանց հակառակութեան, է սա մինը այն մեծապէս օգտակար գիւտերից որ նրբ և իցէ արած էին։ Այն նիւթը որից պատրաստվումէ կտաւածուէնքի թուղթը ոչ թէ միայն անօգուտ է ուրիշ բանի համար, և թղթի գիւտից յառաջ [illegible]ց էր ձգվում որպէս ամենևին անպիտան, այլև նախ քան թէ աղբի միջից դուրս էր երևում որպէս մի նոր յօ-րինուած, արդիւնաւոր ոչ թէ միայն հաց տալով այն մշակներին որ աշխատումէին թղթագործական աղօրիքների մէջ, այլև այն մարդերին որ պարապած են ծուէնքներ հաւաքելու փողոցների մէջ։ Այս ծուէն-քը պիտոյ է լինին կտաւեայ կամ կանեփեայ նիւթից. պատճառ, մե-տաքսեղէնի կամ բրդեղէնի ծուէնքը տալիս են միայն գորշագոյն կամ անօսր թղթեր։ Մեր թղթի նիւթը բաղկանումէ յատկապէս կանեփի կամ կտաւի փայտեղէն կեղևաթելերից որ գործածութեամբ որպէս հանդերձեղէնք և լուացվելով մոխրաջրի մէջ, ազատված էին իւրեանց սոնդային մասներից։ Ուրեմն կարելի է ենթադրել, թէ այն թեփը կամ թէ փշրանքը կանեփի և կտաւի ներքնամորթից, երբ որ ջարդու-մէին և զղումէին նորանց, կարող են նոյնպէս յարմարութեամբ գործ ածվիլ թղթի պատրաստութեան համար. և արդարև կանեփի ներքնա-մորթից շինած են արդէն շատ նուրբ թուղթ։ Նմանապէս կարելի է թուղթ պատրաստել միւս շատ բուսականների ներքնամորթից, միայն թէ կամենայինք օգուտ քաղել բնութեան անսպառելի հարստութե-նից, որ շատ անգամ ծածկած է աննշան կերպարանքի տակ։ Եւ այս մասին կարօտութիւնը և պակասութիւնը անօգուտ չէր մարդուս, եթէ ունի սա հետամուտ հանճար և հաստատուն կամք օգուտ ձեռք բերելու. Կարօտութիւնը ուսուցանումէ աղօթել, բայց նա ուսուցանումէ մի այլ աւելի բարւոք, փրկաւէտ հնար; այսինքն, օգուտ քաղել շատ ու շատ բաներից, որ մինչև այժմ անգործ մնացած էին, և այդպէս առիթ է դառնում ամենաշահ գիւտերի։ Յիրաւի կարող ենք ասել; թէ կարօ-տութիւնը հարստացնումէ մարդկային ազգը. և զոր օրինակ մի իմաստուն հայր կանուխ սովորեցնումէ իւր երեխայքը տանելու պակասութեան, նոյնպէս իմաստութեամբ էր այն իշխանաւորների արածը, որ լինելով ամբողջ ազգերի դաստիարակութեան հոգաբարձուք, ժամանակ առ ժամանակ թոյլ են տալիս նոցա կարօտութիւն զգալ, որ այդպէս պատ-ճառ տային նոցա լարել իւրեանց խելք ու զօրութիւնը, գիւտեր գոր-ծել և բնութեան աւելածքից ձեռք բերել այն ոսկու հատիկները, որ

այլապէս կորչելու էին։ Եւ ինչպէս անիրաւացի էր մեր գանգատը ընդհանուր թշուառութեան վերայ, փոխանակ շնորհակալութեամբ ընդունելու դորան որպէս հարստանալու ճանապարհ։ Մեք այս բանի մէջ այնպէս կարճատես ենք, ինչպէս այն մշակը որ աշխատելով սարերի խորքումը, մոռանում է թէ այն ոսկին որ նա դուրս էր հանում հողի տակից, հասուցանում է աշխարհին ընդհանուր օգուտ։ Բայց ինչքան ոսկի դեռ ևս թաղած կայ երկրի մէջ. ինչքա՛ն օգտակար և դեռ ևս անգործ բարութիւնք դրած են բնութեան [illegible]ացումը, որ կարօտութիւնը միայն կարող է յայտնի կացուցանել մեզ։

Նու հասարակ Եւրոպական շերամի հիւսուածքից, ինչպէս Չինացիք իւրեանց մետաքսագործ շերամից, պատրաստած են պատուական, ամուր, բայց ոչ սպիտակ թուղթ։

Թղթի պատրաստութեան եղանակը այսպէս է. նախ և յառաջ պէտք է կտաւի ծուէնքը փտեցնել, նորանց ջարդելով ու մանրելով խիւս շինել, որ լուծանվում է ջրի մէջ. դորանից դուրս հանած թերթերը պիտոյ է սոսնձել, սեղմել և յղկել։ Բայց մինչև թուղթը ստանում է իւր կատարելութիւնը այնպէս, որ կարելի էր նորա վերայ գրել, պէտք է կատարվին նորա վերայ 32 զանազան գործողութիւնք, որոնց գլխաւորքը սոքա են։ 1) կտաւի ծուէնքը յստակումն նոցա վերայ եղած կեղտից և ապականութենից, դասակարգումն նորանց մտադնելով նոցա մեծութեանը և պատուականութեանը, քակումն կարերը և այլն. 2) ապա դնումն նորանց ջրի մէջ, մինչև փտումն նոքա. այս բանը կարօտ է մօտ երկու ամսաչափ ժամանակի. 3) այնուհետև կտրատումն նորանց և լուանումն յստակ ջրի մէջ. 4) յեղափոխութիւնը դէպ ի խմոր կամ խիւս լինումէր յառաջ լօսելով, բայց այժմ լինում է ջարդ ու փշուր անելով միջնորդութեամբ ցիլինդերների, որ ասվում են Հոլլանդացի. 5) այս խմորը տաք ջրի մէջ անդադար խառնելով լուծանվում է. 6) այս խիւսատեսակ հեղանիւթի մէջ կոխելով հանումն մի գաղափար որ՛ ունի սահմանեալ թղթի մեծութիւնը, և չէ մի այլ բան, եթէ ոչ մի եղերաւոր աղիւսեակ, որի յատակը բաղկանում է նուրբ մետալեան լարերից, որի մէջ հիւսած է Ջրանշան ասած բանը, որ և, ինչպէս մետալեան լարերի շերտերը, կարելի է նկատել, երբ որ թուղթը բռնումես լուսի հանդէպ։ Աւելորդ նիւթը դուրս է թափվում լարերի միջոցներից. այս մետալեան լարերը պիտոյ է այնպէս խիտ դրած լինէին, որ բաւական շատ խիւս յետ մնար, մի թերթ այնպէս հաստ, ինչպէս հարկաւոր էր, կերպաւորելու համար. և մշակը պիտոյ է յաջողակապէս ցնցելով հեղանիւթը, տալ թերթին հաւասարութիւն և համակից թանձրութիւն. այս է բոլոր աշխատութեան ամենադժուա-

րին և ամենահարկաւոր մասը, որով իբրև թէ սաղմը դէպ ի լոյս էր ծնուցանվում· և չէ կարելի չը զարմանալ տեսանելով, թէ ինչպէս այն հեղանիւթը մի րոպէի մէջ եղանակի փոփոխութենից, երբ որ տաք անօթի ծոցից տեղափոխվումէր [դէպ ի աւելի պաղ օդը, փոփոխումէ իւր բնութիւնը և հոսականութենից դառնումէ մի ամուր մարմին· 7) երբ որ ջուրը նորածին թղթի միջից դուրս է քամվել, ամեն մի թերթ դրվումէ մի յստակ թաղիքի վերայ· 8) մի բաղմութիւն մօտ 200 թերթի երկու անգամ միմեանցից յետոյ դրվումէ մի սեղմարանի տակ, ջուրը ամենևին դուրս ձգելու համար· 9) 7 կամ 8 թերթաչափ պրակներ, աւելի չորացնելու համար կախվումեն չուանների վերայ, և սորանով ամեն մի թերթ միջամասնումը ստանումէ իւր ծալքը։ 10) Երբ որ թուղթը առաջին անգամ այսպէս չորացուցվել էր բոլորովին, ապա, եթէ պիտոյ է գործ ածվէր որպէս գրելի թուղթ, քարշվումէ սոսնձային ջրի միջից և ապա կրկին դրվումէ սեղմարանի տակ, ջուրը դուրս ճնշելու համար· 11) երբ որ այս եղած էր, առանձին թերթերը բոլորովին ցամաքեցնելու համար, մեծ հնոցաջերմ տան մէջ կախվումեն չուանների վերայ, ուր նոքա ենթարկված են օդի, բայց ոչ արևի ներգործութեանը։ Այս բանը պիտոյ է լինի խիստ, սոսնձելուց յետոյ, և թուղթը չէ պիտոյ, որ երեք օրից աւելի, հնոցաջերմ տան մէջ մնայ, եթէ կատարելապէս լաւ պիտի լինէր։ Սորանից բացայայտ է արդէն, թէ թղթի պատուականութիւնը որքան կախ էր այս տան շէնքից կամ դրութենից, որպէս և եղանակից և կլիմայից, և թէ մի անհիմն բան էր ասել, թէ ամենայն տեղ, առանց միտ դնելու այս պայմաններին, կարելի է ընտիր թուղթ պատրաստել։ 12) Այնուհետև թուղթը պրակ պրակ բերվումէ սեղմարանի տակ և մնումէ այդպէս 12 ժամ· յետոյ առանձին թերթերը ցնցելով բաժանվումեն և դարձեալ 12 ժամով դրվումեն սեղմարանի տակ։ 13) Գրելի թղթի առանձին թերթերը դրվումեն կաշու վերայ և մի ծանր մրճով կամ թէ քերիչներով ողորկվումեն։ 14) Ամենայն թերթ բռնումեն լուսի հանդէպ, որ գտանեն նոցա ամենափոքր պակասութիւնքը· և բոլորովին մաքուր թերթերը որոշվումեն նոցանից որ ունէին ջրաբիծք կամ շատ կարճ էին, կամ թէ պատառուած, կամ թէ ծալեր ունէին իւրեանց մէջ։ Պատառված թերթերը, երբ որ սոսինձը եփուն ջրով հանած էին նոցա միջից, դարձեալ մշակվումեն կտաւածուէնքի հետ միասին· կիսաթերթերը որ ամենևին մաքուր էին, բաց են կտրում և յօրինումեն նոցանից նամակաթուղթ· 15) յետոյ համարվումեն թերթերը և դրվումեն միասին 24 թերթաւոր պրակներով, եթէ գրելի թուղթ էր, կամ թէ 25 թերթաւոր պրակներով, եթէ տպելի թուղթ էր։ Ամեն մի պրակ օրաչափի ժամանակով

դրվումէ սեղմարանի տակ․ 16) Ամէն մի կապոց 20 պրակով դարձեալ սեղմւումէն, յետոյ պատատումէն խոշոր թղթով, կապումէն թելերով և վերջին անգամը սեղմւումէն․ ապա համակարգումէն տասն տասն կապոց մի տեղ և պահումէն մի ցամաք շտեմարանի մէջ, մինչև կարելի էր յանձնել նորան գնողին և արծաթ շինել։

Այն զօրութիւնը որ շարժումէ թուղթ պատրաստելու հարկաւոր եղած մեքենայքը, է սովորաբար ջրի վայրահոսութիւնը․ ջուրը և այլ խորհրդով անհրաժեշտ հարկաւոր է թղթագործական փաբրիկաների մօտ․ բայց, սկսեալ մի քանի ժամանակից, մեծ արդիւնաւորութեամբ գործ են ածվում այս տեղ եռացրած ջրի շոգիքը։ Մի այսպիսի շոգեշարժ թղթագործութեան փաբրիկա շինած է Պետերբուրգի դարպասի մօտակայքումը, Կատերինհոֆի մէջ, որ հիանալի աջողակութեամբ գործ է կատարում։

Մեր կտաւանիւթեայ թուղթը հասուցած է այնպիսի կատարելութեան որ չէ թողում մեզ ոչինչ աւելի ցանկալի բան, բաց ի նորանից որ լինէր դա մի փոքր աւելի թեթևագին և անեղծանելի․ թուղթը վտանգի տակ է կրակի երեսից, և շատ փոքր նիւթեր կան, որ լինէին այնպէս հեշտ այրելի, ինչպէս թուղթը։ Այս պատճառով փորձած են թուղթ պատրաստել Ասբեստից որ ոչ թէ միայն անայրելի, այլև բաւացի մաքրով անեղծանելի է․ պատճառ, Ասբեստից յօրինած թուղթը կրկին և երրորդ անգամ գործածելու համար, հարկաւոր էր միայն ձգել նորան կրակի մէջ, որ իսկոյն սրբելու է նորա վերայի գրածը, առանց վնասելու թղթին։ Եւ կտաւանիւթեայ թղթին, յաճախ անգամ տոգորելով նորան սոմնձային կամ պաղլեղեան ջրով, տալիս են բաւական դիմացկոտութիւն և անայրելութիւն։ Բայց այսպիսի պատրաստութիւնը ծանրագին և բազմաշխատ գործ լինելով, հրաժարված են դորանից դէպ ի սովորական կարգը։

Խօսելով թղթի պատրաստութեան վերայ, անպատշաճ չէր քանի մի խօսք ասել այս տեղ և գրչաթևերի գիւտի մասին։ Բեքման Գերմանացու, գիւտերի պատմագրքից որ մի շատ ուսումնական գործ է, ուր և շատ տեղեկութիւնք հաւաքած են այս մասին, թող մեր ընթերցողներին մասնաւորենք առաւել մտառութեան արժանի գիտելիքը։

Մի անյայտ մատենագրի պատմելով, Օստգոթեան թագաւորութեան հիմնարկուն Իտալիայի մէջ, այսինքն մեծ թագաւոր Թէոդորիկոս, այնքան տգէտ ու բթամիտ էր, որ իւր տասնամեայ թագաւորութեան միջոցին չը կարողացաւ ուսանել իւր անուանի չորս տառը ստորագրել մի թղթի ներքևում։ Այս պատճառով հրամայեց նա շինել մի ոսկեղէն նուրբ տախտակ, որի մէջ այս չորս տառքը Թէոդ․ կտրելով ձևակերպված

էին. այս նուրբ տախտակը դնումէր նա թղթի վերայ, տանումէր գրիչը նորա բացուածների միջով և այսպէս ստորագրումէր իւր անունը։ Եւ Գիբբոն մեծանուն Անգլիացի պատմաբանը իւր History of the decline and fall of the empire Roman գրքի մէջ ընդունումէ այս վկայութիւնը. բայց կասկած ու տարակոյս շատ կայ այդ բանի ստուգութեան մասին նախ որ այդ մատենագիր վկայի ոչ անունն է յայտնի և ոչ երբ կեցած լինելը։ Երկրորդ նա խօսումէ Թէոդորիկոսի տասնամեայ թագաւորութեան մասին, բայց ամէն մարդ գիտէ, որ այս Թէոդորիկոսը թագաւորել է 33 տարի. կամ գուցէ թէ այդ վկան կամի ասել թէ մինչեւ թագաւորդ տասնամեայ աշխատութենով միայն կարողացել է գրել այն չորս տառերը։ Երրորդ նոյն վկան մի շատ բացայայտ ապացուցութիւն է տալիս մեզ, թէ ինչքան անօսրամիտ մարդ է եղած ինքը, ըստ որում նոյն տեղումը պատմումէ մեզ, թէ Թէոդորիկոսի պալատի մէջ մի Գոթացի կին ծնել է չորս վիշապ, որ վերանալով դէպ ի ամպերը, ապա վիժել էին իւրեանց անձը ծովի մէջ։ Չորրորդ, մի՞թէ կարելի բան է, որ Թէոդորիկոսը, Բիւզանդեան պալատումը դաստիարակված, իւր ժրաջանութեամբ և ուսումնասիրութեամբ հռչակված արդէն իւր պատանեկութեան հասակումը, չէր ուսած գրել, այլ թէ միայն տեղեկացել էր այդ հմտութեանը իւր թագաւորութեան տասն և միերորդ տարու մէջ։ Նա, արուեստի և գիտութեան պաշտպանողը, նա, որ իւր կրթութիւնը և վեհանձն մտածողութիւնը ակնյայտնի ցոյց տուեց, համբերատար տանելով դէպ ի այլակրօնքը, պիտոյ է ագէ՞տ լինէր դպրութեան։ Ո՛չ. անանուն մատենագիրը և նորա օրինակողքը, ինչպէս երևումէ, սխալվելով ընծայել են Իտալիայի թագաւորին մի տգիտութիւն, որ նոյն ժամանակին Կոստանդնուպօլսի մէջ թագաւորող կայսր Յուստինոս աւագի արդարացի բաժինն է։ Սորա մասին ունինք յիրաւի մի աներկմիտ վկայութիւն ժամանակակից և շատ յայտնի Պրոկոպիոս պատմագրի բերանից, որ բառ առ բառ նոյն բանն է ասում, ինչ որ վերևումը յառաջ բերվեցաւ Թէոդորիկոսի մասին, այն փոփոխութեամբ միայն, որ այն չորս տառքը, որ արժած էին տասնամեայ քըրտինք, էին Iust, և այսպիսի յաւելուածով, թէ արևելքի թագաւորը պիտոյ է թողուր, որ կայսրի նախարարը նորա ձեռքը բռնած առաջնորդէր գրելու ժամանակին, որ մի՛ գուցէ դուրս շեղվէր նորա ձեռքը տախտակի մէջ ձևացուցած տառածակերից։ Յուստինոսին մեծապէս յարմարվումէն մինչեւ 10 տարիքը. պատճառ, նա թագաւորել է ուղղակի 10 տարի։ Եւ նորա մասին աւելի հեշտ է ընդունել այդպիսի տգիտութիւն, որովհետև իւր բոլոր կեանքը անցուցել էր դաշտի մէջ, կէս մի արօրի (գութանի), և կէս մի պատերազմական դրօշակի քամակում, և

68 տարօք լինելով, հասաւ Բիւզանդեան աթոռին, և այնուհետև յիրաւի անագան էր պարապել մի այդպիսի արուեստի։ Այլև այդ, պատերազմի մէջ ծերացած զինականը որ քաջութեամբ և խոհեմութեամբ ձեռք էր բերել կայսերական թագը, կարող էր չամաչել տգէտ լինելով գրութեան արուեստին, որովհետև նորա նախորդներից մինին, այսինքն Կարինոս կայսրին, որ լաւ հմուտ էր այս արուեստին, այնքան զզուելի էր գրութիւնը, որ նա մեծ վարձ էր տալիս այն քարտուղարին, որ կարող էր ազատել նորան իւր անունը գրելու աշխատութենից, ճշդապէս նմանելով կայսրի ձեռագրին։

Որպէս և էր պատմութիւնը, դորանից կարելի է արդէն ապացոյց առնուլ թէ գրչաթևքը 5-երորդ դարու մէջ ահա գործածական էին, և այս է առաւել հին հասակը գրչաթևերի, որ կարելի է պատմաբանաբար հաստատել։ Առաւել հին է կիրառութիւնը եղէգնագրչի, որ գրչաթևերի պէս ճեղքումին և սրացնումին. և ինչպէս առաւել պատուական թուղթը Եգիպտոսեան բերք էր, նոյնպէս առաւել պատուական գրելի եղեգը ստացվումէր Եգիպտոսից։ Գրչաթևերի գործադրութենից յետոյ ևս, երկար ժամանակ պիտառական մնաց եղէգնագրիչը, որպէս և այժմ է Ասիայի մէջ, Մահմեդական ազգերումը առ հասարակ։ Գիտութեան արժանի բան է, թէ 15 և 16-երորդ դարումը շատ տեղ Եւրոպայի մէջ այնքան սակաւագիւտ էր թէ եղէգը և թէ գրչաթևերը, որ երկու կամ երեք հատ եղէգն կամ թէ մի պրակ գրչաթև աշխարհից աշխարհ ուղարկվումէր որպէս մի թանգագին ընծայ։

Մեր շատ կարդացող ու գրող դարումը, գրչաթևերի լիութեան և առատութեան վերայ խօսել աւելորդ էր։ Եւրոպական հանճարը կամենալով ևս առաւել թեթևացնել գրութեան գործը, նոր ժամանակներումս հնարել է պողովատեայ գրիչներ, որոնց հնարողը է Ջէմս Պերրի Անգլիացին։ Այս պողովատեայ գրիչքը ժանգից պահպանելու համար, զանազան ճանապարհներ են ընտրել. զոր օրինակ պատելով պողովատեայ գրիչը սաթեղէն խէժով (Olayes Pens), այլև մածուցանելով նորա վերայ կարճ ծայրեր դեղնապղնձից, արծաթից և ոսկուց. այժմ պատրաստած են ամբողջ գրիչներ այնպիսի մետալներից, որ վնասվում չեն թանաքից. զոր օրինակ դեղնապղնձից, Արգենտանից, Պլատինայից, խառնած ոսկուց և արծաթից. բայց այս բոլոր մետալները չեն կարող համասարվիլ պողովատի հետ, ըստ որում զուրկ էին այն հարկաւոր ձգականութենից, որ ունի պողովատը. և սաթեղէն նիւթը որով պատումին պողովատեայ գրիչը, ամենևին կարճատև է։ Փորձած են և մի խաղարկութիւն, այսինքն ոսկի գրիչների վերայ ամրացնել ծայրեր յակինթից (եաղութից) և այլ պատուական քարերից. պատ-

բաստած են գրիչներ և անմետաղ նիւթերից, մանաւանդ թէ եղջիւրից, փիղի ոսկրից, կրիայի պատէնից և այլն. Թէպէտ և այս նիւթերը ունէին մի նմանապիսի կակղութիւն որպէս գրչաթևերը, բայց կարող չեն այնքան նուրբ սրածայրվիլ, ինչպէս սոքա։ Այս բոլոր փորձերից յետոյ վերստին դարձած են դէպ ի պողովատեայ գրիչքը, որոնց գործածութիւնը ամենայն տեղ տարածված է, որ և յարմար են միատեսակ, այժ և արագ գրութեան համար մի փոքր հաստ և ամուր թղթի վերայ. բայց անհաւասար գրութեան համար և անօսր թղթի վերայ, առաւել ձեռնտու են բնական գրիչները։ Առաւել պատուական պողովատեայ գրիչքը գալիս են Ջեմս Պերրի Անգլիացու փաբրիկայից Լօնդոնումը, օրէ օր աւելի կատարելութիւն ստանալով հնարողի հանճարից։ Այժմուս պողովատեայ գրիչներ պատրաստվումեն և Գերմանիայի մէջ, բարւոք և աժագին բազմութեամբ։

Պ. Նահապետեանց։

ՆԱՄԱԿ ԱՌ ՀՐԱՏԱՐԱԿՈՂԸ։

Յուլիսի 7, 1858. Բեդուտկալէ.

Պարոն Հրատարակող Հիւսիսափայլ Օրագրի,

Արքայ Ստեփանոս Վարդապետ Նազարեան.

Իմ ուղարկած մի քանի բանիրի տեղ գտանելը Հիւսիսափայլի մէջ, այլև Պարոն Կոմս Իմմանուէլի ինձ տուած քաջալերութիւնը տեղիք տուեց ինձ գրել Ձեր յարգութեանը այս նամակս։ Յոյս ունիմ, որ դուք, նայելով նամակիս բովանդակութեանը, հանդէս կը տաք սորան և իմ ձայնը լսելի կը կացուցանէք ամենայն մեր ընթերցող հայազգի եղբայրակիցներին։

Անցեալ օրերը, Պարոն Յովհաննէս Մանուկեան Մահտեսիեան մեր հայազգի եղբայրը, Իւնոնա շոգեշարժ նաւով Բեդուտկալէ իջանելով, եկել էր ինձ այցելութիւն. ինչ երկար գլխացաւութիւն անեմ, նորա մօտ տեսայ Արշալոյս Արարատեան լրագրի մի քանի թերթերը, որոնց անուաթիւը և համարը մոռացել եմ, միայն բանը այս էր, որ մի

թերթի մէջ կարդացի, թէ Սսու աթոռի միաբան Նիկողայոս անունով Հայոց եպիսկոպոսը, բարկանալով, որ իւրեան չէին ընտրել կաթողիկոս Սսու աթոռի համար, վախճանած կաթողիկոսի տեղը, թողել է Սիսը և գնացել է Հալէպ քաղաքը, ինքը իւրեան առաջնորդ անուանելով: Այդ մարդը մի օր եկեղեցի գնալով, մինչ պատարագիչ քահանայն Ն—— ———ևէլի մէջ յիշելով միմիայն կաթողիկոսի անունը վերջացուցել է աղօթքը, Նիկողայոս եպիսկոպոսը գնացել է և բռնել է քահանայի շուրջառի քղանցից (փեշից) գոռալով թէ, «կամ իմ անունը ևս որպէս առաջնորդի յիշի՛ր պատարագումդ, կամ թէ ոչ, դադարի՛ր պատարագելուց և թող կիսակատար մնայ խորհուրդը»: Այս խայտառակ և անվայել գործողութիւնը մեծ շփոթ և դայթակղութիւն յառաջացնելով ժողովրդի մէջ, պատճառ է տուել Սսու կաթողիկոսին հրովարտակ հանել տալ Պայծառափայլ Դռանից, այդ ապստամբ և ինքնակոչ առաջնորդը աքսորելու համար: Յիշեալ եպիսկոպոսը, տեսանելով անխուսափելի վտանգը, գնացել է իսկոյն և դարձել է պապական, սկսանելով այնուհետև պապական եկեղեցու մէջ պախարակել Հայոց ազգը և եկեղեցին:

Նոյն Արշալոյս օրագրի մի այլ թերթի մէջ տեսայ, որ հրատարակումեն այդ կրօնադրուժ եպիսկոպոսի վերստին դարձը դէպ ի Հայոց եկեղեցին և հպատակականնամակ գրելըԿոստանդնուպօլսի ամենապատիւ Պատրիարգին: Լրագիրը ամենայն ուրախութեամբ հոգու խօսումէ այս վերադարձի վերայ, որպէս թէ մի մեծ գանձ էր գտել Հայոց եկեղեցին:

Ես շատ տխրեցայ կարդալով այդ լուրերը, տխրեցայ աւումեմ նորա համար, որ եկեղեցու մէջ անկարգութիւն պատճառող մի մարդ վերադարձել է դարձեալ մեր եկեղեցին:

Այսօր լսեցի իմ բարեկամներից, որ դոյն այդ լուրերը հրատարակվել են Հայաստանի մեղուի 26 և 27 համարների մէջ. դորանից յետոյ կորվեցաւ արդէն համբերութիւնս և ստիպվեցայ գրիչ վեր առնուլ ձեռքս, այդ լրագրերի հրատարակողների ընդդէմ:

Ասացէք Աստուծոյ սիրուն, ի՞նչ մի ուրախութիւն է Հայոց եկեղեցու համար, եթէ նորա մի փտած անդամը, որ դուրս էր ընկել ամբողջի կազմածից վերստին միանումէ նորա հետ. ի՞նչ մի ուրախանալու բան է, եթէ մի եպիսկոպոս, փառասիրութեամբ պակաս չմնալով իւր անուանակից Նիկօլից, փախչելով արդարացի պատուհասի երեսից, պապական դառնալով և ազգն ու եկեղեցին անարգելով, այդպիսի մարդ, աասումեմ, բերանին համ չտեսանելով պապականութենից, դարձեալ վազումէր դէպ ի Հայոց եկեղեցին, վաղուց առաջ դուշակած լինելով դու-

ցէ, թէ ազգի կարճատես անդամքը սիրով ողջունելու էին իւրեանց. Եթէ վերևում յիշված լրագիրքը այդպիսի ուրախութիւն են ցոյց տալիս ազգի և եկեղեցու կողմից այդ մարդու վերադարձի վերայ, ասել է թէ ազգը և եկեղեցին այդ ուրախութեան չափով տրտմած էին նորա պապական դառնալուց:

Իմ կարծիքով ուրախանալ պիտոյ էր, նորա պապական դառնալու վերայ, որովհետև մի այդպիսի, ազգին և եկեղեցուն անհարազատ, փառասէր և ինքնակոչ մարդ, ինքը զգալով իւր անարժանութիւնը մնալ Հայկական ուղղափառ եկեղեցու մէջ, գլուխն առել ու կորել էր դէպ ի պապական եկեղեցին. Թող գնար... սև քարը քամակից: Ազգը և եկեղեցին կարօտութիւն չունէին մի այդպիսի գայթակղութիւն պատճառող մարդու: Մեծ զարմանք, որ նորա վերադարձը այդպիսի ուրախութեան պատճառ է եղել յիշված լրագիրներին. Նորա գնալուց ի՞նչ վնաս կամ գալուց ի՞նչ օգուտ ունէր ազգը կամ եկեղեցին. պիտի ասեն, թէ չար օրինակ կը լինէր և այլն... Այդ կողմից, փառք Աստուծոյ, երկիւղ չկայ, մեր ազգը այսքան դարերով, բիւր նեղութենների մէջ, տարագրութեան և հալածանքի մէջ, համբերելով կրակի, սրի և սովի, այնու ամենայնիւ անխախտ է պահել իւր կրօնը և շատ անգամ հարիւրներ ու հազարներ, սուրերը իւրեանց ձեռքին, քաջութեամբ ընկել են պատերազմի դաշտում, իւրեանց պատուական արիւնով վերըստին և վերստին կնքելու համար մեր կրօնի դաշինքը. այժմ մի այդպիսի անհարազատ և կրօնազրուժ փառամոլ եպիսկոպոսի պապական դառնալը ազդեցութի՞ւն պիտի ունենար մեր ազգի վերայ, պիտի խախտէ՞ր նորա կրօնի հիմքը, որ շաղախված ու գրված էր Յիսուսի Քրիստոսի արիւնով, Թադէոս և Բարթուղիմէոս առաքեալների, Գրիգոր Լուսաւորչի, այլ շատ նահատակների, սուրբերի և կտրիճ Վարդանանց արիւնով: Եթէ թոյլ տանք այս բանը, ասել չէ՞ թէ հաւատ չունէինք դէպ ի մեր ազգի հաստատութիւնը իւր կրօնի վերայ. այդ չարաչար զրպարտութիւն կը լինէր: Ո՞վ է ասել այդ լրագրերի հրատարակողներին, թէ Հայոց ազգի կրօնը կը խախտվի, եթէ մի առաջնորդ անհարազատութիւն անելով պապական դառնար. ո՞վ է ասել որ Հայոց ազգը ախորժակ ունի պապական դառնալու: Եթէ պապականութիւնը մտանելով մեր ազգի մէջ երկու ճեղքել է ազգը, այդ բանը պատմական խորհուրդ ունի, միջին դարերում խաչակիր զօրքերի կենակցութիւնը Հայերի հետ Կիլիկիայի մէջ: Թող այժմ մի առաջնորդ անհարազատ լինի իւր ազգին և եկեղեցուն, թող մի փորձ փորձէ ազգը կրօնափոխ անելու, կը տեսանէ այն ժամանակ իւր հօր հարսանիքը, և կասկածողքը Հայերի հաստատութեան մասին իւրեանց կրօնի վերայ կը տեսանեն, թէ Ղևոնդեանց դաւա-

ղանները կը շարժվի՞ն արդեօք այդ Նոր Յաղկերտեան մոգերը Հայաստանի աւերակների միջից լերդապատառ հալածելու, թէ ոչ:

Այդ եպիսկոպոսի պապական դառնալը ժողովրդի համար այնքան չար օրինակ չէ, որքան նորա վերադարձը և այդպիսի ընդունելութիւն գտանելը. այժմ ամենայն մարդ, այդպիսի եպիսկոպոսի բնաւորութեան տէր, պիտի սպառնայ ազգին և եկեղեցուն իւր կրօնափոխութեամբ:

Ես զարմանում եմ, որ այդ եպիսկոպոսը Մօհամմէդական չէ դարձել, գուցէ դեռ ևս աւելի պատիւ ստանար Տաճկաց Դեսպանից քան թէ Հռովմի Պապից, կամ վերադառնալով մեր եկեղեցին մեր ազգից. ով կարող է երաշխաւոր լինել, որ եթէ այդ եպիսկոպոսը ստոյգ իմանար այս բանը, չէր դիմելու Քեապա Մուֆթիութիւն ստանալու համար: Այդպիսի մի մարդուց, որ իւր անունի յիշատակվիլը գերադասեց համարելով քան թէ պատարագի ահաւոր խորհուրդը, մինչ քահանայն ժողովրդով հանդերձ յիշումէր Հօր Աստուծոյ առաջև Նորա Որդու մահը, մինչ ժողովուրդը եկեղեցացել էր մի հոգևոր շնորհութիւն ստանալու համար, այդպիսի մի մարդուց ասում եմ, որ քարշում է քահանայի շուրջառից և ստիպում է կիսատ թողուլ պատարագը, վկայ է Աստուած, որ ամենայն չար և աղգամիլաս բան յուսալի է: Եւ վայ մեզ, եթէ այն տեղն էր հասել մեր բանը, որ կարօտութիւն ունէինք մինչև անգամ մի այդպիսի մարդու:

Կրօն ասացեալը, հաւատ ասացեալը խաղալիք չէ, և պիտոյ է ընդունել կամ ուրանալ սրտի և հոգու վկայութեամբ. և եթէ այդ եպիսկոպոսը սրտի վկայութեամբ ընդունել էր պապականութիւնը, ի՞նչ պատճառով ուրեմն յետ եկաւ դարձեալ մեր եկեղեցին. ասել է թէ այդ մարդու համար, չը նայելով որ նա եպիսկոպոս էր և կամէր դեռ ևս առաջնորդել մի հաւատացեալ հասարակութեան, կրօն ասացեալ բանը ոչինչ յարգ ու արժանաւորութիւն չունի. ուրեմն դա մի անբարոյական մարդ է և առանց սրտի և հոգու վկայութեան, մի միայն հանգամանքներին յարմարվելով, փոփոխում է իւր կրօնը: Կրօնը Օրացոյց չէ, որ տարին միանգամ փոխես. «յոր կոչումն կոչեցար, ի նմին հաստատուն կացջիր», — ասում է առաքեալը:

Յոյս ունիմ, և խաբված չեմ, որ մեր ազգի այն անդամքը, որ ստուգապէս ճանաչում են ազգի պատիւը, համաձայնելու են իմ հետ. գուցէ նոյն ինքն այդ Նիկողայոս եպիսկոպոսը համաձայնի և պիտոյ է համաձայնի, եթէ նորա սրտի մի անկիւնում մնացել էր դեռ ևս մի փոքր կայծ խղճմտանքի:

Կը ցանկանայի, որ այդ եպիսկոպոսը կարդար այս իմ նամակը և փոխելով իւր վարք ու բարքը, այլև ուսանելով իւր կոչման արժանաւորութիւնը, գոնէ այսուհետև պօղոսանալով սրբէր իւր վերայից այս աղտեղի արատաւորութիւնը և մի փոքր պարզացնէր իւր վերադարձի վերայ տղայական պարզահոգութեամբ ուրախացողների երեսը, որոնք նորա շնորհքով ընկել էին ահա մեղադրութեան տակ։

Խնդրեմ ընդունել իմ խորին յարգութիւնը դէպ ի Ձեզ,

որով մնամ

սիրական ազգիս, եկեղեցուս և պատուականութեանդ

անձնանուէր խոնարհ ծառայ

Սերովբէ Խաչատուրեան Շահբէգ։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ԿՈՄՍ ԷՄՄԱՆՈՒԷԼԻ ՕՐԱԳՐԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻՑ։

—

Յունիսի 24-ից սկսած, ամբողջ երեք օր, անձրևը գետի նման թափվումէր երկնքից, առանց մի րոպէ դադարելու։ Այս առատութիւնը անձրևի պատճառ էր տուել մեր գիւղի շինականներին հրատարակել նանրահաւատութենից յառաջացած մի առասպել, թէ կայծակից զարկված ու մեռած կին լուացել են անձրևի տակ այդ կնոջ անզգոյշ մերձաւորքը, և թէ այդ պատճառով վեց շաբաթ շարունակ անձրևը հեղեղելու էր մեր արտերը։ Մի քանի այլ շինականների բերանից լսվումէր մի այլ առասպել, որով մխիթարվումէին նոքա, որ չը կամէին անձրևի տևողութիւնը, թէ կղմինտր և աղիւս շինողները, որովհետև մեծ վնաս ունէին անձրևից, կենդանի կենդանի թաղել են մի հորթ, որ կտրվի անձրևը, որպէս զի հնար ստանան իւրեանց կղմինտրները և աղիւսները չորացնելու։ Չը գիտեմ, կը հասկանա՞ն արդեօք այն մարդիկը, որոնց ձեռքը ընկնելու էր մի օր իմ տխուր յիշատակարանը — իմ անմխիթար միայնութեան արդիւնքը, թէ ինչ յարաբերութիւն կայ անձրևի և մեռած կնոջ կամ թէ մի կենդանի թաղված հորթի մէջ․ ես ինքս

չեմ հասկանում, միայն գրում եմ այն, ինչ որ կայ շինականների մէջ և ինչ որ նոցա կենդանի լեզուովը լսում եմ նոցանից։ Աւանդութիւնը ասում է, «եթէ կայծակից մեռած կնոջ մարմինը լուացվի անձրևի տակ, ապա կը շարունակվի այդ անձրևը վեց շաբաթ, իսկ, այդպիսի անձրևային եղանակի մէջ, եթէ վեր առնվի մի հորթ և ողջ ողջ թաղվի գետնի մէջ, այնուհետև անձրևը կը կտրվի քառասուն օր։» Ինչպէս և էր այդ բանը, ստոյգը այս է, որ անձրևը անդադար թափվում էր և ես նստած իմ սենեկի մէջ միայնակ, նայում էի պատուհանիցս դէպ ի դուրս։ Աչքս ոչինչ այլ բան չէր տեսնում բայց ի պատառվող պղպջակներից, որ լողում էին լճացած անձրևաջրի երեսին։

Արևը մայրն էր մտել արդէն. որոտմունքը դղրդում էին ոչ թէ միայն երկնակամարի օդը, այլև իմ ողորմելի պատուհաններիս ապակիքը, որ ներկել էր ժամանակը ծիրանի գօտու գոյներով։ Ահագին փայլակները մութ ու թանձր ամպերի մէջ փայլատակելու ժամանակ, թվում էր թէ պատառվում է երկինքը. իսկ փայլակների լոյսը ներկում էին ամենայն բան երբեմն մորագոյն և երբեմն ծծմբագոյն։ Անձրևի կատաղութիւնը, որոտմունքի թնդիւնը, փայլակի լոյսը, մրրկի սուլելը և ծառերի հպատակօրէն խոնարհելը նորա բռնութեան տակ, բիւր տեսակ սօսափիւնք պատճառելով իւրեանց տերևներով ու ճիւղերով, այս բոլորը միացած, կազմում էին մի ահարկու և տխուր ներդաշնակութիւն, և յառաջացնում էին մարդու մէջ մի այնպիսի անախորժ զգացողութիւն, որ ասէիր թէ ահա ամենայն ինչ վերջացած էր նորա և աշխարհի մէջ, թէ մի սատակիչ շանթ կարող էր իսկոյն չքացնել նորան, և այնուհետև զուր էր ծագելու գեղեցիկ և խաղաղ առաւօտը նորա լուռ ու մունջ գերեզմանի վերայ։

Այս անախորժ վիճակի մէջ անցուցել էի ահա երեք օր և երեք կիսով չափ անքուն գիշերներ, և այդ միջոցին, երբ սկսում եմ իմ պատմութիւնը, գտնվում էի պատուհանիս մօտ, մի տաղտկալի միայնութեան մէջ, որ շարունակվում էր երրորդ օրից սկսած։ Յանկարծ ի՛նչ տեսնեմ. մի մարդ, փաթաթված իւր վերարկուի մէջ, այս սաստիկ անձրևի տակով վազում է դէպ ի իմ տան կողմը։ Ես ամենևին չկարծեցի թէ իմ մօտ է գալիս, որովհետև ոչ ոքի չէի սպասում. և իմ ծանօթքը այնքան խելք ունէին, որ այսպիսի եղանակում ոտք դուրս չէին դնելու շեմքից։ Մտածեցի թէ այդ մարդը գալիս է իմ դրացու տուն, կամ գուցէ ինքը դրացիս է, որ վերադառնում էր դէպ ի տուն, մի շատ հարկաւոր ընտանեկան գործի համար դուրս գնացած լինելով։ Օրի մռայլոտութիւնը, այդ մարդու թրջված հալաւները, որոնց վերայից ամենայն գոյն կորել էր, անհնարին էին կացուցանում ստուգապէս ճանաչել այդ մարդը։

Վերջապէս լսումեմ, դուռս զանգակը զարկեցին . . . . ծառաս գնաց դէպ ի դուռը և մի քանի վայրկեան ուշացաւ։ Լսումեմ մի խօսակցութեան անորոշ ձայն, բայց բան չեմ հասկանում. վերջապէս ներս մտաւ ծառաս և յայտնեց, թէ մի մարդ կամենումէր տեսանել ինձ, յաւելացնելով, թէ որովհետև առաջին անգամ տեսանումէր այդ մարդը, վասնորոյ և չէր կարողացել ճանաչել նորան։ Իսկոյն հասկացայ, որ հիւրը մի քաղաքավարի մարդ պիտոյ է լինի, որովհետև առանց իւր անունը և ով լինելը ծառայիս յայտնելու, հրամայել էր նորան յայտնել ինձ իւր ցանկութիւնը։ Ինչ և իցէ հրամայեցի ծառայիս ընդունել նորան. նախասենեակի և առանձնարանիս դուռները բացվեցան և փակվեցան և ներս մտաւ Պ. Բէգզադէն թրջված միանգամայն մինչև ոսկրը։ Ջուրը թափվումէր զգեստներից աղբիւրի նման, նա հանեց բոլորովին ջուր կտրած գլխարկը և ամենայն քաղաքավարութեամբ սկսեց թօթափել նորան առանձնարանիս մէջ. ես նայումեմ նորա վերայ, նա երկար ժամանակ չէր եկած իմ մօտ և այդ էր պատճառը, որ ծառաս չէր ճանաչում, որովհետև նոր էի բռնել սորան։ Ողջոյն ևս չտուած դրեց նա թաց գլխարկը աթոռի վերայ, հանեց վերարկուն, որից ամենայն առատութեամբ թափվումէր ջուրը, նոյնպէս թօթափեց և գուցէ կը ձգէր ևս աթոռի վերայ, եթէ ծառաս յառաջամատոյց չը լինէր և չը խնդրէր ինքեան տալ։

Երբ որ բաւական սրսկել էր առանձնարանս անձրևի ջրով, ձեռքերը տրորելով մօտեցաւ ինձ և մեր մէջ բացվեցաւ մի այսպիսի խօսակցութիւն առանց ողջունի.

— Մ՚եր տղայ, ոչինչ բանից տեղեկութիւն չունիս, դուրսը բոլորովին ջրհեղեղ է, իսկ դու հանգիստ նստել ես տանդ։

— «Ի՛հ, քեզ ով է ասել, որ այսպիսի անախորժ եղանակում ոտքդ դուրս դնես տանից, ես, ահա ինչպէս տեսանումես, երեք օր է, որ փակվել եմ տանս, որովհետև ոչինչ հնար չը կայ դուրս դնալու։»

— Ո՛վ գիտէ դարձեալ ինչ բանով ես պարապած. դու զուր տեղը երեք օր տանը չես նստում. երևի թէ հարստացնումես յիշատակարանդ։ Լաւ նայիր հա, չը լինի՛ թէ այս իմ օտարոտի այցելութիւնը ևս նիւթ դառնայ քո յիշատակարանիդ. ես գիտե՞ս ինչպէս մարդ եմ . . . . ես ուրիշների նման չեմ . . . . երեք հազար մանէթ ջուրը կը դնեմ, որ քո յիշատակարանդ արև չը տեսանէ . . . . ինձ Բէգզադէն ասում։ —

— «Թող և շահզադէ լինէիր դու, այնու ամենայնիւ այդ քո մականունը ոչինչ բան չունի իմ յիշատակարանի հետ. ոչինչ մարդու ծառայ չէ իմ յիշատակարանը. ես նորան չեմ տպում, օտարի չեմ ցոյց

տալիս, ունիմ երկու հարիւր ութսուն բարեկամ. միայն նոքա են տեսանում: Եւ այն մարդը կամ այն անցքը կ՚ընկնի յիշատակարանիս մէջ, որ արժանի էր յատուկ ուշադրութեան լաւ կամ վատ կողմից. և քո պէս մարդը պէտք է ուրախանայ և շնորհակալութիւն մատուցանէ ինձ, եթէ արժանացել էր մի երկու թերթ տեղ ստանալու յիշատակարանիս մէջ: Եթէ դու աւելորդ արծաթ ունիս, քեզ մի բարի խորհուրդ տամ. մեր գեղի մէջ չկայ աղջիկների ուսումնարան, դու այդ քո աւելորդ արծաթը գործ դիր, գոնէ առ ժամս, մի փոքրիկ ուսումնարան բաց, ուր թող ուսանին աղջիկ զաւակները մեր ազգի, կրթուած և դաստիարակուած մայր դառնալու համար ապագայումը. այդ շատ օգտակար գործ է, և ես այն ժամանակ կը փառաւորեմ քո անունը յիշատակարանիս մէջ, հաւատա ինձ, Պարսից Շահի հրովարտակի նման, ոսկի տառերով կը գրեմ անունդ:»

—Ինչե՞ր ես խօսում. ինչ բանի համար ջուրը ձգեմ այդքան արծաթ, ես դուստր չունիմ, իսկ օտարի զաւակների վերայ ես հոգաբարձո՞ւ եմ, ինչ եմ: Ի՞նչ պարտական եմ ես ազգին, ամենայն ծնող թող հոգս անէ, եթէ կամի, իւր զաւակի դաստիարակութեան վերայ. դու կամիս, որ ծիծաղեն իմ վերայ և ասեն դեռ ևս հասարակաց առածը, թէ «խելագարի հացը խելօքի փորը». շատ շնորհակալ եմ խրատիցդ:

—«Եղբայր, եթէ դու աւելորդ կարողութիւն ունիս, որ քո ապրուստի համար հարկաւոր չէր, և եթէ մի այդպիսի արծաթագլուխ յօժարում ես զուր տեղը չքացնել յիշատակարանիս արև ցոյց չը տալու համար, մի՞թէ պարծանք չէր քեզ և քո բոլոր գերդաստանին, այդ ուսումնարանը որ միշտ և հանապազ կրելու էր քո անունը, և ապագայումը շատ մայրեր աղօթք կ՚անէին քո հոգու համար, շատ երեխայք, առաջին անգամ խօսել սկսանելով, սիրով կը սովորէին արտաբերել քո անունը: Դու ասում ես թէ «դուստր չունիս, և թէ ոչինչ պարտական չէիր ազգին, թէ դու ուրիշի զաւակների հոգաբարձուն չէիր:» Մի՞թէ մի մարդ մի բարի գործ կատարում է նորա համար, որ պարտական էր և ինչպէս կարելի էր այնուհետև բարեգործութիւն անուանել այդ, եթէ նա կատարելով որ և իցէ գործողութիւն, վճարել էր իւր պարտքը. եթէ Աստուած օրհնել է քեզ հարստութեամբ, ինչու դու մասնակից չանես այդ բարութեան մի ուրիշը, որ զուրկ էր նորանից. մի՞ թէ Քրիստոսը պարտական էր մարդկութեանը իւր անմեղ արիւնը, որ քամեց Գողգոթայի վերայ, մարդկութեան կեղտը լուանալու համար: Դու ասում ես թէ չունէիր դուստր. մի՞ թէ մարդը պիտոյ է այն բանը անէ միայն, որից օգուտ էր յառաջանում իւր ընտանիքի և իւր համար յատկապէս. եթէ դու ստացած լինէիր Աստուծուց դուստր և դաստիարակած նո-

րան, նա պիտոյ է ապագայումը օրհնէր քո յիշատակը և աղօթէր քո գերեզմանի վերայ, իսկ եթէ դու խնամ տանէիր և դաստիարակէիր ուրիշ մարդերի դստերքը, որ աղքատ ծնողների զաւակ լինելով մնալու էին կոպիտ հասկացողութեան մէջ, մի՞ թէ այդ կրթված և դաստիարակված օրիորդքը հայհոյելու էին քո անունը, ո՞չ ապաքէն ամեն մինը նոցանից երախտագիտական արտասուքով պատուելու էին քո գերեզմանի հանգիստը։ Դու ասումես թէ «հոգաբարձու չէիր ուրիշի զաւակներին», մի՞ թէ դատապարտվելու չէր մի մարդ, որ թէև հոգաբարձու չէր մի այլ մարդու վերայ, այլ այնու ամենայնիւ տեսանելով որ մի այդպիսի մարդ մօտենումէ մի անդունդի բերանի և պիտոյ է կործանվի նորա մէջ և նա տեսանելով և հնար ունենալով փրկել նորան, գործ չէր դնում իւր հնարը, և այն խեղճը կորչումէր այնպէս զուր տեղը։ Մեք ամենքս մի ազգի որդիք ենք, մեր հայրը Հայկն է, և մեք բոլորս մի գերդաստանի անդամ, ամօթ չէ այդպիսի գերդաստանի որ և իցէ անդամին, պաշտելով իւր սեպհական անձնասիրութիւնը անհոգանալ ընտանիքի լաւութեան մասին, ամօթ չէ՞ ասումեմ մի և նոյն ընտանիքի մէջ որոշել իմ և քոն։ Դու լսիր ինձ, պ. Բէգզադէ, եթէ ունիս կարողութիւն, արի գործ դիր նորան, բարի օրինակ դարձիր մեր միւս կարող եղբայրակիցներին, ջերմացուր քո կրակով և նոցա սիրտը մեր անտէր ազգի վերայ և հաւատա, որ շնորհակալ կը լինիս յետոյ ինձանից մինչ կը վայելես պտուղը այն ծառի, որ իմ խորհրդով տնկել էիր։»

—Իմ քարոզը մեծ պասից երկայն էր, ես արծաթ եմ վաստակել քրտինք թափելով, և կը ծախեմ նորան իմ բաւականութեան համար միայն և եթէ սիրտս տայ, երեք հազար մանէթ երեք կոպէկի նման կը հեքացնեմ քո յիշատակարանդ հեքացնելու համար. ինձ Բէգզադէ են ասում. . . . .

—«Եթէ այդպէս է, եթէ բարի խորհրդի ընդդէմ ականջդ խցումես իժ օձի նման, եթէ այդ քո հարստութիւնը պահումես ձեռքումդ, որ չարութիւնք յառաջացնես նորանով, ուրեմն դնա, այդ երեք հազար մանէթը մածունի տուր երեսդ քսիր, գո՛նէ այդ օգտակար ևս կը լինի, որովհետև ի բնէ շատ սպիտակ չես, բայց երբ այս ամառնային ջերմութիւնքը սկսանումեն, ասես թէ, Եթովպացի ես դառնում։ Ո՞վ է թքում քո հարստութեան վերայ, և ապացուցանելու համար թէ դու ոչինչ վնաս չէիր կարող տալ ինձ քո արծաթովը, անպատճառ կ՚ընկնես յիշատակարանիս մէջ։»

—Մեծ մեծ մի՛ խօսիր . . . . ինձ Բէգզադէ են ասում. . . .

—«Ասացի քեզ միանգամ, թէ կամիս Շահզադէ ասեն, ինձ ինչ փոյթ։ Իմ Յիշատակարանիս ընթերցող երկու հարիւր ութսուն բա-

րեկամքս կարող են զարմանալ, թէ այս ի՛նչ տեսակ խօսակցութիւն է։ Պատճառն այն է, որ վաղուց ճանաչումենք միմեանց, և Պ. Բէգզադէն այնքան վատ մարդ չէ, թէև մի փոքր յիմար է. Նա այսպէս խօսումէ այն ժամանակ միայն, եթէ մի փոքր աւելի փախել էր անիծած արաղը։»

— Կատակը միւս կողմ դնենք. — ասաց Պ. Բէգզադէն, (որպէս թէ իմ մինչև այժմ խօսածը կատակ էր.) — ես գործի եմ եկել, և շատ հարկաւոր գործի։ Տեսանո՞ւմես, այս սաստիկ անձրևըևս արգելառիթ չէ եղել իմ գալուն . . . .

—«Հա՛, ես լսումեմ քեզ։»

— Լսելով բան չէ դառնում, դու մի Էֆիմերդէն առնուս ձեռքդ, մի սարսափելի երազ եմ տեսել . . . .

—«Ես Էֆիմերդէ չունիմ, ո՞ւր է քո շատ հարկաւոր գործը. խելքիդ աղ առնեմ. ո՛վ մարդ, տարիքդ քառասունից անցել են, քո խելքդ ե՞րբ է գալու. դիցուք թէ փորդ պատառենք միջումը այր չկայ, բայց և խելապատակիդ մէջ հաւի խելք չկայ. ի՛նչ յիմար բաներ ես ասում, Էֆիմերդէս ո՞րն է . . . . »

— Նոր նոր հաւեր են դուրս եկել, երկաթի ձուեր են ածում. մինչև այժմ խելօքները, գիտնականները, կարդացողները, քահանայ ասես, վարդապետ ասես, եպիսկոպոս ասես հաւատացել են և գործ են ածել Էֆիմերդէն, սա չէ հաւատում և չէ ընդունում. Տէր Աստուած. յետոյ ասումենք, թէ Աստուած բարկանումէ մեր վերայ. ինչպէս չը բարկանայ երբ աշխարհը տակ ու վերև են բերում այսպիսի թերահաւատ մարդիկ։ Դուք բոլորովին դարձել էք Լօթեռ ասեմ, Ֆարմասօն ասեմ, Զիք յարութիւն դաւանող ասեմ, Աստուած ազատէ։ —

—«Մեզ օրինակ չեն քո յիշած մարդիկը, որ Էֆիմերդէն բան ու գործ էին շինել իւրեանց համար։ Աստուած մեզ խելք ու բանականութիւն է տուել, մեք քո հետ ոչ երեխայ ենք և ոչ խելացնոր պառաւ, որ ամօթ չը լինէր հաւատալ այդպիսի բաների։ Եւ եթէ Աստուած բարկանումէ, դորա պատճառը մեք չենք, Էֆիմերդէ չընդունողներս, այլ նոքա, որ ընդունումեն, ինքեանք իւրեանց տգիտութեամբ մոլորվումեն, յետոյ պատճառ են դառնում և ուրիշների մոլորութեանը։ Էֆիմերդէ ասած բանը Սուրբ գի՞րք է, ի՞նչ է, որ եթէ մի մարդ չհաւատար դորան, Աստուած պիտոյ է բարկանար մի այդպիսի մարդու վերայ. ձեր փոյթը չէ ամենևին, եթէ մի մարդ չէր պահում Աստուծոյ պատուէրները, որ Աւետարանի մէջ քարոզվումեն Քրիստոսի բերանով, և չկամիք մտածել, թէ այդ բանի համար ինչպէս կարող էր Աստուած բարկանալ, որովհետև դուք ձեր յիմար աւանդութեններին

համար անտես էիք առնում Աստուծոյ բանը։ Ձեզանից շատերի տանը գտանվումէ Էֆիմերդէ, բայց Սուրբ գիրք շատ սակաւ. աչքերդ ձգեցէք, չասեմ այլ քրիստոնեաների, այլ անքրիստոնեայ ազգերի վերայ, մի մարդ կը գտանե՞ս Հրէաներից, որ չունենայ իւր տանը Հին կտակարանը, կամ մի Մօհամմեդական որ չունենայ Կուրանը (*). ինչո՞ւ համար. նորա համար, որ նոցա կրօնի աղբիւրքը գտանվումեն այդ գրքերի մէջ, իսկ մեր Պ. Բէգզադէները Էֆիմերդէ են որոնում։ Դու ասումես, թէ մեք թերահաւատ էինք. ողորմելի մարդ, ի՞նչ է մեր թերահաւատութիւնը, արդեօք այ՞ն, որ մինչդ ընդունելով Սուրբ գիրքը չէինք ընդունում Էֆիմերդէն, կամ ուրիշ այդպիսի յիմարաբանութիւնք, և այդ էր պատճառը, որ ձեր պէս խելօքների բերանով անուանվումէինք Լօթեռ ու Ֆարմասօն, գիտե՞ս դու, թէ ի՞նչ ասել է Լօթեռ կամ Ֆարմասօն . . . . »

— Կարծումես թէ երեխայի հե՞տ ես խօսում, որ հարցանումես, թէ ի՞նչ ասել է Լօթեռ կամ Ֆարմասօն . . . .

—«Ուրեմն գիտե՛ս։»

— Անտարակոյս։

—«Ապա ասա, ի՞նչ ասել է։»

— Անհաւատ, հերետիկոս, հերձուածող, անաստուած, դժոխքի բաժին, Զիք յարութիւն դաւանող, Մուտ և տես . . . .

—«Հերիք է, հերիք է. ցոյց տուեցիր խելքիդ տակը, համկացայ և ժամանակ չունիմ քո հետ գլուխ դնելու, գլուխս ցաւումէ։ Դու խնդրումես, որ ես Էֆիմերդէ բանամ քո համար և այդ պատճառով ես եկած ես իմ մօտ, այնպէս չէ՞։»

— Ամենևին այդպէս։

—«Ես Էֆիմերդէ չունիմ, ուրեմն և չեմ կարող կատարել քո փափագը. երկու խօսք պակաս խօսելու համար, վատ չէր լինելու եթէ թողուիր ինձ միայն։»

—Ի՞նչ է ասում այս մարդը, է՞յ բարկացա՞ր, ի՞նչ է, մեր տղայ. և եթէ բարկացար, ո՛վ է վախենում քեզանից, ես դեռ երազս պիտի պատմեմ քեզ . . . . ինձ Բէգզադէ են ասում . . . լաւ նայիր հա՛ . . . .

—«Գլխիդ դիպչի քո Բէգզադէութիւնը. ի սէր Աստուծոյ ձեռք վեր առ ինձանից. ականջներս ցաւումեն, չեմ կարող լսել . . . . »

(*) Ղազան քաղաքումը հանդիպել է ինձ Թաթարների տանը գտանել ոչ թէ մի Կուրան, այլ երկու և երեք զանազան տեսակ տպած. և իմ տեսած Թաթարներից շատերը աղքատ մարդիկ էին, նախրապանք, սայլապանք և այլն։

Ծան. Հրատարակողի կողմից։

—Եթէ միայն լսելով քո ականջն է ցաւում, ինչ անէ ապա այն մարդը, որի փորի մէջ մտել է....

—«Խելքդ գլխիդ է, թէ ոչ. ինչ մարդ, ինչ փոր:»

—Ի հարկէ չգիտես, բայց դու հարցուր մի ինձանից. Աստուած հեռի արասցէ. խեղճ մարդը կարո՞ղ է մի՛թէ մարսել, ընկել է վերին աստիճանի կատաղութեան մէջ: Յետոյ ասումեն թէ մարդ կատաղումէ, ակամայ կը կատաղես, եթէ այդպիսի կրակ ունենաս փորիդ մէջ:

—«Ես չեմ հասկանում քեզ. կարծեմ դու խելքդ թռցրել ես:»

Եւ յիրաւի մեծ երկիւղի մէջ էի, թէ մի՛ գուցէ Պ. Բէգլարեան խելագարուած լինի. մի այնպիսի ջերմութեամբ խօսումէր նա իմ հետ, որպէս թէ ես էի այն մարդու փորը կրակ ձգողը:

—Լսիր,—աղաղակեց Պ. Բէգլարեան, աջ ձեռքը դէպ ի յառաջ պարզելով օդի մէջ.—այսօր քնած էի ճաշից յետոյ, բայց երկիւղ կրելով որ մի՛ գուցէ անձրեւային եղանակի խոնաւութենից ոսկրացաւս նորոգվի, կրկնապատկեցի արաղով շինած դէքօքտիս չափը յառաջ քան թէ քնել էի, և ահա քունս տարաւ: Տեսանումեմ երազիս մէջ, որ աշխարհի ժամանակը յետ է գնացել քանի հազար տարիներով. Թվումէ ինձ թէ գտանվումեմ Յունաստանի մէջ.... մի սարի վերայ.... յետոյ ինքս ինձ գտայ յունական աստուածների Ոլիմպոսի վերայ: Մի փոքր ժամանակից յետոյ լսումեմ որոտմունք, թնդիւն, և ահա Արամազդը երևումէ իւր գահի վերայ լուսափայլ ամպերի քամակից: Ամպերը կամաց կամաց ցրվեցան և տեսանումեմ դարձեալ Արամազդը. բայց մարդու միսը վերան փուշ փուշ է լինում, Արամազդի երեսը տեսանելով: Գոռումէ, աղաղակումէ նա, բայց ինչպէս տեսանումեմ, կռիւը Աթենասի հետ է:

«Իմ շանթե՛րը».—գոռումէ Արամազդը—«ու՞ր են իմ շանթերը:»

Աթենասը շնորհալի կերպով, քաղցր ժպիտը շրթունքների վերայ պատասխանումէ—«Հայրիկ....»

«Իմ շանթե՛րը»,—որոտումէ Արամազդ:

—«Քո շանթերը, հասած են իւրեանց նպատակին.» — ասումէ Աթենաս:

«Ի՛նչպէս:»

—«Ի՛նչ բանի համար պահումես դու այդ շանթերը, ո՞չ ապաքէն չարագործ մարդիկ պատժելու համար:»

«Այո՛:»

—«Ես պատահեցայ մի չարագործի, որ վերատեսուչ էր Հնդկական Բրամիններին, որ անարգումէր հրապարակով քո դուստրը, որ մահու չափ հալածումէր ինձ: Ես գործ դրեցի այն բոլոր շնորհքը, որ քո

ուղեղից ծնանելով ստացել էի, բայց երբ տեսայ, որ կամակոր է դար-
ձեալ և կամի իմ հետ պատերազմ բանալ, եկայ Ոլիմպոս։ Դուք լսու-
մէիք այն միջոցին Աստղկի հաճոյախօսութիւնքը։ Ցանկարծ ականջիս
հասաւ սորա բարեխօսութիւնը այն սևահոգի, սևագլուխ և սևադէմ
չարագործի մասին, որ միշտ զոհ էր բերում Աստղկին և բուրվառ էր
ձգում նորա որդուն . . . . չը դիմացայ այս անարգութեանը և խլելով
այն բոլոր շանթերը, որ Կիկլոպները պատրաստել էին մի ամբողջ ամսի
համար, հասայ այն չարագործ Բրամինապետին, մինչ նա մի հարուստ
և ազնուական Հնդկացու մօտ հիւր էր գնացած։ Ներս մտայ այն տեղ
իմ սպասաւորի կերպարանքով, շանթերդ պահել էի վահանիս տակ,
որ անտեսանելի էր նորան, և դարձեալ լսելով նորա յիմար ընդդիմա-
խօսութիւնքը, արձակեցի, Հա՛յր, քո շանթերը, որ այժմ նորա փորի
մէջ պատճառումեն այնպիսի հրայրեայք, որպիսի չէր պատճառել
յունական բանակի հուրը Ագամեմնոնի կառավարութեամբ բացված
Տրոյիայի վերայ։»

«Ի՞նչ մարդ է այդ, ճակատագիր», — որոտաց աստուածների
հայրը. — «հանդէս եկ և համար տուր ինձ, ո՞վ է այդ մարդը, և ի՞նչ
ես գրել դորա ճակատի վերայ։»

Երևեցաւ ճակատագիրը և գլուխ տալով Արամազդին, սկսեց իւր
յայտարարութիւնը այսպէս.

—«Գիրսաս է այդ Բրամինապետի անունը, ճանաչումեմ մօրը,
բայց հօր անունը չկայ մեր մատեանների մէջ. այդ մասին պիտոյ է հար-
ցանել փրփրածին Աստղկից . . . . Մի մարդ տիրութիւն էր առնում
նորան երեխայ ժամանակին. կարծիք կար այդ մարդու և երեխայի վե-
րայ, որ դոքա ունենային մի հայր որդիական առնչութիւն, թէև այդ
մարդը ցոյց էր տալիս իւրեան որպէս լոկ բարերար . . . . Այդ բարե-
րար անուանվածը աշակերտ տուեց Գիրսասը մի Բրամինի մօտ. երկար
ժամանակ մնաց այն տեղ մի մեհենում, որ ոչ շատ հեռի մի կատաղի
գետից գտանվումէ մի ձորի մէջ։ Մի փոքր իւր անունը ազգի մէջ տա-
րածելու համար, և յիմար ու կարճատես մարդերի աչքը ներկելու հա-
մար, աշակերտներ հաւաքեց այս տեղից և այն տեղից. բայց որովհետև
ինքը ոչինչ չը գիտէր, վասնորոյ և աշակերտքը ևս կատարելապէս
նմանեցան իւրեանց վարդապետին։ Շատ հրաշագործութիւնք պատ-
մումէին նորա կողմնակիցքը, որպէս թէ խոր գիշերի մէջ, նորա մեհե-
նի մօտ կամ դպրոցի մէջ Աստղիկ էր ծագում. . . . թէև երկինքը պա-
տած էին թանձր ամպերով։

—«Ծնանելու ժամանակ այդ բոլորը գրել էի ես նորա ճակա-
տին. նա Բրամինապետ դարձաւ իմ ազդեցութեամբ։ Գրել էի նոյն-

պէս, որ նա ստանալու էր ձեր շանթերը Աթենասի ձեռքով, և այդ շանթերը, լափելով նորա փորոտիքը, պիտոյ է վախճան դնէին նորա անարժան Բրամինապետութեան կեանքին: Անչափ են դորա չարագործութիւնքը. մի խօսքով այդ մարդը մի շարժական դաշ է սատանայի և բոլոր դժոխքի զօրութեան. նորերումս ձեռքերը ներկեց մի ծերունու արիւնով. . . . .

—Արամազդը կտրելով ճակատագրի յայտարարութիւնը, գովեց Աթենասի գործողութիւնը, և հրամայեց Կիկլոպներին մի մեծ շանթ պատրաստել այդ թշուառականի օրը խաւարեցնելու և Պլուտոնի թագաւորութիւնը ուղարկելու համար:»

—Այս միջոցին ամենայն բան աներևութացաւ, թնդաց երկինքը, և ես, այս դղրդիւնից զարթելով, գտայ ինձ մահճիս մէջ հանգստացած. կայծակը զարկել էր այն մեծ գոմը, որ մեծ հայրս շինել էր, անտառի մօտ, լճի առաջև, մեծ արծաթ վատնելով: Քրտինքս թափվել էր գետի նման, մահիճ, վերմակ, սփռոց, ամենայն ինչ ջուր էր դարձած: Շատ մտածեցի այս երազի վերայ, բայց խելքս բանի չը հասաւ: Էփիմերդէ չունէի որ նայէի: Օրացոյց ունէի, բայց երազի մասին բարի ու չար օրերը չը կային նշանակած, երևի թէ դորա շինողը ևս մի թերահաւատ մարդ էր: Միայն մի խաչ է դրել յունիսի 27-ի առաջև, բայց այդ խաչը ցոյց է տալիս արիւն թողնելու համար օրի լաւութիւնը: Ճարս կտրվեցաւ, վեր կացայ, և չը նայելով եղանակի այսպիսի անյարմարութեանը, ահա գտանվումեմ քո մօտ: —Աստուծոյ սիրուն, նայի՛ր մի Էփիմերդէն, տես, ի՛նչ է ասում: —

—«Ես արդէն ասացի քեզ, թէ Էփիմերդէ չունիմ, այդ պատճառով ևս չեմ կարող լցուցանել քո ցանկութիւնը: Միայն այսքան կարող եմ ասել քեզ, որ երազ ասացեալը հաւատալու բան չէ. դու, ինչպէս ասումես, կրկնապատկել ես արաղով շինած դէքօքտի չափը, արիւնը թանձրացել է գլխիդ մէջ, իսկ ջլերդ հասուցանելով դրսի որոտմունքը և թնդիւնը ուղեղիդ, սա գտանվել է մի աւելորդ ջերմութեան մէջ և պատճառել է այդ ցնորքը: Հանգստացի՛ր, դա մի վնասակար բան չէ:»

Պ. Բէգզադէն սաստիկ յուսահատված իմ սառնութենից, վեր առաւ գլխարկը և վերարկուն, և անձրևի գետօրէն թափվելուն ուշադիր չը լինելով, գնաց:

Յիշատակարանիս ընթերցողներին թողումեմ իմաստասիրել, թէ անկրթութիւնը մինչև ո՛ր աստիճան մոլորեցնումէ մի մարդ: Գիտցուք թէ երազ էր տեսել, դորանից մի օգուտ կամ վնաս չկար իւրեան. շանթը ինքը չէր ուտողը, թող Բրամինապետը հոգս անէր, մանաւանդ

անձրեւի տակ ընկնելով կարող էր տկարանալ ու կարօտել այնուհետեւ Հիպոկրատի շանթերին, որ փարատէին նորա ցաւը։

Այսպիսի բաներ տեսանել կամ լսել շատ ցաւելի է ինձ. արդեօք կը տայ Աստուած մի օր, որ ես իմ սիրական ազգը տեսանէի նանրահաւատութեան, մնապաշտութեան և անկրթութեան բարբարոսական լծի տակից կատարելապէս ազատված։

* * *

Նոյն օրին երբ որ պատահել էր իմ և Գ. Բէգզադէի հետ այս տեղ յիշած խօսակցութիւնս, բարեկամիս մինը քաղաքական փոստայով ուղարկեց իմ մօտ մի ոտանաւորի պատճէն, որ առանց ստորագրութեան ստացել էր Թիֆլիզից և որի բնագիրը մայիսի 15-ից ուղարկել էին մի լրագիր հրատարակողի։ Կարդացի այդ ոտանաւորը և երբ կամէի արտագրել նորան յիշատակարանիս մէջ, հօրեղբայրս ներս մտաւ։ Իմ հօրեղբայրը իմ գլխին ցենզօրի նման մի բան է, շատ խիստ բարոյականութեան տէր մարդ է, ամենայն օր նայում է յիշատակարանիս, որ մի անպատշաճ բան չը գրեմ։ Թէպէտ այդ ոտանաւորը ունէր իւր մէջ անպատշաճութիւնք, բայց այնու ամենայնիւ նորա հիմքը ճշմարտութիւն էր։ Ափսոս, որ չը գիտեմ այդ ոտանաւորի հեղինակը, եթէ այդ պարոնը հնար տար ինձ, ես նորան կ'ուղարկէի մի նամակ, որ հօրեղբօրիցս ծածուկ շարադրել էի և շատ հաւատացած եմ, որ կ'ուրախանար այդ նամակի վերայ։

1. Հիւսիսափայլ օրագիրը ամիս ամիս դուրս գալով, պարունակելու է իւր մէջ Ճառեր ընդհանուր Երկրագիտութեան, ընդհանուր Պատմութեան և Աշխարհագրութեան, այլև մասնաւորապէս Հայրենական պատմութեան և աշխարհագիտութեան վերայ։

2. Բնագիտական Ճառեր, այսինքն բնութեան օրէնքների և դոցա գործադրութեան վերայ մարդուս օգտի համար, Ճառեր զանազան ֆիզիքական յայտնագործութիւնների, հասարակախօս Աստեղաբաշխութեան, Քիմիայի, Հանքաբանութեան և Ֆիզիօլօգիայի վերայ. այլև բանախօսութիւն տունկերի, գիտութեան արժանի բոյսերի, նոցա տնկարկութեան և օգտի վերայ, վերջապէս կենցաղօգուտ գիւտերի և յայտնագործութիւնների մասին։

3. Բարոյական, գեղեցիկ բանասիրական Ճառեր; առաւել ընտիր մտածութիւնք և զգացողութիւնք թէ ոտանաւոր և թէ արձակ ոճով. թարգմանութիւնք հին հայկական, և հին ու նոր եւրոպական մատենագրութենից. այլև Կրիտիկայք (ուսումնական քննութիւնք) նորատիպ հայերէն գրուածների վերայ։

Ցանկացողքը ստանալ այս օրագիրը կարող են հասուցանել իւրեանց խնդիրը կամ ուղղակի հրատարակողին Մոսկվայի մէջ այսպէս. въ Редакцію Армянскаго Журнала «*Сѣверное Сіяніе*», въ Москвѣ, на Чернограязкѣ, въ домѣ Статскаго Совѣтника С. Назарьянца. կամ թէ Մոսկվայի նամականատնը այսպիսի հասցէով. въ Газетную Экспедицію Московскаго Почтамта.

Ցարեկան 12 տետրակների գինը է 8 մանէթ Մոսկվայի մէջ, բայց ուրիշ քաղաքների համար 9½ մանէթ։

Печатать позволяется. С. Петербургъ, Іюля 14-го, 1858 года.

Цензоръ В. Бекетовъ.